3714

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

3К36
К-15

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ◊ 1940

2 8 JUN 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

3К36 Կր.
4-15
1 DEC 2009

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

16 MAY 2013
3714
БІБЛЮТЕКА
Академії Наук
УРСР
5020 кн
8090-53

М. И. КАЛИНИН

К ШЕСТИДЕСЯТИЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ТОВАРИЩА СТАЛИНА

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

«Կարող եք չկասկածել, ընկերներ, վոր յես պատրաստ եմ այսուհետեվ ել նվիրելու բանվոր դասակարգի գործին, պրոլետարական հեղափոխության յեվ համաշխարհային կոմունիզմի գործին իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակությունները յեվ, յեթե հարկ լինի, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»։

Ի. ՍՏԱԼԻՆ

Լրացավ 60 տարին ընկեր Ստալինի ծննդյան որից։ Խորհրդային Միության ժողովուրդները ջերմորեն վողջունում են իրենց մեծ առաջնորդին։ Կապիտալիստական յերկրների պայքարող պրոլետարիատն ու ամբողջ աշխարհի ճնշվածները մեծ հպարտությամբ են նայում ընկեր Ստալինի վրա, կապելով նրա հետ իրենց լավագույն հույսերն ու ակնկալությունները։

Այս դեպքի կապակցությամբ յես ինձ թույլ կտամ կանգ առնել ընկեր Ստալինի քաղաքական գործունեության մի քանի կարեւորագույն մոմենտների վրա։

I

Մարդու հասարակական-քաղաքական գործունեությունը կարող է շատ կամ քիչ ճշտորեն լուսաբանված լինել միայն հասարակական կյանքի գոյություն ունեցող գործոնների և այն պայմանների հաշվառումով, վորոնց մեջ անցել է նրա գործունեությունը։

Ընկեր Ստալինը վաղ հանդես յեկավ քաղաքական ասպարեզի վրա։ Արդեն Գորիի հոգևոր ուսումնարանում նրա մոտ բացասական վերաբերմունք կազմավորվեց ցարական ինքնակալության ամբողջ կարգի հանդեպ։

1894 թվին Գորիի հոգևոր ուսումնարանն ավարտելուց հետո ընկեր Ստալինը վորպես լավագույն աշակերտ մտավ Թիֆլիսի հոգևոր (ուղղափառ) սեմինարիան, վորտեղ

15-ամյա հասակում վոտք դրեց հեղափոխական շարժման մեջ։ Նա մասնակցում եր աշակերտական սոցիալ-դեմոկրատական խմբակներին—և վոչ թե պատահաբար, վոչ թե պասսիվորեն, այլ վորպես նախաձեռնող, կազմակերպիչ ու ղեկավար, կապվելով այն ժամանակ Անդրկովկաս վտարված ռուս մարքսիստների ընդհատակյա խմբերի հետ։ Այդ խմբերը մեծ ազդեցություն ունեցան նրա վրա և նրան յուրացնել տվին ճաշակ ընդհատակյա մարքսիստական գրականության նկատմամբ։

1897 թվականին ընկեր Ստալինը կապվեց Թիֆլիսի անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ վորպես սեմինարիայի անլեգալ խմբակների ներկայացուցիչ։ 1898 թվականին նա արդեն ֆորմալ կերպով մտավ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Թիֆլիսի կազմակերպության մեջ։ Այժմ նրա անլեգալ աշխատանքն ընդարձակվում ե. նա մարքսիզմի պրոպագանդա յե մղում յերկաթուղային և ֆաբրիկային ռայոնների բանվորական խմբակներում։

Սեմինարիայի վարչությունը, հասկանալով, վոր գործ ունի միանգամայն հաստատակամ մարդու հետ, վորին հույս չկա վերադարձնել ցարական կառավարության հանդեպ բռնելիք լոյալության շավիղը, ընկեր Ստալինին վտարեց սեմինարիայից։

Այդ նրա առաջին խոշոր ընդհարումն եր այն ժամանակվա հասարակական-քաղաքական իշխանության հետ։ Բայց սեմինարիայից վտարվելը նրա առջև սուր կերպով հարց չդրեց—ուր գնալ։ Ճանապարհի ընտրությունը գիտակցորեն վորոշված եր դեռ սեմինարիայում։ Այդ—հեղափոխական պայքարի, մարքսիզմի դրոշակի տակ մղվող պայքարի ուղին ե։ Դրա համար Վրաստանում հողը բավական նախապատրաստված եր։

Թեպետ ֆորմալ կերպով Վրաստանը համարվում եր վոչ թե ռուսական զենքով նվաճված, այլ կամավոր կերպով Ռուսաստանի հետ վերամիացած յերկիր, այնուամենայնիվ այն կառավարում եյին ցարական փոխարքաներն իրենց զուտ ռուսական չինովնիկական ապարատով։ Հասկանալի յե, նրանք վոչ միայն չեյին պաշտպանում Վրաստանի ժողովրդական շահերը, այլև չեյին հասկանում այդ շահերը։ Նույնիսկ վրացական բարձր ավագանուն, վորն ազնվորեն, հակառակ վրացական շահերին, ծառայում եր ցարական ինքնակալությանը, նրանք իրենց գործողություններով դեպի ոպոզիցիա եյին հրում։ Ուստի և այն ամենը, ինչ հեղափոխական եր ու ոպոզիցիոն, կենդանի արձագանք եր գտնում վրաց ժողովրդի մասսաներում։

XIX դարի վերջին և XX-ի սկզբին Ռուսաստանում փչեց հեղափոխական քամին։ Գոյություն ունեցող դրությունից ծագող դժգոհությունը սկսեց յերևան գալ բանվորների հեղափոխական գործողություններում. ուժեղացան գործադուլները ֆաբրիկաներում ու գործարաններում, սկսվեցին քաղաքական դեմոնստրացիաները, շատ տեղերում նշվում եր մայիսի 1-ի անլեգալ տոնումը։ Պրոլետարիատի հեղափոխական պայքարի ազդեցության տակ սկսվեցին ուսանողական հուզումները։ Ուժեղանում եր խմորումը գյուղացիների մեջ։ Նրանք ավելի ու ավելի հաճախ եյին բունտ անում կալվածատերերի դեմ և շատ անգամ հրդեհում աղաների դաստակերտները։

Բանվորների ակտիվ մասը միավորվում եր անլեգալ խմբակների մեջ սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի տակ։ Առկա յեր ընդհանուր, թեկուզ, դուցե, և վոչ լիովին գիտակցված, ձգտում միասնական հեղափոխական կազմակերպություն ստեղծելու և սուր ցանկություն անլեգալ կենտրոն ունենալու։ Այդ ժամանակ Պետերբուրգում բավական լայնորեն իր գործունեյությունը ծավալեց «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», վոր հիմնել եր Լենինը։

Նույն պրոցեսը տեղի յեր ունենում նաև Վրաստանում։ Բանվորներն, առանձնապես Թիֆլիսում, հեղափոխականորեն եյին տրամադրված։ Ստեղծվում եյին անլեգալ պրոպագանդիստական խմբակներ, անց եյին կացվում 100 և ավելի մարդուց կազմված ժողովներ լեռներում, տարածվում եյին թռուցիկներ, կազմակերպվում գործադուլներ։ 90-ական թվականների վերջում և 900-ականների սկզբին խոշոր գործադուլների ալիքն իր մեջ առավ Բոզարջյանցի ֆաբրիկան, Ադելխանովի կաշվի գործարանը, ձիաքարշ

տրամվայը, տպարանները, յերկաթուղային արհեստանոցները և այլն:

Գյուղում նույնպես անհանգստություն եր տիրում: Գյուղացիների ծանր դրությունը—սակավահողությունը, չքավորությունը, արտագնացությունը զբաղմունք գտնելու համար և այլն—նրանց բացասաբար եր տրամադրում գոյություն ունեցող իշխանությունների և կարգերի նկատմամբ, հրում եր հեղափոխական գործողություններ կատարելու: Անկասկած, բանվորների կապը գյուղի հետ ոգնում եր հեղափոխական գաղափարների տարածմանը գյուղացիների մեջ:

Այս ամենը մեծ հնարավորություններ եր ստեղծում հեղափոխական աշխատանքի համար վոչ միայն բանվորների մեջ, այլև գյուղացիների մեջ: Ուստի և Վրաստանում համեմատաբար վաղ սկսվեց մարքսիզմի գաղափարների տարածումը: «Կովկասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանները,—ասում ե Լենինը,—նպաստեցին այնտեղ մեր կուսակցության ամենից ավելի մարտական կազմակերպությունների ստեղծմանը»[1]: Անձամբ իմ մեջ այն տպավորությունն ե պահվել, վոր Վրաստանում բանվոր դասակարգի ու գյուղացիության հեղափոխական գործողությունները նույնիսկ արտաքուստ միշտ ավելի պայծառ ձևեր եյին ընդունում, քան Ռուսաստանի մյուս վայրերում:

1893 թվականին Վրաստանում յերևան յեկավ առաջին մարքսիստական սոցիալ-դեմոկրատական «Մեսամե դասի» կազմակերպությունը, վորն իր քաղաքական ուղղությամբ միատարր չեր: Այս կազմակերպությունն ուներ այն հիմնական արատը, վոր հատուկ եր այն ժամանակվա հեղափոխական շարժմանը Ռուսաստանի նաև ուրիշ շատ մասերում: Մեսամեդասիստներն ընդգծում եյին կապիտալիզմի առաջադիմական դերը միայն և չեյին տեսնում նրա բացասական կողմերը, աղճատում եյին մարքսիզմի ուսմունքը դասակարգային պայքարի մասին, հեղափոխական հեռանկարները սահմանափակում եյին մասնակի նվաճումներով, տեղական հաջողություններով, բուրժուազիայի նեղ նացիոնալիստա-

[1] «Ленинский сборник» XXVI, եջ 237:

կան շահերով: Նրանք իրենց առջև խնդիր չեյին դնում ստեղծել կուսակցություն, վորպես պրոլետարիատի մարտական կազմակերպություն: Նրանք չեյին սովորեցնում, չեյին նախապատրաստում բանվորներին հեղափոխական գործողություններ կատարելու, նրանց չեյին դաստիարակում պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով:

Բանվոր-հեղափոխականները, ակտիվիստները գիտակցում եյին կուսակցության անհրաժեշտությունը: Բայց նույնիսկ նրանց մոտ այդ գիտակցությունը սահմանափակ եր: Ամեն ինչ հիմնվում եր գաղափարների հեղինակության վրա: Գործողությունների հեղափոխականությունը, գործնական պայքարում ցուցաբերելիք համարձակությունը, խիզախությունն ու անձնվիրությունը վոնց վոր թե համերաշխում եյին կազմակերպական հեռանկարներում գոյություն ունեցող սահմանափակության հետ: Գիտակցելով կուսակցության անհրաժեշտությունը, նրանք խառնաշփոթ պատկերացում ունեյին կենտրոնի մասին: Կենտրոնի հասկացողությունը նրանք չեյին պատկերացնում, վորպես մի հասկացողություն լիիշխան կուսակցական կենտրոնի մասին, վորը պետք ե ղեկավարի ամբողջ կուսակցական աշխատանքը, բանվոր դասակարգի պայքարի բոլոր արտահայտումներն ու ձևերը: Յեթե այն ժամանակ մտածում ել եյին կենտրոնի մասին, ապա ավելի շատ վորպես փոխադարձ կապի ու ինֆորմացիայի, կոնսպիրատիվ տեխնիկայի (հանդիպավայրեր, անձնագրեր, ծածկագիր և այլն), անլեգալ գրականություն պատրաստելու և տարածելու, պրոպագանդիստներին բաշխելու և այլնի մի ոժանդակ որգանի մասին: Բայց կենտրոնի վրա այսպիսի հայացքներ ունեցող մարդիկ ավելի նման եյին «բանվորական պոլիտիկների», քան պրոլետարիատի հեղափոխական կուսակցության մարտիկների: Այստեղից արդեն հեռու չե նաև մինչև ոպորտունիզմ:

Յեվ ահա ընկեր Ստալինի յերևալը բանվորական շարժման մեջ, նրա մտնելը մեսամեդասիստների խմբի մեջ՝ միանգամից սկզբունքորեն նոր հոսանք ե մտցնում սոցիալ-դեմոկրատական աշխատանքի մեջ և նպատակասլացություն հեղափոխական գործողությունների մեջ:

1898 թվականին ընկեր Ստալինը «Մեսամե- դասի»-ի

ներսում կազմակերպում է փոքրամասնության հեղափոխական մարքսիստական մի խումբ: Այդ խումբը միակն եր Վրաստանում, վոր իրեն խնդիր դրեց բանվորների հեղափոխական շարժումն ուղղել ինքնակալության դեմ մղվող քաղաքական պայքարի համառուսական հունի մեջ:

Վճռականորեն հաղթահարելով ոպորտունիստական մեծամասնության դիմադրությունը, ընկեր Ստալինը Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը դարձնում է դեպի մասսայական քաղաքական ագիտացիայի ուղին, ցարական ինքնակալության դեմ մղելիք բացահայտ պայքարի ուղին: Նա ստեղծում է Թիֆլիսի կազմակերպության կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբ վորպես ղեկավար կենտրոն, վորը մեծ աշխատանք է կատարում Անդրկովկասում անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ: Նա հասկացավ պրոլետարիատի կենտրոնացված հեղափոխական կուսակցության նշանակությունը, դիտելով Վրաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժումը վորպես համառուսական շարժման մի մասը: Նա դառնում է հեղափոխական պրոլետարական առաջնորդ բառի լայն իմաստով:

Պատմաբանների համար հեշտ չի լինի կազմել ընկեր Ստալինի կենսագրությունը, չնայած նրա պարզությանը, իսկ ավելի ճիշտ, նրա պարզության հետևանքով:

Ընկեր Ստալինը հենց սկզբից հանդես է գալիս ղեկավարի դերում, թեպետ նա ինքը Թիֆլիսի յերկաթուղայինների ժողովում արտասանած ճառում իր աշխատանքի այդ ժամանակաշրջանն անվանում եր աշակերտական: Բանն այն է, վոր նա վոչ միայն սովորում եր մասսաներից,—վոր պրոլետարական առաջնորդների պարտադիր հատկանիշներից մեկն է,—այլև ղեկավարում եր մասսաներին:

Ընկեր Ստալինն իր աշխատանքն սկսեց ընդհատակից: Այդ պատահական չէ: Դրանումն է սկզբունքային տարբերությունը լեգալ ու կիսալեգալ մարքսիստներից:

Կարելի յե ասել, վոր իր հասարակական առաջին յելույթից (հասկանալի յե՝ նեղ, անլեգալ կամ կիսալեգալ շրջանում) ընկեր Ստալինը բավական հստակորեն վորոշեց հեղափոխական-մարքսիստական գիծը և այն հակադրեց մե-

սամեդասիստների ոպորտունիստական գծին: Նա Անդրկովկասում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շինարարության առաջին քարը դրեց, գործնական քայլ անելով գիտական սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու ուղիով:

1900—1901 տարիներն ամբողջ Ռուսաստանում հեղափոխական շարժման հետագա վերելքի տարիներ եյին: Հասարակության մեջ զգացվում եր պայքարի յելնելու յեռանդ: Գորկու «Մրրկահավը» կարծես թե ընդհանրացրեց ինքնակալության դեմ, նրա կարգերի դեմ պայքարելու տրամադրությունը, ցանկությունը:

1900 թ. դեկտեմբերին արտասահմանում լույս տեսավ լենինյան «Искра»-յի առաջին համարը:

«Искра»-յի լույս տեսնելով հեղափոխականների համար անկասկած ավելի պարզորոշ դարձան բանվոր դասակարգի նպատակները, հասկանալի յե, մեծ չափով նրանց համար, ովքեր այդ նպատակներն արդեն իրենց առջև դնում եյին: Դրա հետ միաժամանակ տեղական կուսակցական կազմակերպությունների, առանձնապես «եկոնոմիստների», շատ ղեկավարների ոպորտունիզմն ել ավելի նկատելի դարձավ:

Ընկեր Ստալինի ղեկավարած Թիֆլիսի կենտրոնական խումբն առանց տատանվելու կանգնում է լենինյան «Искра»-յի դրոշակի ներքո և աշխատանք է ծավալում նրա վոգով:

Ընկեր Ստալինի համար «Искра»-յի հոդվածներն, ինձ թվում է, վոչ այնքան հայտնություն եյին, վորքան հեղափոխական շարժման նկատմամբ նրա մոտ արդեն կազմավորված հայացքների հեղինակավոր հաստատում:

Ընկեր Ստալինը խորապես գնահատեց անլեգալ տպագիր որգանի նշանակությունը կուսակցության շինարարության, բանվոր դասակարգի ուժերը հավաքելու և հեղափոխական մարքսիզմի գաղափարները պրոպագանդա անելու գործում: 1901 թվին նրա նախաձեռնությամբ ստեղծված «Բրձոլա» լրագիրը (վորը կոնսպիրատիվ նկատառումներով տպագրվում եր Բաքվում) հսկայական դեր խաղաց վրացական ոպորտունիստների դեմ մղված պայքարում, պաշտպանելով լենինյան «Искра»-յի վոգով հեղափոխական մարքսիզմի

թեորիական հիմունքներն ու պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրները: Այս մասին կարելի յե դատել այն սկզբունքային հարցերով, վոր բարձրացվում եյին նրա եջերում, այն հարցերով, վոր հուզում եյին ամբողջ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման առաջավոր մարդկանց մտքերը: Այդ հարցերը վերաբերում եյին ամենից առաջ գալիք հեղափոխության ամբողջ բնույթին, նրանում բանվոր դասակարգի ունենալիք դերին ու նշանակությանը, նրա կուսակցության ստրատեգիային ու տակտիկային:

Զարգացնելով պրոլետարիատի՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ ունենալիք հեգեմոնիայի լենինյան գաղափարը, «Բրձոլան» գրում եր. «Բավական ե մի հայացք գցել Ռուսաստանի հասարակական կյանքին, նրա տարբեր դասակարգերի փոխհարաբերություններին, վորպեսզի համոզվենք, վոր Ռուսաստանում գլխավոր ուժ ներկայացնում ե հեղափոխական պրոլետարիատի միացյալ ուժը: Բուրժուազիան, վորը հենվում ե իր անհաստատ գրպանի վրա, հիանալի յե զգում իրեն ինքնակալության գայխոնի ներքո:

Պրոլետարիատը—ահա այն տոկուն ուժը, վորը պետք ե կործանի ինքնակալությունը»[1]:

«Բրձոլան» Անդրկովկասի բանվորներին ու աշխատա-

[1] «Բրձոլա» լրագիր, № 1, 1901 թ. սեպտեմբեր:

Պետք ե նշեմ, վոր ընկեր Ստալինի՝ Անդրկովկասում տարած աշխատանքի վերաբերյալ փաստական տվյալներն ու Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցերի սկզբունքային լուսաբանումն ամենից ավելի լիակատար կերպով տրված են Լ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գրքում:

Իմ բերած ցիտատները—«Բրձոլա», «Պրոլետարիատիս Բրձոլա», «Кавказский рабочий листок», «Бакинский пролетарий», «Դրո», «Ախալի ցխովրեբա» և «Тифлисский пролетарий» լրագրերից, ապա ՌՍԴԲԿ Կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեյի թռուցիկներից ու, վերջապես, ընկեր Ստալինի «Ցերկու գոտեմարտ», «Հարևանցիորեն կուսակցական տարաձայնությունների մասին», «Պատասխան «Սոցիալ-դեմոկրատին»» աշխատություններից,—տրված են ըստ Լ. Բերիայի մատնանշված գրքի:—Մ. Կ.:

վորներին դաստիարակում եր պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով և պաշտպանում եր ամբողջ Ռուսաստանի բանվորական շարժման սկզբունքների ընդհանրությունը: «Վրացական սոցիալ-դեմոկրատական շարժումը,—գրում եր լրագիրը,—առանձնացած, սոսկ միայն վրացական, բանվորական շարժում չե՝ սեփական ծրագրով: Այն ձեռք-ձեռքի տված ե գնում ամբողջ Ռուսաստանի շարժման հետ և, հետևաբար, յենթարկվում ե Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը»[1]:

«Բրձոլան» մեծ դեր խաղաց Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը գաղափարականորեն-կազմակերպորեն ամրապնդելու մեջ: 1901 թ. նոյեմբերին հրավիրվում ե սոցիալ-դեմոկրատական կազմակերպության Թիֆլիսի առաջին կոնֆերենցիան, վորտեղ ներկայացված եյին համարյա բոլոր սոցիալ-դեմոկրատական խմբակները: Կոնֆերենցիան ընտրեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտե իսկրայական-լենինյան ուղղության: Այդ՝ Վրաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հսկայական նվաճումն եր: Այդ նվաճման մեջ ղեկավար դերը պատկանում ե ընկեր Ստալինին:

Ընդհատակյա աշխատանքն իր առանձնահատկություններն ունի: Այն քաղաքական գործչին ստիպում ե թաքնվել: Այն հազվադեպ ե նրան հնարավորություն տալիս իր հայացքները լեգալ կերպով ձևակերպելու, առանձնապես մամուլում: Ուստի միանգամայն բնական ե, վոր ընկեր Ստալինի ընդհատակյա աշխատանքի առաջին տարիները դեռ շատ անբավարար չափով են լուսաբանված: Բայց նույնիսկ այն սակավաթիվ փաստերն էլ, վոր մենք գիտենք, շատ ու շատ բան են ասում:

Ահա մի այսպիսի փաստ: Մեսամեդասիստները կիրակնորյա դպրոցներ եյին ստեղծում ու այնտեղ ընդհանուր գիտելիքների տարերք ավանդում: Մի անգամ ընկեր Ստալինը մտավ այդպիսի դպրոցներից մեկը և յերկու-յերեք ժողովներում բանվորներին պատմեց պրոլետարիատի դասակարգային պայքարի մասին: Հետո նա հարցրեց մի բանվորի.

[1] «Բրձոլա» լրագիր, № 1, 1901 թ. սեպտեմբեր:

«Ի՞նչ են սովորեցնում ձեզ կիրակնօրյա դպրոցում»: Յեվ յերբ նա պատասխանեց, վոր այնտեղ բացատրում են, թե ինչպես է շարժվում արևը, նա ժպտալով ասաց. Լսի՛ր: Մի՛ վախենար, արևը չի շեղվի ճանապարհից: Իսկ այ, դու սովորիր, թե ինչպես պետք է շարժվի հեղափոխական գործը, և ոգնիր ինձ մի փոքրիկ անլեգալ տպարան սարքելու»[1]:

Ինչպես արևը ջրի կաթիլում, այնպես այս փաստում յերևում է պրոլետարական մասսաների ղեկավարի կերպարը:

Այժմ ամբողջությամբ վերցրեք ընկեր Ստալինի գործունեության սկզբնական վողջ ժամանակաշրջանը. վտարում Թիֆլիսի հոգևոր սեմինարիայից քաղաքական անբարեհուսության համար, անմիջական անցում անլեգալ աշխատանքի, գործնական ջանքեր բանվորների անլեգալ խմբակները հեղափոխական-դասակարգային պայքարի ոջախներ դարձնելու, գործադուլների ղեկավարում, թռուցիկների կազմում, Թիֆլիսի կազմակերպության կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խմբի ստեղծում, անլեգալ «Բրձոլա» լրագրի կազմակերպում և այլն: Նույնիսկ այս սակավաթիվ, անկասկած, պատմական փաստերը պարզորոշ խոսում են այն մասին, վոր ընկեր Ստալինն իր հեղափոխական գործունեյության հենց սկզբից ընթանում էր լենինյան ուղիով: Նրա՝ Թիֆլիսում կատարած հեղափոխական գործողությունները լիովին համընկնում էին լենինյան ղեկավարությամբ գործող Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» քաղաքական դիրքորոշումներին:

II

1901 թ. նոյեմբերի վերջին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն ընկեր Ստալինին գործուղում է Բաթում անլեգալ աշխատանքի:

Բաթումն այն ժամանակի համար ներկայացնում էր նշանակելի արդյունաբերական կենտրոն նավթի վերամշակման կողմից:

[1] Տես. ըստ «Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине» ժողովածուի, էջ 30, հրատ. «Молодая гвардия», 1937 թ.:

Բանվորներին շահագործում էին առանց խղճահարության, առանձնապես աջարացիներին:

Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժման ընդհանուր վերելքը ընդգրկեց նաև Բաթումը:

«1893 թվականից,—պատմում է Ռոման Գուրգենիձեն,— յես աշխատում էյի Բաթումում Ռոտշիլդի գործարանում:

...Մինչև ընկեր Ստալինի Բաթում գալը գործարանի բանվորների մեջ վոչ մի իսկական հեղափոխական աշխատանք չէր տարվում:

Միայն 1901 թվին գործարանի բանվորները զգացին ինչ-վոր մեկի ամուր կազմակերպող ձեռքը, վորը հմտորեն ուղղություն էր տալիս բանվորներին, միավորում նրանց յելույթները:

Այդ ընկեր Ստալինի ձեռքն էր, վորը Բաթում գալու հենց առաջին որվանից ահագին աշխատանք էր կատարում բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը կազմակերպելու ուղղությամբ:

Ընկեր Ստալինը կարճ ժամանակում կազմակերպեց մի ամբողջ շարք սոցիալ-դեմոկրատական խմբակներ, վորոնց մեջ գրավեց Մանթաշևի ու Սիդերիդիսի գործարանների առաջավոր բանվորներին: Այդ խմբակների մեջ էյին մըտնում նաև մեր գործարանի մի շարք բանվորներ: Ընդսմին ընկեր Ստալինն առանձնապես ընդգծում էր խմբակների մեջ տարբեր ազգությունների բանվորներին գրավելու անհրաժեշտությունը, աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրը»[1]:

1901 թ. դեկտեմբերի 31-ին խմբակների ներկայացուցիչների ժողովում ընկեր Ստալինը ձևակերպեց Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը:

«Նոր տարվա նախորյակին,—պատմում է Կուրիձեն,— ընկեր Ստալինը հավաքեց խմբակների բոլոր ավագներին և առաջարկեց նոր տարվա ընկերական դիմավորում կազմակերպել: Առաջարկն ուրախությամբ ընդունվեց:

Լույս նոր տարվա գիշերը մենք հավաքվեցինք Սիլիբիստրո Լոմջարիայի բնակարանը:

[1] «Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине», էջ 30—40:

Ստալինի կատակները ծիծաղի պոռթկումներ էին առաջացնում: Ամենքը հրաշալի էին զգում իրենց: Մի տեսակ աննկատելիորեն մեր զրույցն անցավ քաղաքական թեմաների վրա, և այստեղ տիրող լռության մեջ զարմանալի հուզված հնչում էր ստալինյան ձայնը:

Այսպես նստած անցկացրինք մինչև լուսաբաց: Երբ արշալույսի վարդագույն շողքը ներս ընկավ պատուհաններից, Ստալինը բարձրացրեց բաժակն ու ասաց.

— Ե՛հ, ահա և լուսաբացը: Շուտով կծագի արևը: Այդ արևը կփայլի մեզ համար»[1]:

Այդ ժողովում առանձնացվեց ղեկավար կուսակցական մի խումբ, որն ըստ էության իրենից ներկայացնում էր ՌՍԴԲԿ Բաթումի կոմիտե:

«1902 թվականի հունվարին,—ինչպես պատմում է Դարախվելիձեն,—ընկեր Ստալինը մի քանի օրով գնաց Թիֆլիս: Դուրս է գալիս, որ նա Թիֆլիս է գնացել տպագրական գաղտնի մասերի և երեք լեզուների՝ ռուսերեն, վրացերեն ու հայերեն՝ շրիֆտների համար: Ռոտշիլդի գործարանի բանվորների օգնությամբ գաղտնարանը հավաքվեց և «արտադրությունը» լիակատար կերպով բանի գցվեց: Ստալինը թռուցիկներ էր գրում, մի վոմն Գեորգի (ազգանունը չեմ հիշում) շարում էր, իսկ մենք բոլորս Ստալինի հետ միասին տպում էինք՝ հերթով պտտում էինք մամուլի անիվը»[2]:

1902 թ. հունվարին ընկեր Ստալինը կազմակերպեց Բաթումում առաջին անգամ տեղի ունեցող բանվորների խոշոր գործադուլը Մանթաշևի գործարանում, իսկ փետրվարին— յերկու խոշոր գործադուլներ Ռոտշիլդի գործարանում, վորոնք վերջացան բանվորների հաղթանակով:

Ցարական կառավարությունը տագնապի մեջ ընկավ գործադուլավոր բանվորների կազմակերպվածությունից և համառությունից: Ցեվ վոչ առանց հիմքի: Դեռ գործադուլից քիչ առաջ Բաթումի պահնորդարանը գրում էր, վոր

1 «Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине», էջ 64:

2 Նույն տեղում, էջ 52:

սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացումը մեծ առաջադիմություն արեց, յերբ «1901 թ. աշնանը ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն գործարանային բանվորների միջև պրոպագանդա մղելու համար Բաթում քաղաք գործուղեց իր անդամներից մեկին—Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ջուղաշվիլուն, Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի 6-րդ դասարանի նախկին սանին: Շնորհիվ Ջուղաշվիլու գործունեության...Բաթումի բոլոր գործարաններում սկսեցին առաջ գալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, վորոնք սկզբում վորպես գլուխ ունեյին Թիֆլիսի կոմիտեն»[1]:

Բաթում յեկավ Քութայիսի զինվորական նահանգապետը, վորպեսզի վոստիկանական միջոցներով գործադուլը դադարեցնի:

Ի պատասխան 32 բանվոր-գործադուլավորների ձերբակալության ընկեր Ստալինը մարտի 8-ին կազմակերպեց բանվորների մասսայական ցույց, վորին մասնակցեցին 400 մարդ: Ցուցարարները մոտեցան վոստիկանական վարչությանը, պահանջելով ազատել ձերբակալված բանվորներին: Վոստիկանությունը ցուցարարների թվից ձերբակալեց ավելի քան 300 մարդ:

Հետևյալ օրն ընկեր Ստալինը կազմակերպեց Բաթումի բանվորների ահագին քաղաքական դեմոնստրացիա, վորին մասնակցեցին մոտ 6 հազ. մարդ:

«Մենք այն ժամանակ,—պատմում է Ինժերաբյանը,— դեռ չգիտեյինք, վոր այդ դեմոնստրացիան կազմակերպել է ընկեր Ստալինը: Բայց այն բանից, թե ինչպես արագ հաղորդեցին մեզ դեմոնստրացիայի մասին, թե ինչպես էր այն պատրաստվում, մենք հասկացանք, վոր այն ղեկավարում է մի շատ ուժեղ, փորձված կազմակերպիչ, վորն ամենքից ավելի լավ է իմանում, թե ուր և ինչպես պետք է տանել գործը...

1902 թվականի մարտի 9-ի դեմոնստրացիան յես յերբեք չեմ մոռանա: Բանվորների ահագին մասսաները բռնել էին

1 Վրաստանի կենտր. արխիվ, Քութայիսի նահանգային ժանդարմական վարչության պետի՝ Բաթումի մարզի մասի գծով օգնականի զեկուցումը, գործ № 1011:

այն փողոցը, վորը տանում եր դեպի առաքման կազարմանե֊րը, վորտեղ գտնվում եյին ձերբակալված բանվորները։ Դեմոնստրացիայի մեջ բանվորների խմբի առջևից գնում եր ընկեր Ստալինը։

Դեմոնստրացիան ընդհուպ մոտեցավ զինվորներին, վորոնք հրացանները պատրաստ պահել եյին՝ ուղղված մեզ վրա։

Նրանց պետը, սպա Անտաձեն, պահանջեց, վոր դեմոնստրացիան ցրվի, այլ կերպ նա կհրամայի կրակել։

Առաջին վայրկյանին մի քանի բանվորներ, վորոնց մեջ եյի և յես, տատանվեցին։ Բայց դեմոնստրացիայի վրայով տարածվեց մի բարձր ձայն, վորը մեզ կոչ եր անում չցրվել, ե՛լ ավելի վճռականորեն պահանջել ազատել ձերբակալվածներին։

Այս կոչով դիմեց ընկեր Ստալինը դեմոնստրանտներին։

Նրա կրակոտ խոսքերը դեմոնստրացիան ցեմենտեցին, և վոչ վոք չհեռացավ։

Ընդհակառակը, բանվորներից շատերն սկսեցին քարեր նետել սպաների ու զինվորների վրա, վճռականորեն պահանջելով ազատել ձերբակալվածներին։

Այս դեմոնստրացիան, վոր կազմակերպել ու ղեկավարում եր Ստալինը, ավելորդ անգամ համոզեց մեզ, վոր ինքնակալության դեմ զենքը ձեռին մղվող վճռական պայքարը միայն կհասցնի աշխատավորներին հաղթանակի»[1]։

Բաթումի ծավալված դեպքերը, վորոնց գաղափարական վոգեշնչողն ու անմիջական ղեկավարն եր ընկեր Ստալինը, պետք է վառ կերպով տպավորվեյին բանվորների գիտակցության մեջ։ Չէ վոր այստեղ կոնկրետ գործողություններով ցուցադրվեց բոլշևիզմի հեղափոխական տակտիկան, յերբ դեռ բոլշևիզմը, վորպես վորոշ քաղաքական հոսանք, չկար։

Խոկապես, ընկեր Ստալինը կարճ ժամանակում Բաթումի բոլոր կարևոր գործարաններում անլեգալ խմբակներ է կազմակերպում, նրանց կապում է միասնական կազմակերպության մեջ սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի ներքո, ստեղծում է անլեգալ որգան, վորի ազդեցությունը տարածվում է բանվորների լայն մասսաների վրա։ Գաղափարապես ու կազմակերպորեն համախմբված ուժն ուղղում է կապիտալի դեմ, բանվորների կյանքը բարելավելու համար մղելիք պայքարի գործին։

Միանգամայն բնական է, վոր ըստ այն ժամանակվա պայմանների լավ կազմակերպված գործադուլը բանվորներին յերես առ յերես եր կանգնեցնում ինքնակալության հանդեպ։ Այն գործադուլը, վորտեղ տնտեսական պահանջներն եյին դերակշռում, վերաճեց ու դարձավ ամենաբարձր վուլ—Բաթումի բոլոր բանվորների քաղաքական դեմոնստրացիան, այսինքն՝ անմիջական պայքար ցարական ռեժիմի դեմ։

Ինչպիսի՛ հսկայական քաղաքական ուղի անցան Բաթումի բանվորներն այնքան կարճ ժամանակում ընկեր Ստալինի ղեկավարությամբ։ Իսկ չէ վոր այդ ղեկավարությունն անլեգալ եր, վորը ֆորմալ կերպով վոչ վոքի չի պարտադրում։

Բաթումի դեպքերը հուժկու արձագանք գտան ամբողջ յերկրում, նրանք համառուսական քաղաքական նշանակություն ստացան։

1902 թ. ապրիլին ընկեր Ստալինին ձերբակալեցին և դրին Բաթումի բանտը։ Բայց այստեղից ևս նա շարունակում եր ուղղություն տալ իր ստեղծած՝ Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աշխատանքին։ 1903 թ. ապրիլին, յերբ վոստիկանությունն իմացավ այդ մասին, նրան տեղափոխեցին Քութայիսի բանտը։ Այստեղ ընկեր Ստալինը, հանդիպումներ ունենալով տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչների հետ, պաշտպանում ու պրոպագանդա յեր մղում լենինյան-իսկրայական գաղափարների շուրջը։ 1903 թ. նոյեմբերի կեսին ընկեր Ստալինին հետ տարան Բաթումի բանտը, իսկ այստեղից, 1903 թ. վերջում, նրան յերեք տարով աքսորեցին Արևելյան Սիբիր, Իրկուտսկի նահանգի Բալագանսկի գավառը, Նովայա Ուդա գյուղը։

1904 թ. հունվարին, այսինքն՝ Նովայա Ուդա գյուղից

[1] «Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине», էջ 58, 60։

մեկ ամիս անց, ընկեր Ստալինը փախավ աքսորից և վերադարձավ Թիֆլիս: Նա գլխավորեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները և կատաղի պայքար մղեց մենշևիզմի դեմ:

Ընկեր Ստալինը սիստեմատիկորեն կարճ ժամանակով գնում էր Բաթում, Չիաթուրի, Քութայիս և Բաքու, կազմակերպելով ու համախմբելով բոլշևիկյան շարքերը, բանավոր ու տպագիր դիսկուսիա մղելով մենշևիկների դեմ, այլև էսէռների, անարխիստների ու նացիոնալիստների դեմ:

1904 թ. վերջում ընկեր Ստալինն Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունը ձևակերպեց որպես բոլշևիկյան կազմակերպություն, որը պայքար մղեց կուսակցության III համագումարը հրավիրելու համար:

1904 թ. նոյեմբերին Թիֆլիսում տեղի ունեցավ կովկասյան կոմիտեների բոլշևիկյան կոնֆերենցիան, որը որոշումներ ընդունեց կուսակցության III համագումարը հրավիրելու համար պայքար ու լայն ագիտացիա կազմակերպելու մասին:

1904 թ. վերջում ՌՍԴԲԿ Կովկասյան կոմիտեն ընկեր Ստալինին գործուղեց Բաքու՝ կուսակցության III համագումարը հրավիրելու օգտին կամպանիան ուժեղացնելու համար: Այդ թվականի դեկտեմբերին ընկեր Ստալինի ղեկավարությամբ Բաքվում անցկացվեց նավթահանքերի բանվորների մեծ գործադուլը: Այն վերջացավ բանվորների հաղթանակով. առաջին անգամ Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ կոլեկտիվ պայմանագիր կնքվեց բանվորների ու նավթարդյունաբերողների միջև: «Բաքվի գործադուլը,—գրում էր հետագայում ընկեր Ստալինը,—ազդանշան ծառայեց ամբողջ Ռուսաստանի հունվար-փետրվարյան պանծալի ելույթների համար»[1]:

III

Սկսված ռուս-ճապոնական պատերազմի կապակցությամբ Անդրկովկասի բոլշևիկները հետևողականորեն ու

[1] Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, հայ. հրատ., էջ 76:

անշեղորեն անց էին կացնում «ցարական կառավարության պարտության» լենինյան գիծը, կոչ էին անում բանվորներին ու գյուղացիներին հեղափոխական պայքարն ուժեղացնելու, ցարիզմը տապալելու: Կովկասյան միութենական կոմիտեն, ՌՍԴԲԿ Թիֆլիսի ու Բաքվի կոմիտեները մի շարք թռուցիկներ հրատարակեցին, գրված գլխավորապես ընկեր Ստալինի կողմից: Այդ թռուցիկներն արթնացնում էին բանվորներին ու գյուղացիներին. «Այսպես արթնանա՛նք և մենք, ընկերներ, արթնանա՛նք ու գործենք: Ժամանակը չի՛ հանդուրժում»[1]: Նրանք կոչ էին անում զինվորներին անցնել բանվորների ու գյուղացիների կողմը, ուղղելով զենքը ցարի ու կալվածատերերի դեմ. «Չէ որ դուք էլ բանվորնե՛ր էք, միայն ժամանակավորապես զինվորական համազգեստ հագած: Իմացած եղեք, եղբայրներ, եթե մենք ազատվենք, դուք էլ ազատ կլինեք»[2]:

Մի շարք պարտություններ, որ կրեց ցարական բանակը Մանջուրիայում, ուժեղացրին հեղափոխական ու օպոզիցիոն շարժման աճումն ամբողջ Ռուսաստանում:

1905 թ. հունվարի 9-ի (հունվարի 22-ի) սպանդը Պետերբուրգում նոր խթան ծառայեց ամբողջ Ռուսաստանում ժողովրդի հեղափոխական պայքարն ուժեղացնելու համար: Բանվորների գործադուլները քաղաքներում ու բանվորական ավաններում, գյուղացիական ելույթները, ուսանողների գործադուլները, ժողովրդի ընդհարումները ոստիկանության ու զորքերի հետ—այս ամենը թուլացնում էր ինքնակալության ամրակապերը: Հեղափոխական ուժերը դուրս պրծան փողոց:

Սկսված հեղափոխությանն ընկեր Ստալինը մասնակցում է որպես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար: Նա հսկայական թեորիական աշխատանք է ծավալում բանվոր դասակարգի մարքսիստական կուսակցության լենինյան իդեոլոգիական, կազմակերպական ու տակտիկական սկզբունքները պաշտպանելու ուղղությամբ:

[1] ՌՍԴԲԿ Կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեյի «Ընկերնե՛ր» թռուցիկը:

2 ՌՍԴԲԿ Կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեյի «Եղբայր-զինվորներ» թռուցիկը:

Այդ ժամանակին է վերաբերում, օրինակ, ընկեր Ստալինի «Հարևանցիորեն կուսակցական տարաձայնությունների մասին» նշանավոր բրոշյուրը, վորի մեջ նա պաշտպանում ու զարգացնում էր լենինյան թեզիսը տարերային բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն մտցնելու մասին, հեղափոխական թեորիան մասսայական բանվորական շարժման հետ միացնելու անհրաժեշտության մասին, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար դերի մասին:

«Բանվորական շարժումը,—գրում էր ընկեր Ստալինը,—պետք է միացվի սոցիալիզմի հետ, պրակտիկ գործունեությունը պետք է սերտորեն կապվի թեորիայի հետ և դրանով տարերային բանվորական շարժմանը սոցիալ-դեմոկրատական իմաստ ու կերպարանք տալ... Մենք, սոցիալ-դեմոկրատներս, պետք է խանգարենք տարերային բանվորական շարժմանը տրեդ-յունիոնիստական ուղիով ընթանալու, պետք է նրան գցենք սոցիալ-դեմոկրատական հունի մեջ, սոցիալիստական գիտակցություն մտցնենք այդ շարժման մեջ և բանվոր դասակարգի առաջավոր ուժերին համախմբենք վորպես մի կենտրոնացված կուսակցություն: Մեր պարտքն է միշտ ու ամենուրեք ղեկավարել շարժումը, յեռանդագին պայքարել բոլոր նրանց դեմ—թշնամի լինեն նրանք, թե «բարեկամ»—ովքեր կանգնում են դեպի մեր սուրբ նպատակի իրականացումը տանող ուղու վրա»[1]:

Բանվորական շարժման մեջ գիտակցականության ու տարերայնության վերաբերյալ հարցն ընկեր Ստալինը լուսաբանում էր, բացի դրանից, «Պատասխան «Սոցիալ-դեմոկրատին»» հոդվածում, վորի մեջ գրում էր. «Ժամանակակից կյանքը կազմակերպված է կապիտալիստորեն: Այստեղ գոյություն ունի յերկու դասակարգ՝ բուրժուազիան ու պրոլետարիատը, և նրանց միջև վոչ թե կյանքի, այլ մահվան պայքար է մղվում: Առաջինին իր կենսական դրությունը ստիպում է ամրապնդել կապիտալիստական կարգերը: Իսկ յերկրորդին նույն դրությունն ստիպում է խարխլել ու

¹ Ստալին, Вскользь о партийных разногласиях, էջ 15—16, 1905 թ.:

վոչնչացնել կապիտալիստական կարգերը: Այս յերկու դասակարգերի համապատասխան էլ յերկու տեսակ գիտակցություն է մշակվում՝ բուրժուական և սոցիալիստական: Պրոլետարիատի դրությանը սոցիալիստական գիտակցությունն է համապատասխանում...

Բայց ի՞նչ նշանակություն ունի լոկ սոցիալիստական գիտակցությունը, յեթե այն տարածում չունի պրոլետարիատի մեջ: Այն կմնա սոսկ դատարկ մի ֆրա՛զ և ուրիշ վոչինչ: Միանգամայն այլ ուղղությամբ կընթանա գործը, յեթե այս գիտակցությունը տարածում գտնի պրոլետարիատի մեջ. պրոլետարիատը կգիտակցի իր դրությունը և արագացված քայլով կսլանա դեպի սոցիալիստական կյանք: Ահա այստեղ էլ հանդես է գալիս սոցիալ-դեմոկրատիան (և վոչ թե միայն ինտելիգենտ սոցիալ-դեմոկրատները), վորը բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն է մտցնում...»[1]:

Լենինը լիովին համերաշխվում էր ընկեր Ստալինի այս հոդվածի հետ, առանձնապես նշելով «նշանավոր «գիտակցությունը դրսից մտցնելու» հարցի հրաշալի դրվածքը»:

Ի հակադրություն կուսակցության ըմբռնման մեջ ցուցաբերվող մենշևիկյան հեղհեղուկին ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր պրոլետարիատի կուսակցությունը «պետք է լինի դասակարգային կուսակցություն, բոլորովին անկախ մյուս կուսակցություններից, և այդ նրա համար, վոր այն պրոլետարների դասակարգի կուսակցությունն է, վորոնց ազատագրումը հենց իրենց սեփական ձեռքերով միայն կարող է կատարվել:

Այդ կուսակցությունը պետք է լինի հեղափոխական կուսակցություն, և այդ նրա համար, վոր բանվորների ազատագրումը հնարավոր է հեղափոխական ուղիով միայն, սոցիալիստական հեղափոխության ոգնությամբ:

Այդ կուսակցությունը պետք է լինի ինտերնացիոնալ կուսակցություն, կուսակցության դռները պետք է բաց լի-

¹ «Պրոլետարիատիս բրձոլա» լրագիր, № 11, 1905 թ. օգոստոսի 15 (28):

նեն յուրաքանչյուր գիտակից պրոլետարի համար, և այդ նրա համար, որ բանվորների ազատագրումն—այդ ոչ թե ազգային, այլ սոցիալական հարց է, որը միատեսակ նշանակություն ունի ինչպես վրացի պրոլետարի համար, այնպես էլ ռուս պրոլետարի և ուրիշ ազգերի պրոլետարների համար:

Այստեղից պարզ է, որ ինչքան ավելի սերտորեն համախմբվեն տարբեր ազգերի պրոլետարները, ինչքան ավելի հիմնովին քանդվեն նրանց միջև կանգնեցված ազգային պատերը, այնքան ավելի ուժեղ կլինի պրոլետարիատի կուսակցությունը, այնքան ավելի կհեշտանա պրոլետարիատի կազմակերպվելը որպես մեկ անբաժանելի դասակարգ»[1]:

Ընկեր Ստալինը խիստ քննադատության յենթարկեց դաշնակների փորձը՝ կուսակցական, այսինքն՝ ըստ էության նացիոնալիստական, արհմիություններ կազմակերպելու փորձը, ակնառու կերպով ցույց տալով, թե ինչպիսի վնաս կարող է բերել «կուսակցական արհմիությունների» լոզունգը: Ամբողջ ուժով նա ընդգծում էր, որ «կուսակցական արհեստակցական միությունները վիհ են փորում գիտակից ու անգիտակից բանվորների միջև... Մինչդեռ բոլոր ֆաբրիկաները միավորվում են... մեկ միության մեջ, դաշնակցականները մեզ խորհուրդ են տալիս բաժանվել առանձին խմբերի»[2]: Պարզ է, որ այդ մի լուրջ սպառնալիք էր բանվորական շարժման համար: Այդ սպառնալիքն ընկեր Ստալինը ժամանակին կանխեց:

Անդրկովկասի բանվորները ժողովրդական հեղափոխության առաջավոր շարքերում էին ընթանում: 1905 թ. հունվարի 18-ին բռնկեց Թիֆլիսի բանվորների ընդհանուր գործադուլը: Ապա ընդհանուր գործադուլներ պայթեցին Բաքվում, Բաթումում, Չիաթուրիում, Քութաիսում և ուրիշ քաղաքներում, ուղեկցվելով մասսայական դեմոնստրացիաներով ու ոստիկանության և զորքերի հետ տեղի ունեցող ընդհարումներով:

[1] Ստալին, Անարխիզմ թե սոցիալիզմ, «Դրո» լրագիր, № 21, 1907 թ. ապրիլի 4:

[2] «Ախալի ցխովրեբա» լրագիր, № 12, 1906 թ. օգոստոսի 15:

Պրոլետարիատի հեղափոխական շարժման ալիքը լայնորեն ընդգրկեց նաև Վրաստանի գյուղացիությանը: Տեղի յին ունենում զինված ապստամբություններ Ոզուրգեթիի, Զուգդիդիի, Սենակիի, Գորիի, Դուշեթի, Թիֆլիսի ու Թելավի գավառներում: Գյուղացիները կազմակերպում են հեղափոխական կոմիտեներ, գրավում կալվածատիրական հողերը, վերացնում հարկերը, բոյկոտի յենթարկում ցարական իշխանության օրգանները:

Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը գլխավորում էր ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, որին ղեկավարում էր ընկեր Ստալինը:

Մեր կուսակցության III համագումարը բարձր գնահատական տվեց Անդրկովկասում տեղի ունեցող հեղափոխական շարժմանը և նշանակում է՝ նաև Անդրկովկասի բոլշևիկների ղեկավարությանը: Լենինի առաջարկով ՌՍԴԲԿ III համագումարը, Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից, ջերմ ողջույն ուղարկեց Կովկասի հերոս պրոլետարիատին ու գյուղացիությանը և հանձնարարեց կուսակցության կենտրոնական ու տեղական կոմիտեներին «ամենայեռանդուն միջոցներ ձեռք առնել ամենից ավելի լայն կերպով տեղեկություններ տարածելու Կովկասում տիրող իրադրության մասին բրոշյուրների, միտինգների, բանվորական ժողովների, խմբակային զրույցների ու այլնի միջոցով, նաև ժամանակին աջակցելու Կովկասին նրանց տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով»[1]:

Ընկեր Ստալինի ղեկավարած՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը ցույց տվեց հեղափոխության խնդիրների խոր ըմբռնում և զինված ապստամբությունը նախապատրաստելու ուղղությամբ տվեց լենինյան գծի կատարման լավագույն օրինակները: Ընկեր Ստալինն ուղղակի ասում էր, որ հեղափոխությունը չի կարող առանց զենքի հաղթել և այն հեղափոխականը, որն ասում է—«կորչի զենքը»—նա հեղափոխական չէ, այլ տոլստոյական,—նա հեղափոխության ու ժողովրդի ազատության թշնամին է:

[1] ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, մ. I, էջ 50, 1936 թ.:

«Ի՞նչ է հարկավոր մեզ,—հարցնում էր ընկեր Ստալինը,—իրոք հաղթելու համար: Դրա համար յերեք բան է հարկավոր. առաջին՝ սպառազինություն, յերկրորդ՝ սպառազինություն, յերրորդ՝ դարձյալ և դարձյալ սպառազինություն»[1]:

1905 թ. վերջում ընկեր Ստալինը յեղավ Տամմերֆորս քաղաքում (Ֆինլանդիա) կայացած համառուսական բոլշևիկյան կոնֆերենցիայում, վորտեղ առաջին անգամ հանդիպեց Լենինին: Այդ կոնֆերենցիայում ընկեր Ստալինն ընտրվեց բանաձևերը խմբագրելու քաղաքական հանձնաժողովի անդամ և Լենինի հետ միասին աշխատում էր վորպես հեղափոխական մարքսիստական կուսակցության ականավոր կառուցողներից ու ղեկավարներից մեկը:

Կոնֆերենցիայի ժամանակ հաղորդագրություն ստացվեց Մոսկվայում զինված ապստամբության սկսվելու մասին: Լենինի առաջարկով բոլոր դելեգատներն անհապաղ ցրվեցին տեղերը, վորպեսզի ակտիվորեն մասնակցեն զինված ապստամբությունը կազմակերպելուն և ղեկավարելուն:

Այդ օրերին բոլշևիկյան «Кавказский рабочий листок» լրագիրը հրապարակեց Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեյի Խորհրդի վորոշումը.

«... Խորհուրդն արտահայտվում է հօգուտ այն բանի, վոր Թիֆլիսի պրոլետարիատը պետք է հարի համառուսական քաղաքական գործադուլին»[2]:

Գործադուլային կոմիտեն գրավեց փոստը, հեռագրատունը, կովկասյան յերկաթուղու վարչությունը: Նաձալադևին (Նախալովկա)—Թիֆլիսի բանվորական ռայոնը—զինված պրոլետարիատի ձեռքում էր գտնվում:

Ընկեր Ստալինն Անդրկովկաս վերադարձավ, յերբ կառավարությունը հարձակման անցավ, գործի դնելով զինված ուժերը:

1905 թ. դեկտեմբերի 18-ին զորքերը հարձակվեցին Նա–

[1] ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, Հայ. հրատ., էջ 110:

[2] «Кавказский рабочий листок» լրագիր, № 15, 1905 թ. դեկտեմբերի 11 (24):

ձալադևիի վրա, վորտեղ վիրավորեցին յերեք և սպանեցին ինը բանվոր-հեղափոխականի: Հրետանին կրակում էր ուղղակի տների վրա, վորպեսզի ամբողջ բնակչությունը խուճապի մատնի:

Ջախջախելով Թիֆլիսը, ցարական զորքերը դիմեցին դեպի Վրաստանի ծայրամասերը, նվաճելով տերիտորիայի համարյա յուրաքանչյուր թիզը: Ամենուրեք մոլեգնում էր արյունալի տեռորը: Ցարական դահիճները կախում ու գնդակահարում էին ազատության համար մարտնչող քաջարի մարտիկներին: Վոստիկաններն ու ժանդարմները քարուքանդ էին անում հեղափոխական կազմակերպությունները:

Մոսկվայում դեկտեմբերյան զինված ապստամբության ճնշվելուց հետո այդ պատիժները վորպես արյունալի ալիք անցան ամբողջ Ռուսաստանի վրայով:

Բայց այս նշանակո՞ւմ է արդյոք, ինչպես տարածում էին մենշևիկները, թե պրոլետարիատը պարտվել է: «Պրոլետարիատը, փառք աստծու,—գրում էր ընկեր Ստալինը,—ապրում է ու աճում քաղաքականապես. Նա միայն նահանջել է, վորպեսզի, ուժեր հավաքելով, վերջին անգամ հարձակվի ցարական կառավարության վրա»[1]:

Մենշևիկները դեկտեմբերյան զինված ապստամբությունը նշավակում էին, վորպես «հուսահատության արդյունք», վորպես «ճակատագրական սխալ»: Նրանք Պլեխանովի բերանով հայտարարում էին, թե «չպետք էր զենք վերցնել»: Նրանք պահանջում էին կատարելապես հրաժարվել զինված ապստամբությունից առհասարակ, այն դատապարտելով վորպես պայքարի մեթոդ:

Հակահեղափոխության հարձակումն ուժեղացրեց ամբողջ Ռուսաստանում, այդ թվում և Անդրկովկասում, շարքային սոցիալ-դեմոկրատական բանվորների մեջ՝ բոլշևիկներին ու մենշևիկներին միավորելու պահանջը: Բոլշևիկները մենշևիկների հետ հաստատելիք միավորման մեջ տեսնում

[1] Ստալին, Две схватки, изд. Кавказского союзного комитета РСДРП, 1906 թ.:

էին մենշևիզմը մերկացնելու և մենշևիկյան բանվորներին իրենց կողմը նվաճելու միջոցներից մեկը:

Անդրկովկասի բոլշևիկները հենց այս վոգով էին լուծում մենշևիկների հետ հաստատելիք միավորման հնարավորության հարցը: Արդեն 1905 թ. վերջում իրենց IV կոնֆերենցիայում Անդրկովկասի բոլշևիկներն արտահայտվեցին հօգուտ միավորման՝ լենինյան կազմակերպական սկզբունքները պարտադրաբար ընդունելու և կենսագործելու հիման վրա: «... Ձուլման հիմնական պայմանը, ինչպես տեղերում, այնպես էլ կուսակցության «վերնախավերում»,—ասված էր այդ կոնֆերենցիայի բանաձևում,—պետք է լինի Կուսակցության III համագումարում ընդունված կանոնադրության § 1-ի ընդունումը՝ այս §-ից բղխող կազմակերպական ցենտրալիզմով»: Ինչ վերաբերում է գոյություն ունեցող տակտիկական տարաձայնություններին, վորոնք կարող են լուծվել միավորված կուսակցության համագումարի կողմից, ապա նրանք «չեն կարող և չպետք է խանգարեն միասնական Կուսակցության մեջ ձուլվելուն»: Կոնֆերենցիան անհրաժեշտ համարեց «անհապաղ ձեռնամուխ լինել, վորտեղ միայն այս հնարավոր է, ձուլման գործին տեղերում՝ վերև հիշատակված հիմնական պայմանի հողի վրա, իսկ վորտեղ այդ անհնարին է, համաձայնության գալ մենշևիկների հետ գործնական լոզունգների միասնության հողի վրա՝ պրոլետարիատի բացահայտ ելույթի ժամանակ»[1]:

Այս գծի հիման վրա 1906 թվականին կայացան բոլշևիկների ու մենշևիկների Թիֆլիսի և Բաքվի կազմակերպությունների «միավորիչ» կոնֆերենցիաները, իսկ հետո Անդրկովկասյան «միավորիչ» համագումարը, վորտեղ անցկացվեց կազմակերպության յերկու մասերի ֆորմալ միավորումը: Իբրև հետևանք յերևան յեկան ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի ու Անդրկովկասի «միավորիչ» մարզային կոմիտեները:

Անդրկովկասի «միավորիչ» կոմիտեյի հետ կողք-կողքի

[1] «Кавказский рабочий листок» լրագիր, № 8, 1905 թ. դեկտեմբերի 3 (16):

գոյություն ուներ և աշխատում եր բոլշևիկյան կենտրոնը, վորպես բոլշևիկների մարզային բյուրո, ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

1906 թ. ապրիլին Ստոքհոլմում (Շվեդիա) կայացավ ՌՍԴԲԿ IV (Միավորիչ) համագումարը:

Ընկեր Ստալինն այդ համագումարում ներկայացնում եր Թիֆլիսի կազմակերպության բոլշևիկյան մասը: Լենինի հետ միասին նա պայքարում եր մենշևիկների դեմ, անխնայորեն մերկացնելով նրանց հակապրոլետարական, ոպորտունիստական ներքին եյությունը:

Իր ելույթներից մեկում ընկեր Ստալինն ասում եր. «Մենք նոր պայթյունի նախորյակին ենք գտնվում, հեղափոխությունը բարձրանում է, և մենք պետք է այն մինչև վերջը հասցնենք: Այս բանում ամենքս համամիտ ենք: Բայց ի՞նչպիսի իրադրության մեջ մենք կարող ենք և պետք է անենք այդ՝ պրոլետարիատի՞ հեգեմոնիայի իրադրության մեջ, թե՞ բուրժուական դեմոկրատիայի իրադրության մեջ: Ահա թե վորտեղ է սկսվում հիմնական տարակարծությունը: Ընկ. Մարտինովը դեռ «Յերկու դիկտատուրայում» ասում եր, թե ընթացիկ բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիան վնասակար ուտոպիա յէ: Յերեկվա նրա ճառում նույն միտքն է յերևում: Նրան ծափահարող ընկերները պետք է համաձայն լինեն նրա հետ: Յեթե այդ այդպես է, յեթե, ընկեր-մենշևիկների կարծիքով, մեզ վոչ թե պրոլետարիատի հեգեմոնիան է հարկավոր, այլ դեմոկրատական բուրժուազիայի հեգեմոնիան, այն ժամանակ ինքնըստինքյան պարզ է, վոր մենք վոչ գինված ապստամբության կազմակերպելու մեջ, վոչ էլ իշխանության գրավելու մեջ չպետք է անմիջական ակտիվ մասնակցություն ստանձնենք: Այս է մենշևիկների «սխեման»: Ընդհակառակը, յեթե պրոլետարիատի դասակարգային շահերը տանում են դեպի նրա հեգեմոնիան, յեթե պրոլետարիատը պետք է ընթացիկ հեղափոխության վոչ թե պոչից, այլ գլխից գնա, ապա ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր պրոլետարիատը չի կարող հրաժարվել վոչ գինված ապստամբության կազմակերպմանն ակտիվորեն մասնակցելուց, վոչ էլ իշխանությունը գրավելուց: Այս է բոլշևիկների

«սխեման»: Կամ պրոլետարիատի հեգեմոնիա, կամ դեմոկրատական բուրժուազիայի դեմոկրատիա — ահա թե ինչպես ե դրված հարցը կուսակցության մեջ, ահա թե վորոնք են մեր տարաձայնությունները»[1]:

Ստոքհոլմի համագումարը ե՛լ ավելի ցայտուն կերպով յերևան հանեց բոլշևիկների ու մենշևիկների միջև գոյություն ունեցող տարաձայնությունները:

Վերադառնալով Ստոքհոլմի համագումարից, ընկեր Ստալինը պայքար կազմակերպեց Անդրկովկասի մենշևիկների դեմ, մերկացնելով նրանց հրաժարվելը հեղափոխությունից և սահմանադրական միապետության ռելսերի վրա անցնելը: Նրա ղեկավարությամբ բոլշևիկների Անդրկովկասի կազմակերպությունն առաջիններից մեկն եր Ռուսաստանում, վոր արտահայտվեց հօգուտ կուսակցության արտակարգ համագումարի հրավիրման:

1906 թ. նոյեմբերին կայացած համառուսական կուսակցական յերկրորդ կոնֆերենցիայում վորոշում ընդունվեց հրավիրելու կուսակցության V համագումարը:

Ի հակակշիռ այս վորոշման մենշևիկներն ագիտացիա մղեցին անկուսակցական բանվորական համագումար հրավիրելու ոգտին՝ «լայն բանվորական կուսակցություն» ստեղծելու համար: Այդ գաղափարից բռնեցին նաև Անդրկովկասի մենշևիկները: Նրանք կարծում եյին, վոր ընդհատակյա հեղափոխական կուսակցությունը պետք ե լիկվիդացիայի յենթարկել, վոր այն հարկավոր չե պրոլետարիատին, վոր նրա փոխարեն պետք ե ստեղծել խաղաղ պառլամենտական բանվորական կուսակցություն, վորը կարողանար գոյություն ունենալ բացահայտորեն «պոչատ սահմանադրության» հիման վրա, հարմարվելով բուրժուազիայի հետ խաղաղ աշխատակցելուն:

Անդրկովկասի լիկվիդատորները վճռական հակահարված հանդիպեցին ընկեր Ստալինի կողմից, վորն այդ ժամանակ բոլշևիկների ջանքերն ուղղում եր պրոլետարիատի անլեգալ կուսակցությունն ամրապնդելու վրա:

[1] Протоколы IV (объединительного) съезда РСДРП, եջ 235, 1934 թ.:

«Բանվորական համագումար» հրավիրելու լիկվիդատորական գաղափարը վիժեց:

1907 թ. մայիսին Լոնդոնում կայացավ ՌՍԴԲԿ V համագումարը, վորտեղ ընկեր Ստալինը դարձյալ ներկայացնում եր Թիֆլիսի կազմակերպության բոլշևիկյան մասը: Այս համագումարում բոլշևիկներն ունեյին մեծամասնություն, և այդ պատճառով հիմնական հարցերի վերաբերյալ վորոշումներն ընդունվեցին բոլշևիկյան վոգով: V համագումարը նշանակում եր բոլշևիկների ձեռք բերած խոշոր հաղթանակը բանվորական շարժման մեջ:

Լոնդոնի համագումարի վերաբերյալ իր հոդվածներում ընկեր Ստալինն ամենից առաջ ցույց տվեց «միավորյալ» կուսակցության մենշևիկյան ղեկավարության սնանկությունը: Նա գրում եր. «Մենշևիզմը, վորն այն ժամանակ լցրել եր Կենտկոմը, ընդունակ չե կուսակցությունը ղեկավարելու: Նա վերջնականապես սնանկացավ վորպես քաղաքական հոսանք: Այդ տեսակետից Կենտկոմի ամբողջ պատմությունը մենշևիզմի վիժման պատմությունն ե: Եվ յերբ ընկ. մենշևիկները մեզ կշտամբում են, ասելով, թե մենք «խանգարում եյինք» Կենտկոմին, թե մենք «ընկել եյինք» նրա հետևից և այլն և այլն, մենք չենք կարող չպատասխանել բարոյախոսող այս ընկերներին. այո՛, ընկերներ, մենք «խանգարում եյինք» Կենտկոմին խախտելու մեր ծրագիրը, մենք «խանգարում եյինք» նրան պրոլետարիատի տակտիկան հարմարեցնելու լիբերալ բուրժուազիայի ճաշակին և այսուհետև ել կխանգարենք, վորովհետև դա մեր սրբազան պարտքն ե...»[1]:

Մենշևիզմի բուն եյությունն ընկեր Ստալինն այսպես եր բնորոշում. «Մենշևիզմը — դա տականքն ե այն հոսանքների, վորոնք աննկատելի յեն բոլշևիզմի դեմ մղվող ֆրակցիոն պայքարի ժամանակ, բայց հենց միանգամից յերևան են գալիս ընթացիկ մոմենտի հարցերը մեր տակտիկայում սկզբունքորեն դրվելու ժամանակ»[2]:

Մերկացնելով մենշևիկների լիկվիդատորությունը, ըն-

[1] «Бакинский пролетарий» լրագիր, № 1, 1907 թ. հուլիսի 20:
[2] Նույն տեղում:

կեր Ստալինը ցույց տվեց, վոր անկուսակցական բանվորական համագումարի նրանց գաղափարներն ուղղակի դավաճանություն են բանվոր դասակարգին, վոր մենշևիկները լիբերալ բուրժուազիայի «հանձնարարությամբ» աշխատում են գլխատել բանվորական շարժումը: «Զուր չե,—մատնանշում եր նա,—վոր բոլոր բուրժուական գրողները, սինդիկալիստներից ու եսերներից սկսած մինչև կադետներն ու ոկտյաբրիստները, զուր չե, վոր նրանք բոլորն այսպես ջերմորեն են արտահայտվում բանվորական համագումարի ոգտին. չե վոր նրանք բոլորը թշնամի յեն մեր կուսակցությանը, իսկ բանվորական համագումար հրավիրելու ուղղությամբ ծավալելիք գործնական աշխատանքը կարող եր զգալիորեն թուլացնել ու կազմալուծել կուսակցությունը—ի՞նչպես նրանք չողջունեին «բանվորական համագումարի գաղափարը»»[1]:

ՌՍԴԲԿ V համագումարն ավարտվեց մենշևիզմի նկատմամբ բոլշևիզմի տարած հաղթությամբ: Ընկեր Ստալինի անհողդողդ հավատը դեպի բոլշևիզմի ուժը կրկին ու կրկին անգամ արդարացավ: Լոնդոնի համագումարի ընդհանուր բնույթն ու իմաստը, ընկեր Ստալինի խոսքերով, այն ե, վոր տեղի ունեցավ «ամբողջ Ռուսաստանի առաջավոր բանվորների փաստական միավորումը վորպես միասնական համառուսական կուսակցություն՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ»[2]:

IV

V համագումարից հետո կուսակցությունն ընկեր Ստալինին «մշտական» աշխատանքի ուղարկեց Բաքու:

«Մշտական» աշխատանքի... Բայց առհասարակ այս «մշտականությունն» այն ժամանակ չափվում եր միջին հաշվով մի տարվա աշխատանքով, իսկ ապա հետևում եյին ձերբակալություններ:

Ընկեր Ստալինը Բաքվում աշխատեց մոտ մեկ ու կես

[1] «Бакинский пролетарий» լրագիր, № 2, 1907 թ. հուլիսի 10:

[2] Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, հայ. հրատ., եջ 128:

տարի (միջինից զգալիորեն ավելի բարձր) և 8 ամիս անցկացրեց բանտում, վորտեղից չեր դադարում ղեկավարել կազմակերպությունը: Մասսաների մեջ տարված այնպիսի ակտիվ աշխատանքի ժամանակ, վորպիսին ընկեր Ստալինն եր տանում, «ազատ» մնալու այսպիսի համեմատաբար յերկար ժամանակը կարելի յե բացատրել միայն ընդհատակյա աշխատանքի նրա փորձով և բանվորների լայն աջակցությամբ, վորոնք նրան ոգնում եյին թաքնվել ժանդարմերիայից:

Ընկեր Ստալինի Բաքու տեղափոխվելը թելադրվում եր քաղաքական նպատակահարմարությունից: Բաքուն հանդիսանում եր բանվորական մի հսկայական կենտրոն, ուր մեծ քանակությամբ յեկել-հավաքվել եր ամեն տեսակ մենշևիկյան խառն ամբոխ, ինչպես հայտնի ավանտյուրիստներ ու դեմագոգներ Շենդրիկով յեղբայրները (բացառված չե նրանց կապը պահնորդարանի հետ), վորոնք այստեղ հանդիսանում եյին մենշևիկների լիդերները: Յեվ ահա ընկեր Ստալինի վրա խնդիր դրվեց մաքրել Բաքուն այս խառն ամբոխից, դարձնել Բաքուն բոլշևիզմի ամրոցը: Այս խնդիրն ընկեր Ստալինը հրաշալի կերպով գլուխ բերեց:

Այն ժամանակվա Բաքվի կոմիտեյի ակտիվ անդամներից մեկը՝ Պ. Սաղվարելիձեն իր հիշողությունների մեջ ասում ե. «Ամբողջ աշխատանքի ղեկավարը Բաքվի կոմիտեն եր և նրա գործադիր բյուրոն՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ... Ռայոններում աշխատում եյին ռայոնական կոմիտեները... բոլշևիկյան կազմակերպությունը համախմբելու և ամրացնելու ուղղությամբ մղվող վողջ գաղափարական ու կազմակերպական պայքարի ծանրության կենտրոնն ընկած եր ընկեր Ստալինի վրա: Նա ամբողջ հոգով կպած եր աշխատանքին: Միաժամանակ նա ղեկավարում եր անլեգալ «Бакинский рабочий» թերթը, վորի հրատարակումն այդ ժամանակաշրջանում մեծ դժվարություն եր ներկայացնում... կազմակերպում եր աշխատանքը մուսուլման բանվորների մեջ («Հումմեթ» կազմակերպության ոգնությամբ), ղեկավարում եր նավթագործների գործադուլները և այլն: Նա ինտենսիվ պայքար եր մղում մենշևիկներին ու եսերներին բանվորական շրջաններից վտարե-

լու համար: Ընկեր Ստալինն առաջին հերթին գնում էր այն շրջանները, որտեղ մենշևիկներն ու էսէրներն ուժեղացնում էին իրենց աշխատանքը: Վերջապես նա հիմնավորվեց Բիբի-Էյբաթում, որը մենշևիկների միջնաբերդն էր հանդիսանում Բաքվում: Հենց այդ ժամանակ ամենից շատ Բիբի-Էյբաթումն էին գտնվում չենդրիկովշչինայի—վոստրիկանական սոցիալիզմի այդ յուրահատուկ տարատեսակության—մնացորդները: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ բոլշևիկները կոտրեցին մենշևիկների ու էսէրների ազդեցությունը և Բիբի-Էյբաթը դարձրին բոլշևիկյան ռայոն»[1]:

Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունն աճեց, ամրապնդվեց ու կոփվեց մենշևիկների, էսէրների ու նացիոնալիստների դեմ մղած պայքարում, իր կողմը նվաճելով բանվորների ճնշող մեծամասնությունը: Այդ տեսակետից առանձնապես հատկանշական է բանվորների ու նավթարդյունաբերողների միջև կոլեկտիվ պայմանագիր կնքելու ուղղությամբ ծավալված մեծ կամպանիան:

Բաքվի բոլշևիկները, ղեկավարվելով ընկեր Ստալինի կողմից, հսկայական աշխատանք ծավալեցին բանվորական մասսաներին քաղաքականապես լուսավորելու ուղղությամբ և կարողացան բանվորների՝ նավթարդյունաբերողների դեմ մղած պայքարը փոխադրել ցարիզմի ու բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային-գիտակից քաղաքական պայքարի ռելսերի վրա: Իբրև հետևանք այս կամպանիան անցկացնելու, տակտիկայի վերաբերյալ հատուկ հարցման՝ բանվորների մեծամասնությունն արտահայտվեց բոլշևիկների ստալինյան տակտիկայի օգտին, իսկ էսէրները, դաշնակներն ու մենշևիկները խայտառակ կերպով տապալվեցին: 1907 թ. վերջում, երբ ամբողջ Ռուսաստանում մոլեգնում էր ռեակցիան, Բաքվում մոտ յերկու շաբաթ նիստեր էր ունենում յուրատեսակ բանվորական մի պառլամենտ հանձին նավթահանքերի ու գործարանների լիազորների ժողովի՝ բանվոր-բոլշևիկ ընկեր Տրոնովի նախագահությամբ: Այստեղ բոլշևիկները, մշակելով նավթարդյունաբերողներին ներկայացնելիք՝ բանվորների պահանջները, լայնորեն ագիտացիա ծավալեցին կուսակցության անկրճատ լոզունգների օգտին—8-ժամյա աշխատանքային օրվա, կալվածատիրական հողերի բռնագրավման ու դեմոկրատական հանրապետության օգտին:

[1] Տես. ըստ Լ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գրքի, հայ. հրատ., էջ 132: 1936 թ.:

5020кн

Ընկեր Ստալինը Բաքվի պրոլետարիատին յուրացնել տվեց բոլշևիզմի փառապանծ տրադիցիաները, որոնց շնորհիվ նա, Բաքվի պրոլետարիատը, առաջ քաշվեց հեղափոխության հաղթության համար, պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի համար մարտնչողների առաջավոր շարքերը:

Բայց ընկեր Ստալինն ինքն էլ շատ ու շատ բան ստացավ այս ժամանակաշրջանում: «Նավթային արդյունաբերության բանվորների մեջ տարած հեղափոխական աշխատանքի յերկու տարիները,—ասում է նա,—ինձ կոփեցին, որպես պրակտիկ մարտիկի և պրակտիկ ղեկավարներից մեկի: Բաքվի այնպիսի առաջավոր բանվորների հետ, ինչպես են Վացեկը, Սարատովեցը և ուր., ունեցածս շփման մեջ, մի կողմից, և բանվորների ու նավթարդյունաբերողների միջև ծագող խորագույն կոնֆլիկտների փոթորկում—մյուս կողմից, յես առաջին անգամ իմացա, թե ինչ է նշանակում ղեկավարել բանվորների մեծամեծ մասսաներին: Այնտեղ, Բաքվում, յես ստացա, այսպիսով, յերկրորդ մարտական հեղափոխական մկրտությունս: Այստեղ յես դարձա հեղափոխության յենթավարպետ»[1]:

Աշխատելով անմիջականորեն Բաքվում, ընկեր Ստալինը հաճախ կարճ ժամանակով գալիս էր Թիֆլիս և ուղղություն տալիս Վրաստանի բոլշևիկյան կազմակերպության պայքարին:

Ռեակցիայի վրա հասած մռայլ տարիներին Անդրկովկասի բոլշևիկներն ընկեր Ստալինի ղեկավարությամբ ամենամեծ կարգապահությամբ նահանջեցին: Նրանք հսկայա-

[1] Ընկեր Ստալինի զեկուցումը Թիֆլիսի Գլխավոր յերկաթուղային արհեստանոցների բանվորների ժողովում 1926 թ. հունիսի 8-ին («Правда» լրագիր, 16 հունիսի, 1926 թ.):

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

կան աշխատանք ծավալեցին անլեգալ կուսակցական կազմակերպություն կառուցելու և ամրապնդելու ուղղությամբ ու պայքար մղեցին ցարական ինքնակալության դեմ նոր գրոհ նախապատրաստելու համար, հարմարվելով նոր պայմաններին, յերկրում ստեղծված նոր իրադրությանը, օգտագործելով լեգալ ու կիսալեգալ հնարավորությունները մարքսիստական-լենինյան սոցիալ-դեմոկրատական լուսավորության և պրոլետարիատի կազմակերպման համար:

1908 թ. մարտին ցարական պահնորդարանը հետապընդելով գտավ ընկեր Ստալինին, և նա ձերբակալվեց: Համարյա ութ ամիս նստեց այն ժամանակ ընկեր Ստալինը Բայիլովի բանտում: Բայց բանտում ևս գտնվելով, նա շարունակում եր ղեկավարել կուսակցության Բաքվի կոմիտեն և անլեգալ բոլշևիկյան «Бакинский рабочий» լրագիրը:

«Քաղաքական կոմունայում,—պատմում է ընկ. Սաղվարելիձեն,—անընդհատ դիսկուսիաներ եյին կազմակերպվում, վորտեղ քննարկվում եյին հեղափոխության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի հարցերը: Դիսկուսիոն ժողովները մեծ մասամբ կազմակերպվում եյին բոլշևիկների նախաձեռնությամբ: Ընկեր Ստալինն այդ ժողովներին հաճախ եր հանդես գալիս բոլշևիկյան ֆրակցիայի կողմից, յերբեմն վորպես զեկուցող, յերբեմն վորպես ընդդիմախոս... Ընկեր Ստալինին ու նրա ընկերներին վիճակվում եր ղեկավարել կազմակերպության աշխատանքը բանտում: Բոլշևիկյան ֆրակցիան կարողացավ կարգավորել կապը Բաքվի կազմակերպության հետ, վորտեղից ճիշտ ինֆորմացիա յեր ստանում ընթացիկ աշխատանքի մասին և տալիս եր նրան իր խորհուրդներն ու ցուցումները... Ընկեր Ստալինը բանտից ղեկավարում եր Բաքվի կազմակերպության օրգանի—«Бакинский рабочий» թերթի հրատարակությունը: Դեպք է յեղել, յերբ թերթի ամբողջ խմբագրական նյութը պատրաստվել է Բայիլովի բանտում»[1]:

Համարյա ութ ամսվա բանտարկությունից հետո ընկեր

[1] Ցիտ. ըստ Լ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գրքի, հայ. հրատ., եջ 150—151:

Ստալինին յերկու տարով աքսորեցին Վոլոգդայի նահանգը, Սոլվիչեգոդսկ:

1909 թ. ամառը ընկեր Ստալինը փախավ աքսորից և վերադարձավ Բաքու, վորտեղ շարունակեց անլեգալ աշխատանք տանել, միաժամանակ ամրապնդելով Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները:

Այդ՝ կուսակցության մեջ գոյություն ունեցող լիկվիդատորական հոսանքի դեմ մղվող լարված պայքարի ժամանակաշրջանն եր, և ընկեր Ստալինն իր ամբողջ հեղափոխական յեռանդն ուղղեց մենշևիկներին մերկացնելու ու ջախջախելու վրա, զուգընթացաբար հարվածներ հասցնելով եսերներին և պրոլետարիատին թշնամի մյուս քաղաքական հոսանքներին:

1909 թ. հոկտեմբերին ընկեր Ստալինը գալիս է Թիֆլիս, վորտեղ մեծ աշխատանք է կատարում Թիֆլիսի բոլշևիկների՝ լիկվիդատորների դեմ մղվող պայքարը կազմակերպելու ուղղությամբ:

Այդ ժամանակաշրջանում ընկեր Ստալինը նախապատրաստեց բոլշևիկների Թիֆլիսի կոնֆերենցիայի հրավիրումն ու բոլշևիկյան «Тифлисский пролетарий» լրագրի հրատարակությունը:

Այս լրագրի առաջին համարում զետեղված հոդվածում ընկեր Ստալինը գրում եր.

«Ռուսական մեծ հեղափոխությունը չի մեռել—վոչ, նա կենդանի՛ յե—նա միայն նահանջել է և ուժեր է կուտակում ապագա հուժկու յելույթների համար:

Վորովհետև հեղափոխության շարժիչները, պրոլետարներն ու գյուղացիները,—կենդանի յեն ու չվնասված, և նրանք չեն ուզում, չեն կարող հրաժարվել իրենց կենսական պահանջներից...

Մենք ապրում ենք նոր պայթյունների նախորյակին, մենք կանգնած ենք ցարական իշխանությունը տապալելու հին խնդրի առջև...

Մեր պարտքն է, առաջավոր բանվորների պարտքը,—արժանավայել դիմավորել հանրապետության համար, պրոլետարիատի իրավունքների համար մղվելիք գալիք փառապանծ ճակատամարտերին:

Մեզ, և միմիայն մեզ, առաջավոր բանվորներիս, կվիճակվի, ինչպես և 1905 թվականին, ղեկավարել հեղափոխությունը, ուղղել այն դեպի լիակատար հաղթություն տանող ուղիով...

Մեզ, և միմիայն մեզ, առաջավոր բանվորներիս, կվիճակվի, ինչպես և 1905 թվականին, գյուղացիներին համախմբել հեղափոխական պահանջների շուրջը...

Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է միասնական և ուժեղ կուսակցություն, որը կարողանա իր վրա վերցնել պրոլետարիատի բոլոր կենդանի ուժերը գալիք մարտերի համար նախապատրաստելու գործը...

Այսպես ուրեմն, դեպի գո՛րծ, ընկեր ընթերցող, դեպի համերաշխ աշխատանք Թիֆլիսի պրոլետարիատի ուժերն ապագա վճռական ելույթների համար նախապատրաստելու ուղղությամբ»[1]:

Ընկեր Ստալինի քաղաքական գործունեության մեջ Բաքվի ժամանակաշրջանն ունի մեծ նշանակություն: Զուր չէ, որ նա այն բնորոշում է որպես մի ժամանակաշրջան, երբ նա դարձավ «հեղափոխության յենթավարպետ»:

Բաքվի պրոլետարիատն ինդուստրիալ և միևնույն ժամանակ բազմազգ պրոլետարիատ է՝ ռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, հայեր: Կային իրանցի շատ աշխատողներ: Քաղաքը, ավելի ճիշտ՝ նավթահանքերը, շրջապատված էին ադրբեջանական գյուղացիական բնակչությամբ, որոնք ատում էին ռուս կոլոնիզատորներին: Ցարական չինովնիկներն ադրբեջանցիներին գրգռում էին հայերի դեմ, հայերին՝ ադրբեջանցիների դեմ, ժամանակ առ ժամանակ փոխադարձ կոտորած կազմակերպելով:

Հանքերի տերերն էին միջազգային շնաձկները, ինչպես Ռոտշիլդը, Նոբելը, Շիրայեվը (անգլիական ընկերություն), Մանթաշևը և այլն: Փաստորեն Բաքվի արդյունաբերությունը գտնվում էր օտարերկրյա կապիտալի ձեռքին:

Անկասկած է, որ օպորտունիստական հոսանքների ու նացիոնալիստական կուսակցությունների ղեկավարներից

[1] «Тифлисский пролетарий» լրագիր, № 1, 1910 թ. հունվարի 5:

շատերը, աշխատելով ձեռնարկություններում, օտարերկրյա կապիտալի գաղտնի գործակալներ էին:

Հակասությունների այս ամենաբարդ կծիկում կարող էր կողմնորոշվել միայն այն մեծատաղանդ քաղաքական գործիչը, որը գիտե, թե նա ինչ է ուզում, և կարողանում է բանվորների մասսաներին ցույց տալ, որ իր նպատակը հենց այն է, ինչ հարկավոր է պրոլետարիատին, իսկ իր միջոցներն ամենից ավելի յեն նպատակահարմար պայքարում:

Հենց այդպիսի քաղաքական գործիչ հանդիսացավ ընկեր Ստալինը: Դրա համար էլ Բաքվի պրոլետարիատը ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղած պայքարում գնաց ընկեր Ստալինի հետևից, դարձնելով նրան իր սիրելին: Նրա ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատն անցավ հերոսական պայքարի փառապանծ ուղին, գտնվելով համառուսական հեղափոխական շարժման առաջավոր շարքերում:

1910 թ. մարտին ընկեր Ստալինին նորից ձերբակալեցին և մի քանի ամսվա բանտարկությունից հետո աքսոր ուղարկեցին հետ Սոլվիչեգոդսկ:

Ռեակցիայի ու հեղափոխական շարժման անկման ամենադժվար տարիներին, չնայած հաճախակի ձերբակալություններին և վտարումներին, ընկեր Ստալինն է՛լ ավելի մեծ մասնակցություն է ունենում բոլշևիկների ամբողջ ֆրակցիան ղեկավարելու մեջ:

Ընկեր Ստալինն ամբողջովին պաշտպանում էր Լենինի պլանը կուսակցությունը վերածնելու և ամրապնդելու մասին այն մենշևիկ-պլեխանովականների հետ բոլշևիկների սկզբունքային բլոկ ստեղծելու միջոցով, որոնք այն ժամանակ պայքարում էին լիկվիդատորների դեմ ու պաշտպանում անլեգալ կուսակցությունը: Սոլվիչեգոդսկի աքսորավայրից 1910 թ. դեկտեմբերի 31-ին ուղարկած իր նամակում նա գրում էր. «Իմ կարծիքով, բլոկի գիծը (Լենին—Պլեխանով) միակ նորմալն է. 1) այն և միմիայն այն է համապատասխանում Ռուսաստանում տարվող աշխատանքի իսկական շահերին, որոնք պահանջում են բոլոր իրոք կուսակցական տարրերի համախմբվածությունը. 2) այն և մի-

միայն այն է արդարացնում լեգալ կազմակերպությունները լիկվիդատորների ճնշման տակից ազատագրելու պրոցեսը, վեճ փորելով բանվոր-մեկերի ու լիկվիդատորների միջև, ցրելով ու սպանելով վերջիններին»[1]:

Ի հակակշիռ Լենինի—Պլեխանովի, բոլշևիկների ու մենշևիկ-կուսակցականների սկզբունքային կուսակցական բլոկի՝ Տրոցկին սկսեց անլեգալ հեղափոխական կուսակցության թշնամիներից իր բլոկը հավաքել, բոլոր յերանգների լիկվիդատորների անսկզբունք, հակակուսակցական Օգոստոսյան բլոկը:

Ընկեր Ստալինը վճռականորեն հանդես յեկավ Լենինին պաշտպանելու տրոցկիստական ավանտյուրայի դեմ մղվող պայքարում: Սոլվիչեգոդսկից ուղարկած նույն նամակում նա գրում էր. «Տրոցկիական բլոկը...—այդ մի նեխած անսկզբունքայնություն է, տարասեռ սկզբունքների մանիլովյան ամալգամա, անսկզբունք մարդու անզոր թախիծը «լավ» սկզբունքի նկատմամբ: Իրերի տրամաբանությունն իր բնությամբ խստորեն սկզբունքային է և այն չի հանդուրժի ամալգամներ»[2]:

Պաշտպանելով Լենինին, լիովին համերաշխ լինելով նրա հետ, ընկեր Ստալինը «Նամակ Կովկասից» հոդվածում, տպված կուսակցության կենտրոնական օրգան «Социал-Демократ»-ի № 11-ում, ջախջախում է լիկվիդատորներին, տրոցկիստներին ու «հաշտվողականներին», կոչ անելով վերջ տալ այն աննորմալ դրությանը, վորը ստեղծվել է բոլշևիկյան ֆրակցիայում Կամենևի, Զինովյևի ու Ռիկովի դավաճանական վարքի հետևանքով:

Սրա հետ միասին ընկեր Ստալինը մի շարք հերթական խնդիրներ առաջ քաշեց կուսակցության լենինյան գիծն իրականացնելու նպատակով, այն է՝ համակուսակցական կոնֆերենցիայի գումարում, Ռուսաստանում լեգալ համառուսական կուսակցական լրագրի հրատարակում և անլեգալ պրակտիկ կուսակցական կենտրոնի ստեղծում Ռուսաստանում:

1 Ժուռնալ «Большевик» № 1—2, 1932 թ., էջ 11:
2 Նույն տեղում:

1911 թվականին ընկեր Ստալինը նորից փախավ աքսորից և այս անգամ կուսակցության Կենտկոմի վորոշմամբ տեղավորվեց Պետերբուրգում: Շուտով նրան նորից ձերբակալեցին և աքսորեցին Վոլոգդայի նահանգը:

ՌՍԴԲԿ «վերնախավերում» լուրջ տարընթացություն էր: Կուսակցության ղեկավար կենտրոններում Լենինը հաճախ փոքրամասնության մեջ էր մնում: Օպորտունիստների ու «հաշտվողականների» դեմ Լենինի մղած լարված պայքարի այս ծանր պայմաններում ընկեր Ստալինը Լենինի մշտական ու անդավաճան կողմնակիցն էր կուսակցական բոլոր իրադարձություններում. իր ամբողջ գործունեության ընթացքում նա վոչ մի անգամ չի հեռացել Լենինից ինչպես իր թեորիական, սկզբունքային դիրքերում, այնպես էլ իր ամբողջ պրակտիկ աշխատանքում: Իր գաղափարական ու կազմակերպական աշխատանքով նա խիստ թեթևացնում էր Լենինի պայքարը տատանվողների, դեպի բոլշևիզմը հավատը կորցրածների դեմ և ըստ էության ղեկավարում էր Ռուսաստանի բոլշևիկյան կազմակերպությունները:

Այն բանից հետո, ինչ լիկվիդատորները դեն նետեցին դիմակները, սկսելով բացահայտորեն քանդել կուսակցությունն ու լեգալանալ, այն բանից հետո, ինչ բոլոր յերանգների «հաշտվողականներն» ու տրոցկիզմը մերկացվեցին, անլեգալ հեղափոխական կուսակցությունը վերականգնելու ու ամրապնդելու գործն արագորեն առաջ գնաց: Սերգո Օրջոնիկիձեյի գլխավորությամբ կազմվեց Ռուսաստանի կազմակերպական մի հանձնաժողով, վորը լենինորեն նախապատրաստական աշխատանք ծավալեց համակուսակցական կոնֆերենցիա գումարելու ուղղությամբ, այսպիսով իրագործելով այն խնդիրը, վորն ընկեր Ստալինն առաջ քաշեց դեռ 1910 թ. սկզբին: Լենինը լիակատար բավականությամբ նշում էր, վոր այժմ «շոգեքարշը բարձրացված է ու դրված ռելսերի վրա»[1]:

Սոլվիչեգոդսկից ուղարկած իր նամակում ընկեր Ստա-

1 Լենին, հ. XV, էջ 293:

լինը գրում էր. «Ինձ մնում է վեց ամիս: Ժամանակը լրանալուց հետո յես ամբողջովին պատրաստ եմ ծառայելու: Յեթե աշխատողների կարիքն իրոք սուր է, յես կարող եմ անհապաղ ծլկվել»[1]: Յեվ իրոք, վորոշ ժամանակ անց ընկեր Ստալինը «ծլկվեց»:

Պրագայի կոնֆերենցիան (1912 թ. հունվար) տվեց գանազան յերանգների լիկվիդատորների դեմ մղված ամբողջ պայքարի հանրագումարը: Վերջ տալով մենշևիկ-լիկվիդատորների հետ հաստատված դեռ ֆորմալ կերպով պահպանվող միավորման մնացորդներին, դուրս անելով նրանց կուսակցությունից, կոնֆերենցիան ձևակերպեց բոլշևիկյան կուսակցության ինքնուրույն գոյությունը: «Այդ կոնֆերենցիան,—ասում էր ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ XV համագումարում,—մեծագույն նշանակություն ունեցավ մեր կուսակցության պատմության մեջ, վորովհետև նա սահման դրեց բոլշևիկների ու մենշևիկների միջև և բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ յերկրովը մեկ միավորեց միասնական բոլշևիկյան կուսակցության մեջ»[2]:

V

Պրագայի կուսակցական կոնֆերենցիան ընկեր Ստալինին հեռակայորեն ընտրեց ՌՍԴԲԿ Կենտրոնական Կոմիտեյի անդամ: Այժմ նա գլխավորեց կուսակցության Կենտկոմի Ռուսական բյուրոն—ամբողջ կուսակցական աշխատանքը Ռուսաստանում ղեկավարելու պրակտիկ կենտրոնը: Կենտկոմի հանձնարարությամբ ընկեր Ստալինը շրջեց Ռուսաստանի կարևորագույն շրջանները և տեղերում պայքար կազմակերպեց Պրագայի կոնֆերենցիայի վորոշումներն իրականացնելու համար: Նա նախապատրաստական աշխատանք ծավալեց հերթական մայովկայի համար, ղեկավարում էր «Звезда» շաբաթաթերթը, վորն սկսեց հրատարակվել նրա նախաձեռնությամբ, կազմակերպեց քաղաքա-

[1] Ժուռնալ «Большевик», № 1—2, 1932 թ., եջ 13:

[2] Ստալին, Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը ՀամԿ(բ)Կ XV համագումարին, Հայ. հրատ., եջ 84, 1937 թ.:

կան գործադուլային շարժում Լենայի դեպքերի կապակցությամբ և նախապատրաստեց մասսայական ամենօրյա բոլշևիկյան «Правда» լրագրի հիմնումը:

«Правда»-ն աճեցնում էր հեղափոխական մարտիկների կադրեր, նրան պաշտպանում եյին տասնյակ ու հարյուրհազարավոր բանվորներ: «1912 թ. «Правда»-ն,—ասում էր ընկեր Ստալինը,—այդ հիմնարկեք է բոլշևիզմի հաղթության համար 1917 թվին»: Յեվ այս հիմքը ստեղծելու առաջին վորմնադիրներն եյին Լենինն ու Ստալինը:

Պահնորդարանն ուշի-ուշով վորոնում էր ընկեր Ստալինին: Յերբ նա 1912 թ. ապրիլին Սերգո Օրջոնիկիձեյի հետ միասին Մոսկվայից Պետերբուրգ էր ուղևորվում, ժանդարմական գնդապետը հեռագրեց վոստիկանության դեպարտամենտին. «Ապրիլի 9-ին Նիկոլայևսկի կայարանից № 8 գնացքով Մոսկվայից Պետերբուրգ մեկնեցին կենտրոնային-եսդեկներ Սերգոն ու կոոպտացիայի յենթարկված Կոբան: Հսկողություն ունեցեք... Լիկվիդացիան ցանկալի յե, բայց թույլատրելի յե բացառապես միայն տեղական կապերով, առանց աղբյուրները Մոսկվայի վրա ցույց տալու»:

Բայց ընկեր Ստալինն այս անգամ էլ ճողոպրեց ցարական խուզարկուների հսկողության տակից: Ապրիլի 10-ին Պետերբուրգի պահնորդարանի պետը վոստիկանության դեպարտամենտին զեկուցում էր. «Հիշատակված գնացքով ժամանած «Սերգոն» հսկողության տակ առնվեց, իսկ Կոբան հիշատակված գնացքում չկար»:

Լենինը շատ էր անհանգստանում ընկեր Ստալինի դրության մասին: Իր 1912 թ. մարտի 28-ի նամակում նա բացահայտ տագնապով հարցնում էր. «Իվանովիչից [Ստալին] լուր չկա,—ի՞նչ է անում: Վո՞րտեղ է: Ի՞նչպես է»[1]:

1912 թ. ապրիլի վերջում ընկեր Ստալինին նորից ձերբակալեցին և այժմ արդեն յերեք տարով աքսորեցին Նարիմի յերկրամաս: Նույն 1912 թ. սեպտեմբերին ընկեր Ստալինը փախավ Նարիմի աքսորից և հենց սեպտեմբերին վերադարձավ Պետերբուրգ, վորտեղ նորից գլխավորեց կու-

[1] «Красный архив», հ. I (վաթսուներկույերորդ), եջ 228, 1934 թ.:

ռակցության Կենտկոմի Ռուսական բյուրոն, այլև «Правда»-ի խմբագրությունը:

Բոլշևիկների՝ IV Պետական դումայի ընտրական կամպանիան անցավ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Նա գրեց հռչակավոր «Պետերբուրգի բանվորների նակազն իրենց բանվոր դեպուտատին», վորի մեջ ձևակերպվեց բոլշևիկյան կուսակցության ընտրական պլատֆորման:

Լենինն այդ «Նակազին» մեծ նշանակություն էր տալիս: Նրա ձեռքով օրինակներից մեկի վրա հավելագրված է. «Անպատճա՛ռ վերադարձնե՛լ: Չկեղտոտել: Չափազանց կարևոր է այս փաստաթուղթը պահպանել»:

Ընտրությունների այսպես կոչված այն «պարզաբանումների» կապակցությամբ, վորոնց միջոցով ցարական իշխանությունները փորձ արին չեղյալ հայտարարել մի ամբողջ շարք ֆաբրիկաների ու գործարանների լիազորների ընտրությունները, Պետերբուրգի կոմիտեն, ընկեր Ստալինի ցուցումով, Պետերբուրգի բանվորների բողոքի մասսայական քաղաքական գործադուլ կազմակերպեց: Վորպես հետևանք ցարական կառավարությունը վոչ միայն վերացրեց իր «պարզաբանումները», այլև ընդարձակեց այն ձեռնարկությունների ցուցակը, վորոնց բանվորներին իրավունք էր տրվում մասնակցել ընտրություններին: Այդ գործադուլի ժամանակ ընկեր Ստալինը, չնայած իր անլեգալ դրության, անձամբ էր հանդես գալիս մի շարք գործարանների թռուցիկ ժողովներում:

Ընտրական կամպանիայում բոլշևիկները հաղթանակ տարան լիկվիդատորների նկատմամբ: Բոլոր այն վեց նահանգներում, վորտեղ բանվորներին իրավունք էր տրված Դումայի համար մեկական դեպուտատ ընտրել, անցան բոլշևիկների կուսակցության թեկնածուները, վորոնք ընդհանուր առմամբ ներկայացնում էին Ռուսաստանի պրոլետարիատի $^{4}/_{5}$-ը:

Այս հաղթանակը տարվեց շատ դժվարին պայմաններում: Ընկեր Ստալինն ընտրական կամպանիայի կուսակցական ղեկավարությունն անլեգալ կերպով էր իրականացնում: Հարկ էր լինում պայքարել վոչ միայն սևհարյուրյակայինների, օկտյաբրիստների ու կադետների դեմ, այլև

բոլշևիզմի՝ բանվորական շարժման մեջ յեղած անթիվ թշնամիների դեմ՝ լիկվիդատորների, տրոցկիստների, վպերյոդականների, պլեխանովականների, անարխիստների ու այլոց դեմ: Հարկավոր էր մարդիկ գտնել, դրդել նրանց գործ անել, վոգևորել, իսկ վոր գլխավորն է՝ կազմակերպորեն ուղղություն տալ և սովորել աշխատել: Ահա թե ինչպիսի պայմաններում բոլշևիկները, վորոնց ղեկավարում էր ընկեր Ստալինը, հաղթանակ տարան բանվորական կուրիայում:

IV Պետական դումայի բոլշևիկյան դեպուտատներն աշխատում էին կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ: Լենինը հսկայական նշանակություն էր տալիս բոլշևիկյան դեպուտատների գործունեությանը: Բոլշևիկյան դեպուտատների աշխատանքին անմիջականորեն ուղղություն էր տալիս ընկեր Ստալինը: Նա յեր ղեկավարում բոլշևիկյան դեպուտատներին ընդհանուր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիա ստեղծելիս, նրա դեկլարացիան մշակելիս, Դումայում յելույթներ նախապատրաստելիս ու կազմակերպում նրանց արտադումայական գործունեությունը:

1912 թ. վերջում ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Կրակովում գումարվեց Կենտկոմի լայն խորհրդակցությունը Պետական դումայի բանվորական դեպուտատների ու կուսակցական աշխատողների հետ: Այդ խորհրդակցությունն անցնում էր Լենինի ղեկավարությամբ և ընկեր Ստալինի ամենաակտիվ մասնակցությամբ:

1913 թ. փետրվարին, Կրակովի խորհրդակցության վորոշումներն իրականացնելու մեծ աշխատանքի բուն յեռուզեռին, ընկեր Ստալինին նորից ձերբակալեցին Պետերբուրգում և միքանի ամիս անց աքսորեցին Տուրուխանի յերկրամասը: Այս աքսորավայրում նա մնաց չորս տարի և ազատություն ձեռք բերեց միայն Փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ. մարտին:

Ընկեր Ստալինի հեղափոխական աշխատանքը լավ գիտեր ցարական պահնորդարանն ու ժանդարմերիան: Իմիջի այլոց, դեռ 1910 թ. մարտին Բաքվի ժանդարմական վարչության պետն ընկեր Ստալինի մասին գրում էր, վոր

«Նկատի առնելով նրա համառ մասնակցությունը, չնայած վարչական բնույթի բոլոր պատիժներին, հեղափոխական կուսակցությունների գործունեության մեջ, վորոնց մեջ նա միշտ շատ ականավոր դիրք էր գրավում, և նկատի առնելով նրա կրկնակի փախուստը վարչական աքսորման վայրերից, վորի շնորհիվ նա իր նկատմամբ ձեռք առնված վարչական պատիժներից վոչ մեկը չի կրել, յես կվորոշեյի պատժի բարձրագույն չափն ընդունել—հինգ տարով աքսորել Սիբիրի ամենահեռավոր վայրերը»[1]:

Յես կուզեյի, վոր ընթերցողը, առանձնապես յերիտասարդ ընթերցողը, ուշադրությամբ կանգ առներ ընկեր Ստալինի անլեգալ կյանքի ու գործունեության ժամանակագրության վրա: Անլեգալ աշխատանք: Ձերբակալություն: Բանտ: Աքսոր: Փախուստ: Նորից անլեգալ աշխատանք, նորից ձերբակալություն, բանտ ու աքսոր և այլն և այլն:

Ի՛նչպես «պարզ է», «սովորական»: Մինչդեռ այս «պրոզայիկ» պատկերի հետևը կատաղի դասակարգային պայքարն է թաքնված:

Ցարական ամբողջ մաքինան անխնայորեն հարձակվում եր այն խիզախորդների վրա, վորոնք հանդգնում եյին պրոլետարիատի կազմակերպված ուժը հակադրել նրան: Հասկանալի յե, նա առանձնապես հարձակվում եր նրանց վրա, ովքեր իրենց կյանքի նպատակ եյին դնում տապալել ցարական ինքնակալությունն ու կապիտալիզմը:

Ցեթե ընկեր Ստալինն իր կյանքից հաջորդաբար պատմեր միայն իր առօրյա գործողությունների մասին, իր կենցաղային հանգամանքների մասին, մարդկանց հետ ունեցած հանդիպումների մասին և այլն,— կստացվեր մի հետաքրքրական պատմվածք, հագեցված հեղափոխական ռոմանտիկայով, վորի մեջ հաճախ կոմիկական մոմենտները զարմանալիորեն արագ ու անսպասելի կերպով տրագիկական մոմենտների յեն փոխվում, յերբ մարդուց պահանջվում է վոչ միայն սառնասրտություն, վոչ միայն յերկաթե կամք,

[1] Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի Միտոնական կուսարխիվի նյութեր, գործ № 480:

այլև անընդհատ հերոսություն, վորը և լոտ նյության պահպանեց ընկեր Ստալինին:

Կարելի յե համարձակորեն ասել, վոր ընկեր Ստալինը ռուս ժողովրդի լավագույն զավակների, ինչպես են Բելինսկին, Դոբրոլյուբովը, Չերնիշևսկին և այլն, անմիջական ժառանգներից մեկն է հանդիսանում, և վոչ միայն նրանով, վոր նա մարքսիզմ-լենինիզմի հիմքի վրա կենսագործեց այդ մարդկանց լավագույն յերազանքներն ու ձգտումները, այլև իր ամբողջ կյանքի կառուցվածքով—գոյություն ունեցող դրության հանդեպ ունեցած անհաշտությամբ, տիրապետող դասակարգերի հանդեպ տածած պրոլետարական ատելությամբ, ճնշողների դեմ մղած անմիջական ու անընդհատ պայքարով:

Ընկեր Ստալինի կողմից ամբողջ հասարակական կյանքի բազմակողմանի ու խոր ըմբռնումը նրա բոլոր արտահայտություններում, ներառյալ գրականությունն ու արվեստը, անմիջական արտացոլում եր գտնում նրա անլեգալ աշխատանքում—ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղած պայքարում:

Ահա թե ինչ է թաքնված չոր ու զգայազուրկ «ժամանակագրության» տակ: Ահա թե ինչու այդ «ժամանակագրությունը» մեզ համար այնպես թանկ է: Չէ վոր այն խոսում է մարդկային ազնվության գագաթնակետերի մասին, նրա մեջ մենք տեսնում ենք մարդու,—ռուս հեղափոխականի լավագույն գծերը:

Լենայի դեպքերից հետո պրոլետարիատի հեղափոխական շարժման ալիքն ուժեղանում եր: 1914 թ. առաջին կեսում դեմոնստրացիաները սովորական յերևույթ դարձան: Պետերբուրգում և մի ամբողջ շարք խոշոր քաղաքներում բարրիկադներ յերևացին: Ամենառեակցիոն «Новое время» լրագիրը տագնապալից գրում եր. «1914 թ. հուլիսյան որերին ամենուրեք նկատվում է արտասովոր հուզում, զգացվում է պարածի մեծ խորությունը, վորը կարմիր 1905—1907 թ. թ. է հիշեցնում»: Բայց 1914 թվին սկսված համաշխարհային իմպերիալիստական պատերազմն ընդհատեց հեղափոխության վերելքը: Ցարական կառավարությունը,

ոգտվելով պատերազմից, հարձակվեց բոլշևիկյան կուսակցության ու բանվորական շարժման վրա։

VI

Բոլոր ոպորտունիստական կուսակցությունները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում, իմպերիալիստական պատերազմի հենց սկզբից բացահայտորեն իրենց կառավարությունների կողմն անցան։ Եվ ընդհանուր շովինիստական մոլուցքի այս մոմենտին միայն Լենինը, միայն բոլշևիկների կուսակցությունը բարձր պարզեցին ինտերնացիոնալիզմի դրոշակը։ Ընկեր Ստալինը, գտնվելով աքսորում, ամբողջովին ու լիակատար կերպով սատարում ու պաշտպանում եր Լենինի ունեցած դիրքը պատերազմի, հաշտության ու հեղափոխության հարցերի նկատմամբ ինչպես թեորիայի բնագավառում, այնպես էլ տակտիկայի բնագավառում, աքսորավայրից հակահարված հասցնելով մեր կուսակցության առանձին անդամների ոպորտունիստական տրամադրություններին։

Ընկեր Ստալինն աքսորավայրից նամակ է գրում Լենինին (1915 թ.), հանդես է գալիս աքսորական բոլշևիկների ժողովում Մոնաստիրսկոյե գյուղում (1915 թ.) և խայտառակում է Կամենևի վախկոտ ու դավաճանական վարքը IV Պետական դումայի բոլշևիկ դեպուտատների նկատմամբ կայացած դատավարության ժամանակ։ Աքսորական բոլշևիկների խմբի հետ միասին վողջունելով լեգալ բոլշևիկյան «Вопросы страхования» ժուռնալը, ընկեր Ստալինը 1916 թվականին գրում եր, վոր այդ ժուռնալի խնդիրն է գործ դնել «բոլոր ճիգերն ու ջանքերը մեր յերկրի բանվոր դասակարգին պ. պ. Պոտրեսովների, Լևիցկիների ու Պլեխանովների խորապես անբարոյականացնող, հակապրոլետարական և միջազգայնության սկզբունքներին բոլորովին հակասող քարոզից գաղափարապես ապահովագրելու գործի համար»։

Իմպերիալիստական պատերազմը ցույց տվեց Ռուսաստանի տնտեսական թուլությունը, նրա տեխնիկական հետամնացությունը և ցարական կառավարության՝ պատերազմական գործողությունները ղեկավարելու լիակատար անընդունակությունը։ Չնայած ռուսական բանակի ահագին դիմացկունությանն ու հերոսությանը, նա սիստեմատիկաբար պարտություններ եր կրում։

Ժողովրդական տնտեսության կազմալուծումն ու փլուզումն ավելի ու ավելի յեր մեծանում, շատ ծանր դրության մեջ դնելով բանակը, վորտեղ զինամթերքի պակասությունը խրոնիկական դարձավ։

Այժմ արդեն վոչ միայն Լենինի—Ստալինի կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը, այլև տիրապետող դասակարգերն եյին տեսնում, վոր ցարական ռեժիմը բոլորովին սնանկացել է։

Բանվոր դասակարգի դրությունը, առանձնապես պարենավորման բնագավառում, սաստիկ վատթարացավ։ Աճում եր նրա դժգոհությունը։

Այս ամենն ուժեղ կերպով խարխլում եր ցարական ռեժիմը, այն դարձնում անկայուն։

Եվ ահա այստեղ արտահայտվեց բոլշևիկների կուսակցության բազմամյա աշխատանքը։ Այն կուսակցության, վորը ստեղծել ու սիրով աճեցրել են Լենինն ու Ստալինը։

Առաջինը վոտքի յելավ Պետրոգրադի պրոլետարիատը։ Սկսվեց Փետրվարյան հեղափոխությունը։ Փողոցներում տեղի ունեցող՝ մասսաների պայքարն անմիջականորեն բոլշևիկներն եյին ղեկավարում։

Մարտին աքսորից գալիս է ընկեր Ստալինը և վոչ միայն ըստ եյության, այլև ֆորմալ կերպով, վորպես Կենտրոնական Կոմիտեյի անդամ, կանգնում է հեղափոխությունն առաջ շարժող կուսակցության գլուխ։

Այդ ժամանակի մոտերքը յերկրում կազմավորվեց յերկիշխանություն՝ ժամանակավոր բուրժուական կառավարության կողքին գոյություն ուներ մի ուրիշ կառավարություն—Բանվորների ու Զինվորների Դեպուտատների Պետրոգրադի Խորհուրդը։

Իր գալու յերկրորդ որն ընկեր Ստալինը «Правда»-յի եջերում գրում եր.

«Հին իշխանությունը ջարդելու համար բավական եր ապստամբած բանվորների ու զինվորների ժամանակավոր

դաշինքը: Վորովհետև ինքնըստինքյան պարզ է, վոր ռուսական հեղափոխության ուժը բանվորների ու զինվորի շինել հագած գյուղացիների դաշինքն է:

Բայց նվաճած իրավունքները պահպանելու և հեղափոխությունն ավելի հեռու ծավալելու համար բնավ բավական չէ սոսկ մենակ բանվորների ու գյուղացիների ժամանակավոր դաշինքը:

Սրա համար անհրաժեշտ է այս դաշինքը գիտակից ու ամուր, յերկարատև ու կայուն դարձնել, բավականաչափ կայուն, վորպեսզի դիմադրություն ցույց տալ հակահեղափոխության պրովոկատորական արկածներին: Վորովհետև բոլորի համար պարզ է, վոր ռուսական հեղափոխության վերջնական հաղթանակի յերաշխիքը հեղափոխական բանվորի՝ հեղափոխական զինվորի հետ կնքած դաշինքի ամրապնդումն է:

Հենց այս դաշինքի որգաններն են Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդները:

Յեվ վորքան ավելի սերտորեն են համախմբված այս Խորհուրդները, վորքան ավելի ամուր են նրանք կազմակերպված, այնքան ավելի յե ներգործական նրանցում արտահայտված հեղափոխական ժողովրդի հեղափոխական իշխանությունը, այնքան ավելի յեն ռեալ յերաշխիքները հակահեղափոխության դեմ:

Ամրապնդել այս Խորհուրդները, դարձնել նրանք համատարած, կապել նրանք իրար հետ Բանվորների և Զինվորների Դեպուտատների Կենտրոնական Խորհրդի՝ վորպես ժողովրդի հեղափոխական իշխանության որգանի գլխավորությամբ,—ահա թե ինչ ուղղությամբ պետք է աշխատեն հեղափոխական սոցիալ-դեմոկրատները» [1]:

VII

Ապրիլի 3 (16)-ին Ռուսաստան յեկավ Լենինը, իսկ 7 (20)-ին հրապարակվեցին նրա Ապրիլյան թեզիսները, վորոնք հեղափոխական պայքարի հետագա խորացման լայն

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, էջ 9—10, 1938 թ.:

հեռանկարներ բաց արին: Պատմության մեջ առաջին անգամ հերթի դրվեց, վորպես գործնական խնդիր, բուրժուական հեղափոխությունից պրոլետարական հեղափոխության, սոցիալիզմի համար պայքարելուն անցնելը:

Ապրիլի 24-ին բոլշևիկների Համառուսական VII (Ապրիլյան) կոնֆերենցիան ճնշող մեծամասնությամբ հավանություն տվեց Լենինի գծին:

Այս կոնֆերենցիայում ընկեր Ստալինը մի զեկուցում տվեց ազգային հարցի շուրջը: Մերկացնելով ժամանակավոր կառավարության ու մեծապետական շովինիզմի հավերժացմանը ձգտող մենշևիկյան-եսերական համաձայնողականների թալանչիական քաղաքականությունը, նա ազգային հարցի շուրջը ծավալեց մարքսիստական-լենինյան ծրագիրը. «Ազգային հարցի վերաբերմամբ մեր տեսակետը հանգում է հետևյալ դրույթներին՝ ա) ժողովուրդների անջատման իրավունքի ճանաչում, բ) մարզային ավտոնոմիա՝ տվյալ պետության սահմաններում մնացող ժողովուրդների համար, գ) ազգային փոքրամասնությունների համար՝ նրանց ազատ զարգացումն ապահովող հատուկ օրենքներ, դ) միասնական պրոլետարական անբաժան կոլեկտիվ, միասնական կուսակցություն՝ տվյալ պետության բոլոր ազգությունների պրոլետարների համար» [1]:

Ապրիլյան կոնֆերենցիայում ընկեր Ստալինը վճռականապես պաշտպանում էր լենինյան սկզբունքները հեղափոխության բոլոր հարցերի վերաբերյալ, խիստ հակահարված հասցնելով Կամենևին, Զինովյեվին, Ռիկովին, Պյատակովին, Բուխարինին և մյուս օպորտունիստներին, վորոնք փորձում եյին կուսակցությունը հեռացնել լենինյան դիրքերից:

Ապրիլյան կոնֆերենցիան բոլշևիկյան կուսակցության առջև դրեց հսկայական կարևորություն ունեցող մի խնդիր՝ համբերությամբ, սիստեմատիկորեն, յեռանդագին պարզաբանել մասսաներին ժամանակավոր կառավարության իմպերիալիստական բնույթը, մերկացնել եսերների ու մեն-

[1] Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, հատընտիր հոդվածների և ճառերի ժողովածու, Հայ. հրատ., էջ 81, 1938 թ.:

չևիկների դավաճանական տակտիկան, ապացուցելով մասսաներին, նրանց սեփական պայքարի փորձի վրա, վոր առանց խորհուրդների իշխանություն հաստատելու ժողովուրդը չի կարող ստանալ վոչ հաշտություն, վոչ հող և վոչ ել հաց:

Բոլշևիկյան ագիտացիան բանում եր բանվորների ու զինվորների աչքը, ոգնում եր նրանց գլուխ հանել տեղի ունեցող դեպքերից և ըմբռնել իրենց վերաբերմունքը պատերազմի ու նրա իսկական վոգեշնչողների հանդեպ:

1917 *թ. ապրիլին, մայիսին ու հունիսին տեղի ունեցած դեմոնստրացիաները, վորոնք ուղղված եյին պատերազմի դեմ, արտահայտում եյին դժգոհություն ժամանակավոր կառավարության քաղաքականությունից: Բոլշևիկների կուսակցությունը գլխավորում եր մասսաների այդ շարժումը, տալով նրան գիտակցական, կազմակերպված բնույթ:*

Հունիսյան դեմոնստրացիայից առաջ մեր կուսակցության Պետրոգրադի կոմիտեն հրապարակեց հետևյալ թռուցիկը, վորը գրել եր ընկեր Ստալինը.

«Թող վաղվա որը (հունիսի 18*-ը), խաղաղ դեմոնստրացիայի որը, դառնա հեղափոխական Պետրոգրադի՝ վերածնվող ճնշման ու կամայականության դեմ ուղղած ահե՛ղ բողոքի որ:*

Թող փողփողան վաղը հաղթական դրոշակներն ի սարսա՛փ ազատության ու սոցիալիզմի թշնամիների:

Թող ձեր գոչը, հեղափոխության մարտիկների գոչը, թնդի—անցնի ամբողջ աշխա՛րհը հուրախություն բոլոր ճնշվածների ու ստրկացածների:

Այնտեղ, Արևմուտքում, պատերազմող յերկրներում, արդեն բացվում ե նոր կյանքի արշալույսը, բանվորական մեծ հեղափոխության արշալույսը: Թող իմանան վաղը ձեր յեղբայրներն Արևմուտքում, վոր դուք ձեր դրոշակների վրա նրանց համար տանում եք վոչ թե պատերազմ, այլ խաղաղություն, վոչ թե ստրկացում, այլ ազատագրո՛ւմ:

Բանվորնե՛ր: Զինվորնե՛ր: Իրար յեղբայրական ձեռք տվեք և—առա՛ջ սոցիալիզմի դրոշակի տակ:

Ամենքդ դեպի փողոց, ընկերնե՛ր:

Սեղմ ողակով համախմբվեցեք ձեր դրոշակների շո՛ւրջը:

Գեղաշա՛ր շարքերով քայլեցեք մայրաքաղաքի փողոցներով:

Հանգիստ ու վստահորեն հայտարարեցեք ձեր ցանկությունների մասին.

Կորչի՛ հակահեղափոխությունը:

Կորչի՛ ցարական Դուման:

Կորչի՛ Պետական Խորհուրդը:

Կորչե՛ն տասը մինիստր-կապիտալիստները:

Ամբո՛ղջ իշխանությունը Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Դեպուտատների Խորհուրդներին»[1]:

Հունիսյան դեմոնստրացիան անցավ բոլշևիկյան լոզունգների տակ, վոր այս թռուցիկում ձևակերպել եր ընկեր Ստալինը:

Կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց զինվորների մեջ ճակատում ու թիկունքում: Ստեղծվեցին կուսակցության զինվորական կազմակերպություններ կենտրոնին կից և խոշոր շատ քաղաքներում: Կազմակերպվեցին հատուկ լրագրեր՝ «Солдатская правда» *և* «Окопная правда»*: Նրանք գիտակցականություն ու կազմակերպվածություն եյին մտցնում զինվորական մասսաների պայքարում:*

Ընկեր Ստալինը շատ ուշադրություն եր հատկացնում այս լրագրերին վոչ միայն ընդհանուր ուղղության իմաստով, այլև նրանց մեջ ունեցած անմիջական մասնակցությամբ: Առանձնապես նա շատ եր գրում «Солдатская правда»*-յում:*

Բոլշևիկյան լրագրերի ժողովրդականությունը ճակատում և թիկունքում շատ մեծ եր: Զինվորական մասսաներն արագորեն ազատագրվում եյին պաշտպանողական պատրանքներից:

Ավելի դժվար եր բոլշևիկների համար աշխատանք տանել ազգային զորամասերում: Այստեղ նրանք հարկադրված եյին հանդես գալ վոչ միայն մեծապետական շովինիզմի դեմ, այլև տեղական նացիոնալիզմի դեմ, վոր հատուկ բոլշևիկյան գիծ եր պահանջում ազգային հարցում:

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, եջ 154:

Ընկեր Ստալինն այս գիծը զարգացրեց 1917 թ. հունիսին կայացած՝ կուսակցության զինվորական կազմակերպությունների Համառուսական կոնֆերենցիայում տված իր զեկուցման մեջ: Այն բանաձևում, որն ընդունեց կոնֆերենցիան ընկեր Ստալինի առաջարկով և որը հիմք ծառայեց ազգային զորամասերում կուսակցության տանելիք հետագա աշխատանքի համար, ասված է.

«Կոնֆերենցիան հաստատ համոզված է, որ ազգերի ինքնորոշման իրավունքի վճռական ու անդառնալի ճանաչումը, ճանաչում իրականում և ոչ թե խոսքով միայն, կարող էր ամրապնդել յեղբայրական վստահությունը Ռուսաստանի ժողովուրդների միջև և դրանով ճանապարհ բանալ նրանց իրական միավորման համար, կամավոր միավորման և ոչ թե բռնի միավորման համար, որպես մեկ պետական ամբողջություն»[1]:

Ժամանակավոր կառավարությունը մենշևիկների ու էսէռների աջակցությամբ շարունակում էր մղել իմպերիալիստական պատերազմը: Նա զինվորներին քշեց դեպի հարձակում, հույս ունենալով, ինչ տեսակ յելք էլ լինի, այդ ավանտյուրայով հաջողեցնել բուրժուազիայի միիշխանություն հաստատել:

Խոսակցությունները հարձակում նախապատրաստելու մասին, ճակատում մահապատիժ մտցնելը, Պետրոգրադը հեղափոխական բանվորներից ու զինվորներից բեռնաթափելու մասին և այլն—այս բոլոր միջոցառումները, ուղղված հակահեղափոխական ժամանակավոր կառավարությունն ամրապնդելու համար, բանվորներին ու զինվորներին նորից փողոց հանեցին: Հարյուր-հազարավոր դեմոնստրանտներ հուլիսյան օրերին ուղղվեցին դեպի Պետրոգրադի Խորհուրդը և Խորհուրդների Համառուս. Կենտգործկոմ, պահանջելով իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, դադարեցնել իմպերիալիստական պատերազմը:

Աշխատավոր մասսաները պարզ տեսնում էին, որ բուրժուազիան և նրա հետ միասին մենշևիկներն ու էսէռ-

[1] ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, մ. I, էջ 251:

ները ձգտում են ցարական գեներալների օգնությամբ հեղափոխությունը լիկվիդացիայի յենթարկել: Բոլշևիկները հեղափոխական մասսաների առջև ուղղակի և կտրուկ կերպով հարց դրին՝ կամ հակահեղափոխության լիակատար հաղթություն, կամ նոր հեղափոխություն:

Պետրոգրադում տեղի ունեցած հուլիսի 3—5-ի բանվորական ու զինվորական դեմոնստրացիան գնդակահարվեց: Բոլշևիկների կուսակցությունն ըստ էության օրենքից դուրս հայտարարվեց: Երկիշխանության ժամանակաշրջանը վերջացավ:

Հուլիսի 26-ից—օգոստոսի 3-ը կայացավ բոլշևիկյան կուսակցության VI համագումարը: Այն անցնում էր անլեգալ կերպով: Լենինը չկար համագումարում: Հետապնդվելով Կերենսկու կառավարության կողմից, նա ստիպված էր թաքնվել ընդհատակում: Համագումարն անմիջականորեն ղեկավարում էր ընկեր Ստալինը լենինյան դիրեկտիվների հիման վրա:

Կուսակցության VI համագումարը հսկայական պատմական նշանակություն ունի: Նա կուսակցության գործունեությունն ուղղեց զինված ապստամբությունը գործնականորեն նախապատրաստելու հունի մեջ: Համագումարի ուշադրության կենտրոնում էին ընկեր Ստալինի յերկու զեկուցումները՝ Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը և զեկուցում քաղաքական դրության մասին:

«Նախքան Կենտկոմի վերջին 2½ ամսում կատարած քաղաքական գործունեության վերաբերյալ զեկուցումն անցնելը,—ասում էր ընկեր Ստալինը,—յես հարկավոր եմ համարում նշել Կենտկոմի գործունեությունը բնորոշող հիմնական փաստը: Յես նկատի ունեմ մեր հեղափոխության զարգացման փաստը, հեղափոխություն, որը հարց է դնում տնտեսական հարաբերությունների բնագավառին՝ արտադրության վրա կոնտրոլ հաստատելու ձևով՝ միջամտելու մասին, հողը գյուղացիության ձեռքը հանձնելու մասին, իշխանությունը բուրժուազիայի ձեռքից Բ. և Զ. Դ. Խորհուրդների ձեռքը հանձնելու մասին: Այս ամենը բնորոշում է մեր հեղափոխության խոր բնույթը: Այն սկսեց

տանալ սոցիալիստական, բանվորական հեղափոխության բնույթ» [1]:

Քաղաքական դրության վերաբերյալ զեկուցման մեջ ընկեր Ստալինը զարգացրեց կուսակցության տակտիկայի հարցերը հուլիսի 3—5-ից հետո յերկրում փոխված քաղաքական իրադրության կապակցությամբ: Երկիշխանության վախճանը, հրաման Լենինին ձերբակալելու մասին և բացառիկ օրենքներ բոլշևիկների դեմ, Պետրոգրադի կայազորի հեղափոխական զորամասերի լուծումն ու Կարմիր գվարդիայի ցրումը—այս ամենը խոսում եր այն մասին, վոր հեղափոխության խաղաղ զարգացումն ավարտվել ե:

«Մինչև հուլիսի (16) 3-ը,—ասում ե ընկեր Ստալինը,—հնարավոր եր խաղաղ հաղթանակը, իշխանության խաղաղ անցումը Խորհուրդներին: Եթե Խորհուրդների համագումարը վորոշեր իշխանությունն իր ձեռքը վերցնել, կադետները, յես կարծում եմ, չեյին համարձակվի բացահայտորեն հանդես գալ Խորհուրդների դեմ, վորովհետև այսպիսի հանդես գալը նախապես դատապարտված կլիներ կործանման: Բայց այժմ, այն բանից հետո, ինչ հակահեղափոխությունը կազմակերպվել ու ամրապնդվել ե, ասել, թե Խորհուրդները կարող են խաղաղ ճանապարհով իշխանությունն իրենց ձեռքը վերցնել,—կնշանակի՝ դատարկ տեղը խոսել: Հեղափոխության խաղաղ ժամանակաշրջանն ավարտվել ե, հասել ե վոչ-խաղաղ ժամանակաշրջանը, գոտեմարտերի ու պայթյունների ժամանակաշրջանը...» [2]:

Կուսակցության VI համագումարում ընկեր Ստալինը վճռական հակահարված հասցրեց Պրեոբրաժենսկու տրոցկիստական արտելքին՝ Ռուսաստանում սոցիալիզմի հաղթության անհնարինության մասին առանց Արևմուտքում լինելիք պրոլետարական հեղափոխության: «Բացառված չե այն հնարավորությունը,—մատնանշում եր այն ժամանակ ընկեր Ստալինը,—թե հենց Ռուսաստանը կհանդիսանա այն յերկիրը, վորը ճանապարհ ե հարթում դեպի սոցիալիզմ: Մինչև այժմ վոչ մի յերկիր չի ոգտվել այնպիսի ազատություննից, ինչպիսին եր Ռուսաստանում, չի փորձել իրականացնել բանվորների կոնտրոլն արտադրության վրա: Բացի այդ, մեր հեղափոխության բազան ավելի լայն ե, քան Արևմտյան Եվրոպայում, վորտեղ պրոլետարիատը յերես առ յերես կանգնած ե բուրժուազիայի դեմ կատարյալ մենակության մեջ: Մեզ մոտ բանվորներին պաշտպանում են գյուղացիության չքավորագույն խավերը... Պետք ե դեն գցել հնացած հասկացողությունն այն մասին, թե միայն Եվրոպան կարող ե մեզ ուղի ցույց տալ: Գոյություն ունի դոգմատիկ մարքսիզմ և ստեղծագործող մարքսիզմ: Ես կանգնած եմ վերջինի հողի վրա»[1]:

Այս համագումարում հանդես յեկած Բուխարինն իր հերթին զարգացրեց տրոցկիստական հայացքները և պնդում եր, վոր գյուղացիները պաշտպանողականորեն են տրամադրված, բլոկ են կազմել բուրժուազիայի հետ և յերբեք չեն գնա բանվոր դասակարգի հետևից:

Վճռական հակահարված տալով այս հայացքներին, ընկեր Ստալինն ասում եր, վոր զանազան տեսակի գյուղացիներ են լինում. կան ունևոր գյուղացիներ, վորոնք իրոք պաշտպանում են իմպերիալիստական բուրժուազիային և վորոնք բաներ կկորցնեն սոցիալիստական հեղափոխության մեջ, և կա գյուղացիական չքավորություն, վորը դաշնակցած գնում ե բանվոր դասակարգի հետ ու պաշտպանում նրան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղած պայքարում:

Համագումարը մերժեց Պրեոբրաժենսկու, Բուխարինի ու մյուս ոպորտունիստների բոլոր ուղղումները և հաստատեց ընկեր Ստալինի բանաձևը:

Այսպիսով, կենսագործելով Լենինի ցուցումները, ընկեր Ստալինը կուսակցության համագումարը համախմբեց հիմնական խնդրի—բուրժուական կառավարությունը տապալելու և բանվորների ու չքավորագույն գյուղացիների իշխանություն հաստատելու շուրջը:

Բուրժուական հակահեղափոխությունը, վոր աճում եր մենշևիկների ու եսերների հովանավորության տակ, ավելի

[1] Протоколы шестого съезда РСДРП(б), եջ 14—15, 1934 թ.:
[2] Նույն տեղում, եջ 111:

[1] Протоколы шестого съезда РСДРП(б), եջ 233—234:

ու ավելի յեր լկտիանում: Սակայն աճում եյին նաև հեղափոխության ուժերը:

Հեղափոխական մթնոլորտը յերկրում ավելի ու ավելի յեր շիկանում: Բանվորների և զինվորների դեպուտատների Պետրոգրադի ու Մոսկվայի Խորհուրդները բոլշևիկանում եյին:

«... Հեղափոխությունը չի մեռել,—գրում եր ընկեր Ստալինը բոլոր աշխատավորներին, Պետրոգրադի բոլոր բանվորներին ու զինվորներին ուղղած դիմումի մեջ,—այն միայն թաքնվել ե, վորպեսզի, նոր կողմնակիցներ հավաքելով, նոր ուժով նետվի թշնամիների վրա...

Դարձյա՛լ ճակատամարտեր կլինեն:

Դարձյա՛լ հաղթանակներ կլինեն:

Ամբողջ բանն այն ե, վոր արժանավոր կերպով ու կազմակերպվածորեն դիմավորենք գալիք ճակատամարտերին:

Բանվորնե՛ր: Ձեզ ե բաժին ընկել ռուսական հեղափոխության առաջնորդների պատվավոր դերը: Համախմբեցեք մասսաներին ձեր շուրջը և ժողովեցեք նրանց մեր կուսակցության դրոշակի տակ: Հիշեցեք, վոր հուլիսյան որերի ծանր րոպեներին, յերբ ժողովրդի թշնամիները կրակում եյին հեղափոխության վրա, բոլշևիկների կուսակցությունը միակն եր, վորը չլքեց բանվորական թաղամասերը: Հիշեցեք, վոր այն ծանր որերին մենշևիկներն ու եսերները նրանց բանակումն եյին, ովքեր ջարդում ու զինաթափ եյին անում բանվորներին:

Մեր դրոշակի տակ, ընկերնե՛ր:

Գյուղացինե՛ր: Ձեր առաջնորդները չարդարացրին ձեր հույսերը: Նրանք քարշ են յեկել հակահեղափոխության հետևից, իսկ դուք մնում եք առանց հողի, վորովհետև քանի հակահեղափոխությունն ե իշխում, դուք չեք ստանա կալվածատիրական հողերը: Բանվորները—ահա ձեր միակ հավատարիմ դաշնակիցները: Միայն նրանց հետ դաշնակցելով հող և ազատություն ձեռք կբերեք: Համախմբվեցեք ուրեմն բանվորների շո՛ւրջը:

Զինվորնե՛ր: Հեղափոխության ուժը ժողովրդի ու զինվորների դաշինքն ե: Մինիստրները գալիս են ու գնում, իսկ

ժողովուրդը մնում ե: Ուրեմն միշտ յեղեք ժողովրդի հետ ու պայքարեցե՛ք նրա շարքերում»[1]:

Բոլշևիկների կուսակցությունը համախմբում եր բանվորական ու գյուղացիական մասսաներին, ուղղություն եր տալիս նրանց հեղափոխությունը խորացնելու համար, սիստեմատիկորեն մերկացնելով հակահեղափոխության մտադրություններն ու գործողությունները:

«Մոսկվայի խորհրդակցության դեմ» հոդվածում ընկեր Ստալինը պարզաբանում եր, թե ինչ ե ուզում ձեռք բերել բուրժուազիան այս խորհրդակցության գումարումով: «Խորհրդակցություն գումարել վաճառականներից ու արդյունաբերողներից, կալվածատերերից ու բանկիրներից, ցարական Դումայի անդամներից և արդեն ձեռնասուն դարձած մենշևիկներից ու եսերներից այն նպատակով, վոր, այս խորհրդակցությունը «համազգային ժողով» հայտարարելով, նրանից հավանություն ձեռք բերի իմպերիալիզմի ու հակահեղափոխության, պատերազմի ծանրությունները բանվորների ու գյուղացիների ուսերի վրա գցելու քաղաքականության նկատմամբ,—ահա թե վորտեղ ե «յելքը» հակահեղափոխության համար...

Դժվար չե հասկանալ, վոր այսպիսի պայմաններում ոգոստոսի 12-ին Մոսկվայում գումարվելիք խորհրդակցությունն անխուսափելիորեն կփոխարկվի հակահեղափոխության դավադրության որգանի՝ ուղղված բանվորների դեմ, վորոնց սպառնում են լոկաուտներով ու գործազրկությամբ, ուղղված գյուղացիների դեմ, վորոնց հող «չեն տալիս», ուղղված զինվորների դեմ, վորոնց զրկում են հեղափոխության որերին նվաճած ազատությունից, կփոխարկվի այս խորհրդակցությունը պաշտպանող եսերների ու մենշևիկների «սոցիալիստական ֆրազներով» քողարկված դավադրության որգանի:

Ուստի և առաջավոր բանվորների խնդիրն ե՝

1) Պատռել խորհրդակցության ժողովրդական ներկայացուցչության դիմակը, լույս աշխարհ հանելով նրա հակահեղափոխական, հակաժողովրդական եյությունը:

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, եջ 200:

2) Մերկացնել մենշևիկներին ու եսեռներին, վորոնք այս խորհրդակցությունը քողարկում են «հեղափոխությունը փրկելու» դրոշով և Ռուսաստանի ժողովուրդներին խաբեյության մեջ գցում:

3) Կազմակերպել բողոքի մասսայական միտինգներ կալվածատերերի ու կապիտալիստների շահույթները... «փրկողների» այս հակահեղափոխական մեքենայության դեմ:

Թող իմանան հեղափոխության թշնամիները, վոր բանվորները չեն յենթարկվի խաբեյության, վոր նրանք ձեռքից բաց չեն թողնի հեղափոխության մարտական դրոշակը»[1]:

Յեվ իրոք, Մոսկվայի պրոլետարները կուսակցության կոչին պատասխանեցին բողոքի ընդհանուր գործադուլով, վորին մասնակցեցին 400 հազարից ավելի մարդ:

«Մոսկվան գործադուլ ե անում: Կեցցե՛ Մոսկվան»— գրում եր այն որերին ընկեր Ստալինը:

Մոսկվայի խորհրդակցության կուլիսների հետևը, Կերենսկու մասնակցությամբ, Ծերեթելու գիտությամբ և մենշևիկների ու եսեռների աջակցությամբ նախապատրաստվում եր կոռնիլովյան խռովությունը, վորը սպառնում եր Ռուսաստանը հեղեղել բանվորների ու գյուղացիների արյունով: Այս կրիտիկական որերին կուսակցությունն իր բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկեց հակահեղափոխությանը հակահարված հասցնելու համար:

«Մենք պահանջում ենք» հոդվածում ընկեր Ստալինը գրում եր. «Կոալիցիոն կառավարության և Կոռնիլովի կուսակցության միջև այժմ տեղի ունեցող պայքարում վոչ թե հեղափոխությունն ու հակահեղափոխությունն են հանդես գալիս, այլ հակահեղափոխական քաղաքականության յերկու տարբեր մեթոդները, ընդորում Կոռնիլովի կուսակցությունը, հեղափոխության ամենաչարամիտ թշնամին, կանգ չի առնում այն բանի առջև, վոր հանձնելով Ռիգան, արշավանք սկսի Պետրոգրադի դեմ, վորպեսզի պայմաններ նախապատրաստի հին ռեժիմը վերականգնելու համար»[2]:

---

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, եջ 253, 254:

[2] Նույն տեղում, եջ 305:

Կուսակցությունը պահանջում ե.

«1) Անհապաղ հեռացնել թիկունքում և ճակատում գտնվող հակահեղափոխական գեներալներին, նրանց փոխարինել զինվորներից ու սպաներից ընտրված անձերով և, առհասարակ, վարից-վեր անցկացնել բանակի լիակատար դեմոկրատացում:

2) Վերականգնել զինվորների հեղափոխական կազմակերպությունները, վորոնք միայն ընդունակ են դեմոկրատական կարգապահություն հաստատելու բանակում:

3) Վերացնել բոլոր և ամեն տեսակի ռեպրեսիաները, և առաջին հերթին մահապատիժը:

4) Անհապաղ հանձնել բոլոր կալվածատիրական հողերը գյուղացիական կոմիտեների տնորինությանը, ապահովելով չքավորագույն գյուղացիներին ինվենտարով:

5) Որենսդրական կարգով սահմանել 8-ժամյա աշխատանքային որ և կազմակերպել դեմոկրատական կոնտրոլ ֆաբրիկաների, գործարանների, բանկերի վրա՝ բանվորների կողմից առաջադրված ներկայացուցիչների գերակշռությամբ:

6) Լիակատար կերպով դեմոկրատացնել ֆինանսական տնտեսությունը, և առաջին հերթին—անխնայաբար հարկել կապիտալներն ու դույքերը և բռնագրավել ռազմական խայտառակ շահույթները:

7) Կազմակերպել կանոնավոր փոխանակություն քաղաքի և գյուղի միջև այն պայմանով, վոր քաղաքը ստանա հարկավոր մթերքներ, իսկ գյուղն՝ անհրաժեշտ ապրանքներ:

8) Անհապաղ հռչակել Ռուսաստանի ժողովուրդների ինքնորոշման իրավունք:

9) Վերականգնել ազատությունները, դեկրետագրել դեմոկրատական հանրապետություն և անհապաղ գումարել Սահմանադիր Ժողով:

10) Վերացնել դաշնակիցների հետ կապված գաղտնի պայմանագրերը և առաջարկել ընդհանուր դեմոկրատական հաշտության պայմաններ:

Կուսակցությունը հայտարարում ե, վոր առանց այս պահանջներն իրականացնելու հնարավոր չե հեղափոխու–

թյունը փրկել, վորը կես տարի յե, ինչ շնչասպառ ե լինում պատերազմի ու ընդհանուր փլուզման ճիրաններում:

Կուսակցությունը հայտարարում ե, թե այս պահանջներն իրականացնելու համար անհրաժեշտ միակ ուղին այն ե, վոր խզվեն կապերը կապիտալիստների հետ, լիովին լիկվիդացիայի յենթարկվի բուրժուական հակա-հեղափոխությունը և յերկրում իշխանությունն անցնի հեղափոխական բանվորների, գյուղացիների ու զինվորների ձեռքը:

Այս ե միակ յելքը, վորը կարող ե յերկիրն ու հեղափոխությունը փրկել կրախից»[1]:

Կոռնիլովշչինայի փորձի վրա աշխատավորների լայն մասսաները համոզվեցին, վոր բոլշևիկներն իրավացի յեն, նրանք տեսան, վոր հեղափոխությունը փրկել կարող ե կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը վոչընչացնելու համար մղելիք պայքարը միայն, պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու համար մղելիք պայքարը: Հակահեղափոխության հարձակումը վոտքի հանեց ու շարժման մեջ դրեց ամբողջ բանվոր դասակարգին, բոլոր աշխատավորներին:

Բոլշևիկների կուսակցությունը բանվորներին, զինվորներին ու չքավորագույն գյուղացիությանը յեռանդով պատրաստում եր զինված ապստամբության համար: Լենինն ասում եր, վոր, մեծամասնություն ստանալով Պետրոգրադի ու Մոսկվայի Խորհուրդներում, բոլշևիկները կարող են և պետք ե վերցնեն պետական իշխանությունը:

Հոկտեմբերի 10 (23)-ին, Լենինի մասնակցությամբ, կայացավ կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պատմական նիստը, վորտեղ վորոշվեց մերձավորագույն որերում զինված ապստամբություն սկսել:

Հոկտեմբերի 16 (29)-ին զինված ապստամբության հարցը քննարկվում եր կուսակցության Կենտկոմի ընդլայնած նիստում՝ Պետրոգրադի կոմիտեյի գործադիր հանձնաժողովի, Պետրոգրադի Խորհրդի բոլշևիկյան Ֆրակցիայի, զինվորական կազմակերպության, արհմիությունների,

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, եջ 305—306:

ֆաբզավկոմների ֆրակցիաների և կուսակցության Պետրոգրադի օկրուգային կոմիտեյի հետ համատեղ:

Այս յերկու նիստերում զինված ապստամբության դեմ դուրս յեկան Կամենևն ու Զինովյևը:

Ընկեր Ստալինը, պաշտպանելով Լենինի առաջարկները, ասում եր. «Այն, ինչ առաջարկում են Կամենևն ու Զինովյևը, օբյեկտիվորեն հասցնում ե դեպի կազմակերպվելու հնարավորություն հակա-հեղափոխության համար: Մենք անվերջ կնահանջենք և տանուլ կտանք ամբողջ հեղափոխությունը... Այստեղ յերկու գիծ կա. մի գիծը բռնել ե հեղափոխության հաղթության ուղղությունը և նայում ե Յեվրոպային, յերկրորդը—չի հավատում հեղափոխությանը և վորոշում ե միայն օպոզիցիա լինել: Պետրոգրադի Խորհուրդն արդեն կանգնել ե ապստամբության ուղու վրա, մերժելով հաստատել զորքերի դուրսհանումը: Նավատորմն արդեն ապստամբել ե, քանի վոր Կերենսկուն դեմ ե գնացել»[1]:

Կուսակցության Կենտկոմի հոկտեմբերի 16 (29)-ի գործնական նիստում ստեղծվեց ապստամբությունը ղեկավարելու Կուսակցական կենտրոն ընկեր Ստալինի գլխավորությամբ: Կուսակցական կենտրոնը հանդիսանում եր ռազմա-հեղափոխական կոմիտեյի միջուկը և գործնականորեն ղեկավարում եր ապստամբությունը:

Զինված ապստամբության նախորյակին, հոկտեմբերի 24-ին (նոյեմբերի 6), այն որը, յերբ Կենտկոմի անդամներին ուղղած նամակում Լենինը գրում եր՝ «Յելույթն ուշացնելը մահվան ե հավասար», ընկեր Ստալինը «Рабочий путь» լրագրի առաջնորդող հոդվածում մի ջերմ կոչով դիմեց աշխատավորներին. «Հասել ե մոմենտը, յերբ հետագա ուշացնելը սպառնում ե կործանել հեղափոխության ամբողջ գործը:

Հարկավոր ե կալվածատերերի ու կապիտալիստների այժմյան կառավարությունը փոխարինել բանվորների ու գյուղացիների նոր կառավարությամբ...

Իշխանությունը պետք ե անցնի Բանվորների, Զինվորների ու Գյուղացիների Դեպուտատների Խորհուրդների ձեռքը:

[1] Сталин, На путях к Октябрю, եջ 211, յերկրորդ հրատ., 1925 թ.:

Իշխանության գլուխ պետք է կանգնի նոր կառավարություն, որն ընտրվում է Խորհուրդների կողմից, որը փոխվում է Խորհուրդների կողմից, որը պատասխանատու է Խորհուրդների առջև»[1]:

Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) զինված բանվորներն ու զինվորները Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ տապալեցին հակահեղափոխական ժամանակավոր կառավարությունը:

Բանվորների ու զինվորների դեպուտատների Պետրոգրադի Խորհրդին կից ռազմա-հեղափոխական կոմիտեն պաշտոնապես հայտարարեց Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին, որ պետական իշխանությունն անցել է իր ձեռքը որպես մի օրգանի, որը Պետրոգրադի պրոլետարիատի ու կայազորի գլուխ է կանգնած, որ «այն գործը, որի համար պայքարում էր ժողովուրդը՝ դեմոկրատական հաշտության անհապաղ առաջարկ, հողի կալվածատիրական սեփականության վերացում, բանվորական վերահսկողություն արտադրության վրա, խորհրդային կառավարության ստեղծում—այս գործն ապահովված է»[2]:

Այդ նույն օրը բանվորների ու զինվորների դեպուտատների Պետրոգրադի Խորհրդի նիստում հանդես եկավ Վլադիմիր Իլյիչը և ասաց. «Ընկերնե՛ր: Բանվորական ու գյուղացիական հեղափոխությունը, որի անհրաժեշտության մասին շարունակ խոսում էին բոլշևիկները, կատարվեց:

Ի՞նչ նշանակություն ունի բանվորական ու գյուղացիական այս հեղափոխությունը: Ամենից առաջ, այս հեղաշրջման նշանակությունն այն է, որ մեզ մոտ կլինի Խորհրդային կառավարություն, իշխանության մեր սեփական օրգանը, առանց բուրժուազիայի որևէ մասնակցության: Ճնշված մասսաներն իրենք կստեղծեն իշխանություն: Արմատապես կջախջախվի հին պետական ապարատը, և կստեղծվի կառավարման նոր ապարատ հանձինս խորհրդային կազմակերպությունների:

---

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, էջ 492—493:

[2] Նույն տեղում, էջ 494:

Այսուհետև նոր ժամանակաշրջան է գալիս Ռուսաստանի պատմության մեջ, և տվյալ յերրորդ ռուսական հեղափոխությունն իր վերջնական հանրագումարում պետք է հասցնի սոցիալիզմի հաղթանակին:

Մեր հերթական խնդիրներից մեկն է պատերազմն անհապաղ վերջացնելու անհրաժեշտությունը: Բայց որպեսզի վերջացնենք այս պատերազմը, որը սերտորեն կապված է այժմյան կապիտալիստական հասարակարգի հետ,—պարզ է բոլորին, որ դրա համար անհրաժեշտ է հենց կապիտալը հաղթահարել»[1]:

Նույն օրվա յերեկոյան բացվեց Խորհուրդների II համառուսական համագումարը և ձայների ճնշող մեծամասնությամբ մի կոչ ընդունեց իշխանությունը Խորհուրդներին անցնելու մասին. «Հենվելով բանվորների, զինվորների և գյուղացիների հսկայական մեծամասնության կամքի վրա, հենվելով Պետրոգրադում տեղի ունեցած բանվորների ու կայազորի հաղթական ապստամբության վրա, համագումարն իր ձեռքն է վերցնում իշխանությունը»[2]:

Կազմվեց առաջին Խորհրդային կառավարությունը Լենինի գլխավորությամբ և ընկեր Ստալինի մասնակցությամբ՝ որպես ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար:

Ինչո՞վ բացատրել, որ կուսակցությունը, չնայած այն բոլոր դժվարություններին, որոնց մեջ նա իրեն պարզ հաշիվ էր տալիս, չնայած Կենտկոմի յերկու անդամի՝ Կամենևի ու Զինովևի խուճապային վայնասունին և ուղղակի դավաճանությանը, այնքան միահամուռ կերպով պաշտպանեց Լենինին ու Ստալինին զինված ապստամբությունը նախապատրաստելիս և կիրառելիս:

Այդ կարելի յե բացատրել նրանով, որ Լենինը կուսակցությանն անդադրում պատրաստում էր սոցիալիստական հեղափոխության համար: Նրանով, որ Լենինը կուսակցության ամբողջ պատմության ընթացքում այն պատրաստում էր զինված ապստամբության համար: Նրանով,

---

[1] Ленин и Сталин, Избранные произведения 1917 года, էջ 497:

[2] Նույն տեղում, էջ 499:

որ ընկեր Ստալինն իր ամբողջ հեղափոխական գործունեության ընթացքում գործնական աշխատանքով, ագիտացիայով ու պրոպագանդայով կուսակցության անդամների մտքերում այն համոզմունքն էր ամրապնդում, որ հաղթական զինված ապստամբությունը միայն կարող է պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը հասցնել: Վերջապես, նրանով, որ զինված ապստամբության լոզունգը, լինելով կուսակցության ամենից ավելի հաստատուն լոզունգը նրա մղած ամբողջ ագիտացիայում և պրոպագանդայում, մասսաների ամուր սեփականությունը դարձավ:

Այսպես ուրեմն, մի հայացք գցելով Հոկտեմբերյան զինված ապստամբությունը նախապատրաստելու և կիրառելու ուղղությամբ ընկեր Ստալինի ցուցաբերած ամբողջ գործունեության վրա, կարելի յե ասել, որ այդ այն ժամանակաշրջանն էր, յերբ նա, արտահայտվելով իր խոսքերով, հեղափոխության վարպետ դարձավ:

«Վերջապես,—պատմում է ընկեր Ստալինը,—յես հիշում եմ 1917 թիվը, յերբ յես կուսակցության կամքով, բանտերում ու աքսորավայրերում թափառելուց հետո, փոխադրվեցի Լենինգրադ: Այնտեղ, ռուս բանվորների շրջանում, բոլոր յերկրների պրոլետարների մեծ ուսուցչի—ընկ. Լենինի հետ ունեցածս անմիջական մոտիկության ժամանակ, պրոլետարիատի ու բուրժուազիայի մեծ գոտեմարտերի փոթորկում, իմպերիալիստական պատերազմի իրադրության մեջ, յես առաջին անգամ սովորեցի ըմբռնել, թե ինչ է նշանակում բանվոր դասակարգի մեծ կուսակցության ղեկավարներից մեկը լինել: Այնտեղ, ռուս բանվորների—ճնշված ժողովուրդների ազատարարների ու բոլոր յերկրների և ժողովուրդների պրոլետարական պայքարի նախամարտիկների շրջանում, յես իմ յերրորդ մարտական հեղափոխական մկրտությունը ստացա: Այնտեղ, Ռուսաստանում, Լենինի ղեկավարությամբ, յես հեղափոխության վարպետներից մեկը դարձա»[1]:

---

[1] Ընկեր Ստալինի զեկուցումը Թիֆլիսի Գլխավոր յերկաթուղային արհեստանոցների բանվորների ժողովում 1926 թ. հունիսի 8-ին («Правда» լրագիր, 1926 թ. 16 հունիսի):

VIII

Լենինն առավելագույն պարզորոշությամբ ձևակերպեց այն խնդիրները, վորոնք ծառացան կուսակցության ու պրոլետարիատի առջև իշխանության գրավումից հետո: Նա խոսում էր այն դժվարությունների մասին, վորոնք պետք էր հաղթահարել՝ այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Իմպերիալիստական պատերազմից ծայր աստիճան հյուծված յերկիրը, կազմալուծված ժողովրդական տնտեսություն ունեցող և սոված յերկիրը, բազմազգ յերկիրը, վորտեղ ցարիզմի գործադրած դարավոր ճնշման հետևանքով բնակչության համարյա կեսն ահագին անխտահությամբ էր վերաբերվում ամեն բանի, ինչ ռուսական էր, դեռ մինչև վերջը չջախջախված հակահեղափոխություն ունեցող յերկիրը, հակահեղափոխություն, վորը պատրաստ է իր հայրենիքն ամեն մի թշնամու ծախել, միայն թե տապալի բոլշևիկների իշխանությունը,—այս յերկիրը Լենինը հակադրեց ամբողջ կապիտալիստական աշխարհին:

Դրանով իսկ նա ակնառու դաս տվեց բոլոր յերկրների պրոլետարներին, թե հեղափոխական կուսակցությունն իր ինտերնացիոնալ խնդիրներն ինչպես պետք է կատարի:

Այս տիտանյան պայքարում ընկեր Ստալինը Լենինի աջ ձեռքն էր:

Լենինի ու Ստալինի առաջին քաղաքական գործողությունները այժմ ուղղված էյին դեպի այն, վոր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների գյուղացիական մասսաներին գրավեն ու ամրացնեն Խորհրդային իշխանության կողմը:

«Խաղաղություն, ագրարային հեղաշրջում և ազգությունների ազատություն,—գրում էր հետագայում ընկեր Ստալինը,—սրանք են այն յերեք հիմնական մոմենտները, վորոնք ռուսական պրոլետարիատի կարմիր դրոշի շուրջը հավաքեցին անծայրածիր Ռուսաստանի ավելի քան քսան ազգությունների գյուղացիներին»[1]:

---

[1] Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Հատընտիր հոդվածների և ճառերի ժողովածու, հայ. հրատ., էջ 139, 1938 թ.:

1917 թ. հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8)-ին Խորհուրդների II համագումարը դեկրետներ հրատարակեց հաշտության մասին և հողի մասին, գրված Լենինի կողմից։

1917 թ. նոյեմբերի 16 (3)-ին հրապարակվեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», գրված ընկեր Ստալինի կողմից։ Դեկլարացիան հռչակեց Խորհրդային իշխանության ազգային քաղաքականության հետևյալ սկզբունքները․

1․ Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենիտետը։

2․ Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետության կազմումը։

3․ Բոլոր ու ամեն տեսակի ազգային և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը։

4․ Ռուսաստանի տերիտորիայի վրա բնակվող ազգային փոքրամասնությունների ու ազգագրական խմբերի ազատ զարգացումը։

Որպես ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար ընկեր Ստալինը հետևողականորեն ու իրականում իրագործում էր ազգերի լիակատար իրավահավասարությունը, ազգային ճնշման ու անիրավահավասարության բոլոր ձևերի վոչնչացումը։

Լենինի հետ միասին դնելով Խորհրդային պետության հիմքերը և ամրապնդելով այն, ընկեր Ստալինը դրա հետ միասին հսկայական գործնական աշխատանք ծավալեց վարչական-տնտեսական գործունեության բոլոր վոլորտներում և առանձնապես այսպես կոչված ճեղքվածքային բնագավառներում։ Այս աշխատանքն այնքան բազմազան էր, վոր հնարավորություն չկա այն թվարկելու։ Միայն մի որինակ կբերեմ։ 1918 թ. ամառը, երբ հացի համար մղվող պայքարը դարձավ սոցիալիզմի համար մղվող պայքար, Լենինն ընկեր Ստալինին ուղարկեց Ցարիցին, և ահա ամենակարճ ժամանակում, անհավատալի դժվարություններ հաղթահարելով, նա սկսեց այնտեղից մեկը մյուսի հետևից մթերքներով բեռնավորված էշելոններ ուղարկել Մոսկվայի, Պետրոգրադի, Իվանովո-Վոզնեսենսկի և ուրիշ արդյունաբերական կենտրոնների համար։ Այդ ժամանակին է վերաբերում նրա չափազանց բնորոշ հեռագիրը Լենինին, Սվերդլովին, Ցյուրուպային, Ռազմական հեղափոխական խորհրդին և հաղորդակցության ճանապարհների ժողկոմին, հեռագիր, վորի մեջ վորոշ չափով արտահայտվել է աշխատանքի ստալինյան վոճը․

«Տաս միլիոն փութ հաց և տաս հազար գլուխ անասուն մթերելու ու Մոսկվա ուղարկելու համար անհրաժեշտ է առաքել ու Պարենավորման արտ. հանձնաժողովի տրամադրության տակ դնել 75 միլիոն փող, ըստ հնարավորության մանր դրամանիշներով, և 36 միլիոնի զանազան տեսակ ապրանքներ՝ յեղաններ, կացիններ, մեխ, բոլտեր, գայկաներ, լուսամուտի ապակիներ, թեյի ու ճաշի ամանեղեն, խոտհար մեքենաներ ու նրանց մասերը, գամաձողիկներ, գողի կլոր յերկաթ, հասարակ հնձիչ մեքենաներ, գլանիչներ, լուցկի, ձիու լծասարքի մասեր, կոշկեղեն, չիթ, տրիկո, կոլենկոր, կտավ, մոդեպոլամ, նանսուկ, գրխարոն, լաստիկ, սատին, շեվյոտ, մարլին մահուդ, կանացի և զինվորական, զանազան կաշիներ, կոշկեղենի ձևվածքներ, թել, գերանդիներ, ցանիչ մեքենաներ, կովկիթներ, գութաններ, պարկեր, բրեզենտներ, կրկնակոշիկներ, ներկեր, լաքեր, դարբնոցի, հյուսնոցի գործիքներ, խարտոցներ, կարբոլյան թթվուտ, սկիպիդար, սոդա։ Պարենավորման արտ. հանձնաժողովն ունի ընդամենը 15 միլիոն փող և 10 միլիոնի զանազան տեսակ ապրանքներ։ Փողն ու վերոհիշյալ ապրանքները պետք է ուղարկել անհապաղ։ Թող Տրոցկին հեռագրական կարգադրություններ տա ճակատի ջոկատների բոլոր պետերին ու Սնեսարևի շտաբին չգրավել պարենային բեռներն ու մանուֆակտուրան, անարգել ճանապարհ տալ մեր մարշրուտային գնացքներին, ցույց տալ աջակցություն մեր պարենավորման կոմիտեներին։ Պատճենը Ստալինին։ Թող ԿենտԳործԿոմն անհապաղ հեռագրով պարտավորեցնի Կուբանի, Տերեկի, Ստավրոպոլի խորհուրդներին չխախտել հաստատուն գները, չնպաստել առանձին նահանգների, գավառների ու վոլոստների կողմից կատարվող ինքնուրույն մթերումներին ու արտահանելուն, այլ ամեն կերպ

աջակցել Ստալինի ու Պարենավորման արտ. հանձնաժողովի գործակալներին: Պատճենը Ստալինին: Թող Կորոզեվն ու Նեվսկին անհապաղ հեռագրով պարտավորեցնեն Ռուսաստանի հարավի բոլոր գծերի յերկաթուղային գործակալներին խիստ պատասխանատվության տակ չընդունել այն հացի բեռները, վորոնք չեն հասցեագրված Պարենավորման արտ. հանձնաժողովի ու Պարենկոմի անունով, չընդունել պարկերով հաց տանող ուղևորներ: Պատճենը Ստալինին: Թող Կորոզեվն ու Նեվսկին նույն կարգով նույն բանը պարտավորեցնեն Վոլգայի նավագնացության բոլոր գործակալներին: Պատճենը Ստալինին: Թող Պարենավորման ժողկոմը շրջաբերական հրաման ուղարկի բոլոր նահանգ. պարենավորման հանձնաժողովներին ու խորհուրդներին, իսկ առանձնապես Օրեխովո-Զույևովոյին և այլ արդյունաբերական քաղաքներին, չուղարկել իրենց գործակալներին հացի համար հարավ, քանի վոր ամբողջ մթերված հացն ուղարկելու յենք Մոսկվա՝ ցամաքային ճանապարհով, Նիժնի՝ ջրային ճանապարհով: Պատճենը Ստալինին: Մենք պնդում ենք դիմակազրկել հարավից ուղարկվող պարենային բեռները, մեզանից վերցնում ենք բաշխելու ֆունկցիան, այն ամբողջովին հանձնելով վոլոստ. պարենավորմանը, սահմանափակվում ենք մթերումով և դեպի յերկու վայր ուղղելիք առաքումով՝ Մոսկվա ու Նիժնի, վորտեղ Պարենկոմին առաջարկում ենք ստեղծել բազային պահեստներ և բաշխիչ գրասենյակներ համառուսական մասշտաբով: Բացառված են հարավին մոտիկ Բագուն, Թուրքեստանն ու Աստրախանի նահանգը, վորոնք հանձն ենք առնում անմիջականորեն բավարարել: Ղզլարի գծի կառուցումն սկսվել է:

Ժողկոմ Ստալին»:

Առանձին է կանգնած քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում ընկեր Ստալինի ցուցաբերած ռազմական գործունեությունը: Նրա նշանակությունը վոչ միայն հաղթություններն են, այլև նրա ստրատեգիական ու տակտիկական մտադրությունների բարձր վորակը, նրա հմտությունը՝ մարտական ուժը կազմակերպել ու ուղղել թշնամուն ջախջախելու ամենամեծ արդյունքներով:

Ընկեր Ստալինի ռազմական գործունեությունը պահանջում է մեծ մարդու ինքնուրույն աշխատություն: Նշանակալից է 1919 թ. մայիսին Ցարիցինի պաշտպաններին ուղղած՝ Լենինի հեռագիրը, վորը ցույց է տալիս, թե ինչպես բարձր եր գնահատում նա ընկեր Ստալինի ռազմական աշխատանքը: Լենինը գրում եր. «Անհապաղ մի խումբ առանձնացրեք Ցարիցինի այն ամենապատասխանատու ու ամենայեռանդուն աշխատողներից, վորոնք մասնակցել են Ստալինի նշանակած միջոցների իրականացմանը Ցարիցինի պաշտպանության ժամանակ, և հանձնարարեցեք նրանց սկսել այս բոլոր միջոցներն իրականացնել նույնպիսի յեռանդով»[1]:

Ընկեր Վորոշիլովն այսպես է բնութագրում ընկեր Ստալինի տարած աշխատանքը քաղաքացիական պատերազմի ճակատներում. «1918—1920 թ. թ. ժամանակաշրջանում ընկեր Ստալինը հանդիսանում եր, թերևս, այն միակ մարդը, վորին Կենտրոնական կոմիտեն մարտական մի ճակատից մյուսն եր գցում, ընտրելով հեղափոխության համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի ահավոր տեղերը: Այնտեղ, վորտեղ համեմատաբար հանգիստ ու բարեհաջող եր, վորտեղ մենք հաջողություններ եյինք ունենում,—այնտեղ Ստալինը չեր յերևում: Բայց այնտեղ, վորտեղ մի ամբողջ շարք պատճառների շնորհիվ կարմիր բանակները ճարճատում եյին, վորտեղ հակահեղափոխական ուժերը, ծավալելով իրենց հաջողությունները, սպառնում եյին խորհրդային իշխանության գոյությանն իսկ, վորտեղ շփոթությունն ու պանիկան կարող եյին ուզածդ րոպեյին փոխարկվել անճարակության, կատաստրոֆայի,—այնտեղ հայտնվում եր ընկեր Ստալինը: Նա ամբողջ գիշերներ չեր քնում, նա կազմակերպում եր, նա ղեկավարությունը վերցնում եր իր ամուր ձեռքերի մեջ, նա ջարդում եր, անխնա յեր և—բեկում եր ստեղծում, իրադրությունն առողջացնում եր»[2]:

Մի խոսքով, ընկեր Ստալինի դերը սպիտակ-գվարդիա-

---

[1] «Пролетарская революция» № 3, 1934 թ., եջ 152:

[2] Վորոշիլով, *Ստալինը և Կարմիր Բանակը*, հայ. հրատ., եջ 5—6:

կան բանդաների ու օտարերկրյա ինտերվենտների վրա տարված հաղթանակում անչափելիորեն բարձր է կանգնած:

IX

Քաղաքացիական պատերազմի ավարտումով Խորհուրդների Յերկիրն անցավ խաղաղ տնտեսական շինարարության ուղին:

Այս անցումն իրականացվում եր չափազանց դժվարին իրադրության մեջ՝ տնտեսական փլուզում, գյուղացիների դժգոհությունը պարենմասնատրումից, բանվորների հոգնածությունը պատերազմի ու սովի կապակցությամբ և այլն, վորը չզլացան օգտագործել ժողովրդի թշնամիները: Տեղի յեն ունենում եսերների և ուրիշ սպիտակ-գվարդիական կազմակերպությունների ղեկավարած կուլակային ապստամբությունները Սիբիրում, Ուկրաինայում ու Տամբովի նահանգում: Խռովություն է բռնկում Կրոնշտադտում:

Կուսակցության առջև խնդիր ծագեց—մշակել տնտեսական քաղաքականության մեջ խաղաղ պայմաններին համապատասխան նոր գիծ: Այժմ արդեն վերացել է պատերազմի ու բլոկադայի իրադրության զոռով փաթաթած ռազմական կոմունիզմի անհրաժեշտությունը: Պարենմասնատրումը դարձել է արգելակ գյուղի արտադրողական ուժերի զարգացման մեջ: Արդյունաբերության վերականգնումը դարձել է սոցիալիստական շինարարության կարևորագույն խնդիր: Անհրաժեշտ եր նոր տնտեսական հիմք ստեղծել բանվորների՝ գյուղացիության հետ հաստատելիք դաշինքի համար:

Կուսակցության ու Խորհրդային պետության կյանքի այս ծանր ժամանակաշրջանում Տրոցկին, Բուխարինը, Շլյապնիկովը և ուր. նորից կատաղի պայքար մղեցին Լենինի ու Կենտրոնական Կոմիտեի դեմ, ձգտելով պայթեցնել կուսակցության միասնությունը, վոտքի հանել գյուղացիներին բանվորների դեմ և կործանել Խորհրդային իշխանությունը:

Նրանք սկսեցին արհմիությունների դերի մասին բացած դիսկուսիայից, թեպետ 1920 թվականին այս հարցը կուսակցական քաղաքականության գլխավոր հարցը չեր: Իսկ

իրականում վեճը գյուղացիության հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին եր, բանվոր դասակարգի՝ անկուսակցական մասսայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին՝ խաղաղ տնտեսական շինարարության ռելսերի վրա անցնելիս:

Այս օպոզիցիոն խմբավորումների դեմ մղած պայքարում կուսակցական կազմակերպություններն անխորտակելի պարսպի պես խմբված կանգնեցին Լենինի ու Ստալինի շուրջը: 1921 թ. մարտին տեղի ունեցած՝ կուսակցության X համագումարն ամրացրեց այս հաղթանակը և կարևորագույն վորոշում ընդունեց՝ անցնելու նոր տնտեսական քաղաքականությանը, վորն ամրապնդում եր բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ:

Հենց այս համագումարում կուսակցությունն ընկեր Ստալինի զեկուցման համաձայն առաջին անգամ հերթի դրեց Խորհրդային հանրապետությունները միութենական պետության մեջ միավորելու հարցը:

Կուսակցության X համագումարի այս վորոշումն իրականացնելու համար ընկեր Ստալինը նախապատրաստական մեծ աշխատանք կատարեց:

Խորհուրդների X Համառուսական համագումարում (1922 թ. դեկտեմբերի 26-ին) և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհուրդների I համագումարում (1922 թ. դեկտեմբերի 30-ին) ընկեր Ստալինի զեկուցումների համաձայն հաստատվեցին դեկլարացիա ու դաշնագիր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կազմելու մասին:

Ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ այսպես բնութագրեց յերկրի զարգացման այդ ժամանակաշրջանը. «Խորհրդային իշխանության պատմության մեջ այսօրվա օրը բեկումնային է: Նա ուղենիշեր է դնում հին, արդեն անցած շրջանի միջև, յերբ խորհրդային հանրապետությունները թեպետև միասին եյին գործում, բայց ջոկ-ջոկ եյին գնում՝ ամենից առաջ զբաղված լինելով իրենց գոյության հարցով, և նոր, արդեն բացված շրջանի միջև, յերբ խորհրդային հանրապետությունների անջատ գոյությանը վերջ է դրվում, յերբ հանրապետությունները միավորվում են իբրև

միասնական միութենական պետություն՝ տնտեսական փլուզման դեմ հաջող պայքարելու համար, յերբ խորհրդային իշխանությունն արդեն մտածում է վոչ միայն գոյության մասին, այլև այն մասին, վորպեսզի զարգանա իբրև լուրջ միջազգային ուժ, վորը կարող լինի ազդել միջազգային իրադրության վրա, վորը կարող լինի փոխել այն՝ հօգուտ աշխատավորության շահերի»[1]:

Կուսակցության XI համագումարը վերջին համագումարն եր, վորն անմիջականորեն Լենինն եր ղեկավարում:

Կուսակցության XI համագումարից հետո կայացած՝ Կենտկոմի առաջին պլենումում, 1922 թ. ապրիլին, հաստատվեց կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնը, և, Լենինի առաջարկով, ընկեր Ստալինն ընտրըվեց Կենտկոմի գլխավոր քարտուղար:

Կուսակցության XII համագումարին, 1923 թ. ապրիլին, Լենինն արդեն չկարողացավ ներկա լինել՝ նա ծանր հիվանդացավ: Այդ պատճառով համագումարի ղեկավարությունը գլխավոր չափով ընկած եր ընկեր Ստալինի վրա, վորը համագումարը միավորեց լենինյան քաղաքականության հիման վրա, պայքարելով կուսակցության միջի մշտական խառնակիչների, ոպոզիցիոներների դեմ, վորոնք չեյին հասկանում ու խեղաթյուրում եյին Լենինի գիծը:

Բայց համագումարի հեղինակավոր վորոշումներն ու ամբողջ կուսակցության կողմից Լենինի—Ստալինի գծի միահամուռ պաշտպանությունը վոչ յերկար ժամանակով ամրացրին հանգիստ աշխատանքը կուսակցության մեջ: Ընկեր Ստալինը, պաշտպանելով կուսակցության գիծը, արդեն 1923 թ. աշնանը հարկադրված յեղավ հետ մղել տրոցկիստների՝ կուսակցության վրա գործած նոր հարձակումները: XIII կուսակցական կոնֆերենցիան, գումարված 1924 թ. հունվարին, տրոցկիստական ոպոզիցիային դատապարտեց, վորպես մանր-բուրժուական շեղում մարքսիզմից:

Կուսակցությանը, բանվոր դասակարգին ու ամբողջ

[1] Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Հատընտիր հոդվածների և ճառերի ժողովածու, հայ. հրատ., եջ 153:

պրոգրեսիվ մարդկությանը ծանր հարված հասավ: 1924 թ. հունվարի 21-ին մեռավ Լենինը:

Այդ օրերին ԽՍՀՄ Խորհուրդների II համագումարում ընկեր Ստալինը կուսակցության անունից մեծ յերդում տվեց Լենինի աճյունի առաջ.

«Մենք, կոմունիստներս,—հատուկ կազմվածքի մարդիկ ենք: Մենք հատուկ նյութից ենք ձևված: Մենք նրանք ենք, ովքեր պրոլետարական մեծ ստրատեգի բանակը, ընկեր Լենինի բանակն են կազմում: Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Չկա ավելի բարձր բան, քան այն կուսակցության անդամի կոչումը, վորի հիմնադիրն ու ղեկավարն ընկեր Լենինն է...

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—բարձր պահել և մաքուր պահպանել կուսակցության անդամի մեծ կոչումը: Երդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը...

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—աչքի լույսի պես պահպանել մեր կուսակցության միասնությունը: Երդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—պահպանել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան: Երդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք չենք խնայի մեր ուժերը, վորպեսզի պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—բոլոր ուժերով ամրապնդել բանվորների ու գյուղացիների դաշինքը: Երդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Ընկեր Լենինը մեզ անդադար ասում եր, թե անհրաժեշտ է, վոր մեր յերկրի ժողովուրդները կամավոր դաշինք ունենան, անհրաժեշտ է, վոր նրանք յեղբայրաբար համագործակցեն Հանրապետությունների Միության շրջանակներում:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց — ամրացնել ու ընդլայնել Հանրապետությունների

Միությունը: Յերդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Լենինը մեզ շատ անգամ է մատնանշել, վոր Կարմիր բանակի ամրացումը և նրա դրության լավացումը մեր կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում... Արդ, յերդվենք, ընկերներ, վոր մենք ուժերս չենք խնայի, վորպեսզի ամրացնենք մեր Կարմիր բանակը, մեր Կարմիր նավատորմը:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—հավատարիմ մնալ Կոմունիստական Ինտերնացիոնալի սկզբունքներին: Յերդվո՛ւմ ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք մեր կյանքը չենք խնայի, վորպեսզի ամրապնդենք ու ընդլայնենք ամբողջ աշխարհի աշխատավորների միությունը—Կոմունիստական Ինտերնացիոնալը»[1]:

Լենինի մահը խոր ցավով համակեց ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների սրտերը: Առանձնապես այս ցավն ու մեծ պատասխանատվության զգացումը զգում եյին Խորհրդային հանրապետությունների ժողովուրդները: Յուրաքանչյուր մարդ անհանգստությամբ իր առաջ հարց եր դնում—գլուխ կհանի՞ արդյոք բոլշևիկների կուսակցությունն առաջիկա բոլոր դժվարություններից առանց Լենինի:

Կուսակցության առաջ գործնականորեն հարց դրվեց ղեկավարության մասին: Ուշադրության առնելով, վոր ղեկավարության եյին ձգտում մարդիկ, վորոնք իրենց համարյա ամբողջ քաղաքական կյանքում պայքարում եյին Լենինի դեմ, բոլշևիզմի դեմ,—կուսակցությունն այս խնդիրը փայլուն կերպով գլուխ բերեց: Ընկեր Ստալինը վերընտրվեց կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի գլխավոր քարտուղար: Կուսակցության համերաշխությունն այնքան ուժեղ եր, վոր կուսակցության միջի՝ լենինիզմի բացահայտ ու գաղտնի թշնամիներն այս պահին կարծես թե «խաղաղվեցին», միևնույն ժամանակ շարունակելով գաղտնորեն իրենց դավերը նյութել կուսակցության դեմ:

Ըստ եյության ընկեր Ստալինի՝ գլխավոր քարտուղար

[1] Ստալին, Լենինի մասին, հայ. հրատ., եջ 15—20:

վերընտրվելը նշանակում եր կուսակցության ղեկավարության անցումը նրան: Ընկեր Ստալինի վրա, վորպես կուսակցության առաջնորդի վրա, մեծագույն պատասխանատվություն եր ընկած կուսակցության միասնության ամրապնդման համար՝ լենինիզմի բազայի վրա, Խորհրդային իշխանության զարգացման ու ամրապնդման համար, Խորհուրդների Յերկրում սոցիալիզմի կառուցման համար:

Մերկացնելով տրոցկիստական աղաղակները կուսակցական ապարատի բյուրոկրատացման վտանգի մասին, ընկեր Ստալինը կուսակցության XIII համագումարում ասում եր.

«Վտանգն այս չէ, այլ կուսակցության՝ անկուսակցական մասսաներից ռեալ կերպով կտրվելու հնարավորությունը: Դուք կարող եք ունենալ կուսակցություն, վորն ապարատը դեմոկրատորեն է կառուցել, բայց յեթե նա կապված չէ բանվոր դասակարգի հետ, ապա այդ դեմոկրատիան ապարդյուն կլինի, գրոշ է նրա գինը: Կուսակցությունը գոյություն ունի դասակարգի համար: Քանի նա կապված է դասակարգի հետ, նրա հետ կոնտակտ ունի, ունի հեղինակություն ու հարգանք անկուսակցական մասսաների կողմից,—նա կարող է գոյություն ունենալ ու զարգանալ նույնիսկ բյուրոկրատական թերությունների դեպքում: Յեթե այս ամենը չկա, ապա կուսակցության ինչ տեսակ կազմակերպում ել դնեք,—բյուրոկրատական, դեմոկրատական,—կուսակցությունն անկասկած կկործանվի: Կուսակցությունը դասակարգի մասն է, վորը գոյություն ունի դասակարգի համար և վոչ թե ինքն իր համար»[1]:

Հրաշալի կշտամբալից պատասխան տվեց ընկեր Ստալինը՝ յերիտասարդությունը կուսակցության հին կադրերին հակադրելու տրոցկիստական փորձերին:

«Սերունդների հարցը յերկրորդական հարց է: Մեր կուսակցության կյանքից վերցված թվերն ասում են, մեր կուսակցության կյանքն ասում է, վոր կուսակցության յերիտասարդ սերունդը քայլ առ քայլ է կադր դառնում,—կադրերն ընդլայնվում են ի հաշիվ յերիտասարդության:

[1] Сталин, Об оппозиции, եջ 89—90:

կուսակցությունը միշտ կանգնել է և կկանգնի այս ուղու վրա: Միայն նա, ով կադրերը դիտում է վորպես ինքնապարփակ մի ամբողջություն, վորպես արտոնյալ մի դաս, վորն իր շրջանը նոր անդամներ ներս չի թողնում, միայն նա, ով այս կադրերը դիտում է վորպես հին ժամանակվա ազնվական գվարդիա, վորը կուսակցության մնացած բոլոր անդամներին «իր արժանապատվությունից ցածր» է համարում, միայն նա, ով ուզում է ճեղք գոյացնել կադրերի ու կուսակցական յերիտասարդության միջև,—միայն նա կարող է դեմոկրատիայի հարցը սրել կուսակցական սերունդների հարցի վրա: Դեմոկրատիայի եյությունը հանգում է վոչ թե սերունդների հարցին, այլ ինքնագործունեյության, կուսակցական ղեկավարության մեջ կուսակցության անդամների ունենալիք ակտիվ մասնակցության հարցին: Այսպես և միայն այսպես կարող է դրվել դեմոկրատիայի հարցը, յեթե, իհարկե, խոսքը վոչ թե ֆորմալ-դեմոկրատական կուսակցության մասին է, այլ իրոք պրոլետարական կուսակցության մասին, վորն անխզելի կապերով կապված է բանվոր դասակարգի մասսաների հետ»[1]:

Պատահական չէ, վոր Լենինը Տրոցկուն «խուրջին» եր անվանում: Տրոցկին հեշտությամբ իրեն գցում եր մեկ քաղաքական հոսանքից մյուսին: Տրոցկու և նրա համախոհների համար բոլշևիկյան հայացքը կուսակցության վրա՝ վորպես մի միաձույլ ամբողջության վրա՝ անհանդուրժելի յեր: Յեվ դրա համար տրոցկիստները փորձում եյին կուսակցության վզին փաթաթել իրենց հայացքը, վորի համաձայն կուսակցության մեջ կարող են լինել տարբեր հոսանքներ ու ֆրակցիաներ:

Ամեն մի բոլշևիկի համար հասկանալի յե, վոր կուսակցության համար և պրոլետարական դիկտատուրայի համար այդ մեծագույն սպառնալիք եր, վորովհետև ֆրակցիաների ու խմբավորումների թույլատրումը կուսակցության մեջ ճանապարհ եր բաց անում հակահեղափոխական տարրերի պայքարի ծավալման համար, վորոնք չեյին զլանա այդ ֆրակցիաներն ու խմբավորումներն ոգտագործել իրենց

[1] Сталин, Об оппозиции, եջ 89:

նպատակների համար: «Միջազգային մասշտաբով,—ասում եր ընկեր Ստալինը,—ուժերի դասավորությունն այնպես է, վոր մեր յերկրում մեր կուսակցության հեղինակությունն ու դիկտատուրայի ամրությունը թուլացնելու ամեն մի փորձ հեղափոխության թշնամիներն անպայման կընդունեն վորպես պլյուս իրենց համար,—միևնույն է, մեր ոպոզիցիա՞ն է անում այդ փորձը, թե՞ եսերները մենշևիկների հետ»[1]: Հետագայում այդպես ել պատահեց բոլոր ոպոզիցիաներին:

Ընկեր Ստալինը, հավատարիմ Լենինի աճյունի առջև տված իր յերդումին, բոլշևիկյան մարտիկի ամբողջ կրքոտությամբ պաշտպան կանգնեց լենինիզմին: Նա առաջինը վճռականորեն բաց արեց ու մերկացրեց տրոցկիզմի մենշևիկյան հակահեղափոխական եյությունը և ամբողջ կուսակցությունը վոտքի հանեց անխնա պայքար մղելու լենինիզմը տրոցկիզմով նենգափոխելու բոլոր փորձերի դեմ:

1924 թ. նոյեմբերի 19-ին ՀԱՄԿԽ-ի ֆրակցիայի պլենումում արտասանած իր ճառում ընկեր Ստալինն ասում եր.

«Տրոցկին իր գրական յելույթներում ելի մեկ (ելի մե՛կ) փորձ է անում պայմաններ նախապատրաստելու լենինիզմը տրոցկիզմով նենգափոխելու համար: Տրոցկուն «անչափ» հարկավոր է պսակազերծ անել կուսակցությունը, նրա կադրերը, վորոնք ապստամբություն կատարեցին, նրա համար, վորպեսզի կուսակցությունը պսակազերծ անելուց անցնի լենինիզմը պսակազերծ անելուն: Իսկ լենինիզմը պսակազերծ անելն անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի տրոցկիզմ ներքաշի, վորպես «միակ», «պրոլետարական» (կատակ մի՛ անեք) իդեոլոգիա: Այս ամենը, իհարկե (ո՛, իհարկե), լենինիզմի դրոշի տակ, վորպեսզի ներքաշելու պրոցեդուրան «մաքսիմալ անհիվանդագին» անցնի»[2]:

Զարմանք է առաջացնում այն վիթխարի յեռանդը, վոր ցուցաբերել է ընկեր Ստալինն այս տարիներում: Լինելով այն կուսակցության առաջնորդը, վորը վերածնում եր իդեալական ղեկավարության կարիք ունեցող մեծ յերկիրը,

[1] Сталин, Об оппозиции, եջ 93:
[2] Նույն տեղում, եջ 118:

ուղղություն տալով խորհրդային ու կուսակցական բոլոր կադրերի աշխատանքին, տալով նրանց ամեն օր գործնական ցուցումներ,—ընկեր Ստալինը միևնույն ժամանակ հսկայական թեորիական աշխատանք ծավալեց:

Սրան են վերաբերում ամենից առաջ նրա հռչակավոր դասախոսությունները «Լենինիզմի հիմունքների մասին», կարդացված 1924 թ. ապրիլին Սվերդլովի համալսարանում: Պետք է ասել, որ այդ սովորական դասախոսություններ չէին, այդ լենինիզմի կրքոտ պաշտպանումն էր, նրա համարձակ հակադրումը մասսաների առջև բոլոր թշնամական թեորիաներին:

Ընկեր Ստալինը շատ առաջ մղեց մարքս-լենինյան հեղափոխական թեորիան. մարքսիզմ-լենինիզմի բոլոր հիմնական հարցերը հարստացրեց նոր բովանդակությամբ, նոր պայմանների համեմատ. նոր աստիճանի բարձրացրեց լենինյան ուսմունքն իմպերիալիզմի մասին. մշակեց պրոլետարիատի պետության վերաբերյալ հարցը, գյուղացիական հարցը, ազգային հարցը, կուսակցության հարցը և նրա դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, ստրատեգիայի ու տակտիկայի հարցերը և, վերջապես, մեկ երկրում սոցիալիզմի հաղթանակի վերաբերյալ ու սոցիալիզմի շինարարության ուղիների վերաբերյալ հարցը:

Այդ ժամանակաշրջանին է վերաբերում ընկեր Ստալինի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» մեծ հոդվածը, գրված 1924 թ. դեկտեմբերին որպես առաջաբան «На путях к Октябрю» գրքի համար, և «Լենինիզմի հարցերի շուրջը» բրոշյուրը, հրապարակված 1926 թ. հունվարին:

Այս աշխատություններով են միլիոնավոր մարդիկ մարքսիզմ-լենինիզմ սովորում ոչ միայն մեզ մոտ, այլև սահմանի մյուս կողմում: Նրանք անգնահատելի ձեռնարկ են քաղաքական մտքի զարգացման մեջ և պրոլետարական շահերի համար մղվող պայքարում:

Ընկեր Ստալինի թեորիական աշխատությունները մարքսիստական դիալեկտիկայի կիրառման օրինակն են: Նրանք ցույց են տալիս հրաշալի հմտություն՝ հետազոտելու զարգացման պրոցեսը, անդրադարձնելու զարգացող պրոցեսի բոլոր առանձնահատկությունները և սրա հիման վրա—կանխատեսել:

Ընկեր Ստալինի թեորիական ընդհանրացումների հսկայական ուժն այն է, որ նրանք միշտ շաղկապված են մասսաների պրակտիկ գործողության հետ: Այս կապակցությամբ ես ուզում եմ որպես օրինակ բերել մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցը: Ոտքի հանելով կուսակցությունը տրոցկիզմի դեմ պայքարելու համար, ընկեր Ստալինն այս հարցը սրեց ոչ պատահականորեն, այլ որպես հետագա առաջխաղացման հեռանկար:

Այն ժամանակ մեր երկիրն ավարտում էր ժողովրդական տնտեսության վերականգնումը: Ոպորտունիստները կապիտալիզմի սկսված մասնակի կայունացման մեջ տեսնում էին հեղափոխության վերջը Ռուսաստանում:

«Մենք ունենք, այսպիսով,—ասում է ընկեր Ստալինը,—երկու կայունացում: Մի բևեռում կապիտալիզմն է կայունանում, ամրացնելով նվաճած դրությունը և է՛լ ավելի զարգանալով: Մյուս բևեռում խորհրդային հասարակարգն է կայունանում, իրեն ամրացնելով նվաճած դիրքերը և առաջ շարժվելով դեպի հաղթություն տանող ուղիով:

Ով ում—այս է ամբողջ եյությունը:

Ինչո՞ւ մեկ կայունացումը զուգահեռ է ընթանում մյուսին, ո՞րտեղից են այս երկու բևեռները: Նրա համար, որ աշխարհում միասնական ու ամեն ինչ ընդգրկող կապիտալիզմ այլևս չկա: Նրա համար, որ աշխարհը բաժանվել է երկու բանակի—կապիտալիզմի բանակի՝ անգլո-ամերիկական կապիտալի գլխավորությամբ, և սոցիալիզմի բանակի՝ Խորհրդային Միության գլխավորությամբ: Նրա համար, որ միջազգային դրությունն ավելի ու ավելի որոշվելու է այս երկու բանակների միջև ուժերի հարաբերակցությամբ»[1]:

Ամբողջ սրությամբ հարց ծառացավ՝ ո՞ւր շարժվել:

[1] **Сталин**, Об оппозиции, էջ 172—179:

Կարո՞ղ ենք արդյոք մենք սոցիալիզմ կառուցել մեր երկրում:

Ընկեր Ստալինը, ի հակակշիռ բոլոր թերահավատների, նվացողների ու լիկվիդատորների, տվեց ուղղակի և վճռական պատասխան, որ մեր երկիրը, պրոլետարիատի դիկտատուրայի երկիրը, ունի այն ամենը, ինչ անհրաժեշտ է ու բավականաչափ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար, որ մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել մեկ, առանձին վերցրած երկրում:

«Ի՞նչ կլինի,—գրում էր ընկեր Ստալինը,—եթե ԽՍՀ Միության մեջ սոցիալիստական շինարարության հաջողությունները աճեն-բազմանան: Այդ արմատապես կբարելավի բոլոր երկրների պրոլետարների հեղափոխական դիրքերը նրանց՝ կապիտալի դեմ մղած պայքարում, կխարխլի միջազգային կապիտալի դիրքերը նրա՝ պրոլետարիատի դեմ մղած պայքարում և կբարձրացնի համաշխարհային կոմունիզմի շանսերը մինչև վերին աստիճան...

Այդ պատճառով սոցիալիզմ կառուցել ԽՍՀ Միության մեջ—այդ նշանակում է բոլոր երկրների պրոլետարների ընդհանուր գործն անել, այդ նշանակում է հաղթանակ կռել կապիտալի վրա ոչ միայն ԽՍՀ Միության մեջ, այլև բոլոր կապիտալիստական երկրներում, որովհետև ԽՍՀ Միության մեջ կատարված հեղափոխությունը համաշխարհային հեղափոխության մի մասն է, նրա սկիզբն ու նրա ծավալման բազան»[1]:

Առաջ քաշելով երկրի ինդուստրացումը որպես Խորհրդային պետության ամբողջ տնտեսական քաղաքականության կենտրոն, ընկեր Ստալինը, որպես մեծ բարեփոխող, երկրի բոլոր նյութական ու ստեղծագործող ուժերն ուղղեց դեպի այս հանգուցային, գլխավոր խնդրի կատարումը: Թերահավատներին, նվացողներին, որոնք չէին տեսնում այս վիթխարի աշխատանքի սոցիալիստական նպատակը, ընկեր Ստալինն ասում էր. «Առանց պարզորոշ հեռանկարների, առանց պարզորոշ նպատակների կուսակցությունը չի կարող ղեկավարել շինարարությունը: Մենք չենք

[1] Сталин, Об оппозиции, էջ 457:

կարող ապրել Բերնշտայնի ռեցեպտով՝ «Շարժումն—ամեն ինչ է, նպատակը—ոչինչ»: Մենք, ընդհակառակը, որպես հեղափոխականներ, մեր առաջխաղացումը, մեր գործնական աշխատանքը պետք է պրոլետարական շինարարության հիմնական դասակարգային նպատակին ենթարկենք: Առանց դրա—դեպի օպորտունիզմի ճահիճը, անխուսափելիորեն ու անպայման:

Այնուհետև: Առանց մեր շինարարության պարզորոշ հեռանկարների, առանց հավատացած լինելու, որ սոցիալիզմ է կառուցվում, բանվորական մասսաները չեն կարող գ ի տ ա կ ց ո ր ե ն մասնակցել այդ շինարարությանը, նրանք չեն կարող գ ի տ ա կ ց ո ր ե ն ղեկավարել գյուղացիությանը: Առանց հավատացած լինելու, որ սոցիալիզմ է կառուցվում, չի կարող ցանկություն լինել սոցիալիզմի շինարարության համար: Ո՞վ գլուխ ունի կառուցելու, գիտենալով, որ չես կառուցի-պրծնի: Մեր շինարարության սոցիալիստական հեռանկարների բացակայությունն այդ պատճառով տանում է դեպի պրոլետարիատի կամքի թուլացումն այդ շինարարության նկատմամբ անխուսափելիորեն ու անպայման»[1]:

XIV կուսկոնֆերենցիան 1925 թ. ապրիլին լենինյան-ստալինյան այս սահմանումը հաստատեց, որպես կուսակցության օրենք: Զինովյևականները, պատին դեմ արած լինելով, աչք փակելու համար կոնֆերենցիայում քվեարկեցին հօգուտ կուսակցության այս օրենքի, որոշելով մարտ տալ կուսակցության XIV համագումարում:

Ելնելով մեկ երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության սկզբունքից, ընկեր Ստալինը միանգամայն հետևողականորեն հերթի դրեց երկրի ինդուստրացման հարցը որպես կուսակցության գլխավոր գծի հիմք:

Այս հարցը նա դրեց կուսակցության XIV համագումարում 1925 թ. դեկտեմբերին:

Քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինը ներկայացրեց Խորհրդային Միության քաղաքական ու տնտեսական աճման վառ պատկերը, աճում, որը ձեռք է բերվել

[1] Сталин, Об оппозиции, էջ 361—362:

տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունների շնորհիվ: Սրա հետ միասին ընկեր Ստալինը կոչ եր անում չհանգստանալ հաջողություններով, նկատի ունենալ, վոր մեր յերկիրը հետամնաց յերկիր ե, թշնամական կապիտալիստական շրջապատման մեջ գտնվող:

«Մենք աշխատում ու կառուցում ենք,—ասում եր նա,— կապիտալիստական շրջապատման իրադրության մեջ: Այդ նշանակում ե, վոր մեր տնտեսությունն ու մեր շինարարությունը զարգանալու յեն մեր տնտեսության սիստեմի և կապիտալիստական տնտեսության սիստեմի միջև յեղած հակասության մեջ, բախումներում: Այդ հակասությունից մենք վոչ մի կերպ չենք կարող խուսափել: Դրանք շրջանակներ են, վորոնց սահմաններում պետք ե ընթանա յերկու սիստեմի պայքարը—սոցիալիստական սիստեմի ու կապիտալիստական սիստեմի: Այդ, բացի դրանից, նշանակում ե, վոր մեր տնտեսությունը պետք ե կառուցվի վոչ միայն նրա հակադրումով դրսում կապիտալիստական տնտեսությանը, այլև տարբեր տարրերի հակադրումով մեր յերկրի ներսում—սոցիալիստական տարրերի հակադրումով կապիտալիստական տարրերին:

Սրանից յեզրակացություն. մենք մեր տնտեսությունն այնպես պետք ե կառուցենք, վոր մեր յերկիրը չվերածվի համաշխարհային կապիտալիստական սիստեմի կցորդի, վոր նա չներառվի կապիտալիստական զարգացման ընդհանուր սիստեմի մեջ, վորպես նրա օժանդակ մի ձեռնարկություն, վոր մեր տնտեսությունը զարգանա վոչ թե վորպես համաշխարհային կապիտալիզմի օժանդակ մի ձեռնարկություն, այլ վորպես մի ինքնուրույն տնտեսական միավոր, վորը գլխավորապես հենվում ե ներքին շուկայի վրա, հենվում ե մեր ինդուստրիայի ու մեր յերկրի գյուղացիական տնտեսության զոդման վրա»[1]:

Կենտրոնական խնդիրը, վոր դրեց ընկեր Ստալինը կուսակցության առջև, այն եր, վոր «մեր յերկիրն ագրարային յերկրից փոխարկվի ինդուստրիալ յերկրի, ընդունակ իր սեփական ուժերով արտադրելու անհրաժեշտ սարքավորումը»: Այդ ե, ասում եր նա, «մեր գլխավոր գծի եությունը, հիմքը»[1]:

Սոցիալիստական ինդուստրացման լենինյան-ստալինյան պլանին զինովյեվականների «նոր օպոզիցիան» հակադրեց ԽՍՀՄ «դաուեսացման» բուրժուական պլանը, ժխտելով, հետևելով տրոցկիստներին, մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը: Այս պլանի համաձայն Խորհրդային Միությունը պետք ե մնար հողագործական յերկիր և ծառայեր վորպես կցորդ բարձր զարգացած կապիտալիստական յերկրների համար:

Ընկեր Ստալինը մերկացրեց զինովյեվականների այս դավաճանական պլանը, վորպես ԽՍՀՄ-ն ստրկացնելու պլան, և բաց արեց «նոր օպոզիցիայի» տրոցկիստական-մենշևիկյան եությունը, «նոր օպոզիցիա», վորը ձգտում եր պառակտել կուսակցությունը և հարվածի տակ դնել պրոլետարիատի դիկտատուրան:

Կուսակցության համագումարը հակահարված հասցրեց բոլոր օպոզիցիաների այն փորձերին, վոր ուղղված եյին քանդելու բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ: Մերկացնելով աջ օպորտունիստներին (բուխարինականներին), վորոնք ձգտում եյին անչափ նվազեցնել կուլակային վտանգը, և «ձախ» օպորտունիստներին (զինովյեվականներին), վորոնք վախենում եյին կուլակից ու թերագնահատում միջակ գյուղացիության դերը, ընկեր Ստալինն այն հարցին, թե վո՞ր թեքումն ե ավելի վատ, պատասխանեց. «նրանք յերկուսն ել վատ են, թե՛ առաջին և թե յերկրորդ թեքումը: Յեվ յեթե այդ թեքումները զարգանան, նրանք ընդունակ են քայքայելու և կործանելու կուսակցությունը: Բարեբախտաբար, մեզանում կուսակցության մեջ կան ուժեր, վորոնք կարող են կտրել-դեն գցել թե՛ առաջին և թե յերկրորդ թեքումը»[2]:

«ՀամԿ(բ)Կ XIV համագումարի պատմական նշանակու-

[1] Сталин, Политический отчет ЦК XIV съезду ВКП(б), եջ 26—27, 1933 թ.:

[1] Сталин, Политический отчет ЦК XIV съезду ВКП(б), եջ 62:
[2] Նույն տեղում, եջ 51:

թյունը,—գրում էր հետագայում ընկեր Ստալինը,—այն է, վոր նա կարողացավ մինչև արմատները հայտաբերել նոր օպոզիցիայի սխալները, գեն նետեց նրա չհավատալն ու նվնվոցը, պարզ ու հստակ կերպով ուրվագծեց սոցիալիզմի համար մղվող հետագա պայքարի ուղին, հաղթանակի հեռանկար տվեց կուսակցությանը և հենց դրանով էլ պրոլետարիատին զինեց անխորտակելի հավատով դեպի սոցիալիստական շինարարության հաղթությունը»[1]:

X

Յերկրի ինդուստրացումն ու սոցիալիստական շինարարության հետագա ամբողջ պրոցեսն անխզելիորեն կապված են ընկեր Ստալինի անվան հետ: Նա խորապես ու բազմակողմանիորեն զարգացրեց ինդուստրացման, վորպես ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքի, լենինյան իդեան: Այս նպատակի մեջ նա տեսնում էր մեծագույն ստեղծագործական աշխատանքի հեռանկարը:

Ընկեր Ստալինը պարզաբանում էր, վոր «արդյունաբերության վոչ ամեն զարգացում ինդուստրացում է ներկայացնում: Ինդուստրացման կենտրոնը, նրա հիմքը ծանր արդյունաբերության (վառելիք, մետաղ և այլն) զարգացումն է, վերջիվերջո արտադրության միջոցների արտադրության զարգացումը, մեր սեփական մեքենաշինարարության զարգացումը: Ինդուստրացումն իրեն խնդիր ունի վոչ միայն այն, վոր մեր ժողովրդական տնտեսությունն ամբողջությամբ տանի դեպի արդյունաբերության բաժնի մեծացումը նրանում, այլ նա ունի նաև այն խնդիրը, վոր այդ զարգացման մեջ կապիտալիստներով շրջապատված մեր յերկրի համար ապահովի տնտեսական ինքնուրույնություն, նրան պահպանի համաշխարհային կապիտալիզմի կցորդի փոխարկվելուց»[2]:

Ինդուստրացման, և հետևապես՝ նաև ամբողջ սոցիալիստական շինարարության, խնդիրը կենսագործելը նշանակում էր բանվոր դասակարգին ու բոլոր գիտակից աշխատավորներին վոտքի հանել, նրանց մեջ հավատ ներշնչել դեպի հաղթություն, նրանց ստեղծագործող ուժերն արթնացնել և ուղղել դեպի ստեղծագործական աշխատանքի հունը:

«Կարելի՞ յե արդյոք իրականացնել այս խնդիրները (ինդուստրացման խնդիրները:—Մ. Կ.),—ասում էր ընկեր Ստալինը,—առանց բանվոր դասակարգի անմիջական ոգնության, առանց անմիջական աջակցության: Վո՛չ, չի կարելի: Առաջ շարժել մեր արդյունաբերությունը, բարձրացնել նրա արտադրողականությունը, ստեղծել ինդուստրիա կառուցողների նոր կադրեր, կանոնավոր ղեկավարել սոցիալիստական կուտակումը, խելացիորեն ոգտագործել կուտակումն արդյունաբերության կարիքների համար, հաստատել խնայողության խստագույն ռեժիմ, բարձրացնել պետական ապարատը, դարձնել այն եժան ու շիտակ, մաքրել այն աղտեղությունից ու ցեխից, վորոնք կպել են նրան մեր շինարարության ժամանակաշրջանում, սիստեմատիկ պայքար մղել պետական գույքի հափշտակիչների ու վատնիչների դեմ,—այս բոլորն այնպիսի խնդիրներ են, վորոնք անընդունակ է հաղթահարել վոչ մի կուսակցություն առանց բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների անմիջական ու սիստեմատիկ աջակցության: Ուստի խնդիրն այն է, վոր անկուսակցական բանվորների միլիոնավոր մասսաներին ներգրավենք մեր ամբողջ շինարարական աշխատանքի մեջ»[1]:

Սոցիալիստական ինդուստրացումը բազմաքանակ վորակյալ կադրեր էր պահանջում: Առանց սրա չէր կարող լուծվել սոցիալիստական շինարարության խնդիրը: Յեվ ընկեր Ստալինը բացառիկ համառությամբ է դնում կադրերի հարցը, պահանջելով կուսակցությունից ամենաարագ կերպով լուծել այս պրոբլեմը:

«Վոչ մի խնդիր, իսկ առանձնապես այնպիսի մի մեծ խնդիր, ինչպես մեր յերկրի ինդուստրացումն է,—ասում էր ընկեր Ստալինը Լենինգրադի կազմակերպության ակտիվում 1926 թվին,—չի կարող կատարվել առանց կենդանի մարդ-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 227:

[2] Сталин, О хозяйственном положении Советского Союза, եջ 6, 1937 թ.:

[1] Сталин, О хозяйственном положении Советского Союза, եջ 19, 1937 թ.:

կանց, առանց նոր մարդկանց, առանց նոր կառուցողների կադրերի... Ուստի խնդիրն այն է, վոր ինդուստրիա կառուցողների բազմաքանակ կադրեր ստեղծենք բանվորների ու խորհրդային ինտելիգենցիայի շարքերից, հենց այն խորհրդային ինտելիգենցիայի, վորին իր բախտը կապել է բանվոր դասակարգի բախտի հետ և վորը մեզ հետ միասին մեր տնտեսության սոցիալիստական հիմքն է կառուցում»[1]:

Ընկեր Ստալինի թափած ջանքերը յերկրի սոցիալիստական ինդուստրացման բնագավառում ավելի քան արդարացան: Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը հաջողությամբ հաղթահարում եյին յերկրի ինդուստրացման հետ կապված գլխավոր դժվարությունները և անշեղորեն առաջ եյին շարժվում նշված ուղիով:

Արդեն կուսակցության XV համագումարում 1927 թ. դեկտեմբերին ընկեր Ստալինը, տալով XIV կուսակցական համագումարի դրած խնդիրները կատարելու ուղղությամբ կուսակցության տարած ավելի քան յերկամյա աշխատանքի հանրագումարները, ասում եր. «մենք բարձրացրինք մեր սոցիալիստական ինդուստրիան, նրա զարգացման համար ռեկորդային տեմպ սահմանելով ու նրա հեգեմոնիան հաստատելով ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ.

մենք հաստատեցինք սոցիալիստական ինդուստրիայի զոդումը գյուղացիական տնտեսության հետ.

մենք ամրապնդեցինք բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ, հենարան ունենալով չքավորությունը.

մենք մեր յերկրում ամրապնդեցինք պրոլետարիատի դիկտատուրան, չնայած միջազգային թշնամական շրջապատման, ցույց տալով բոլոր յերկրների բանվորներին, վոր պրոլետարիատը գիտե վոչ միայն կործանել կապիտալիզմը, այլև կառուցել սոցիալիզմ.

մենք ամրապնդեցինք կուսակցությունը, պաշտպանեցինք լենինիզմը և գլխովին ջախջախեցինք ոպոզիցիան:

Այս է ընդհանուր հանրագումարը:

Վո՞րն է յեզրակացությունը: Յեզրակացությունը մեկ է.

[1] Сталин, О хозяйственном положении Советского Союза, էջ 17—18:

մենք ճիշտ ուղու վրա յենք կանգնած, մեր կուսակցության քաղաքականությունը ճիշտ է»[1]:

Զարմանալի հատկություններ ունեն ընկեր Ստալինի տպագրված աշխատություններն ու ճառերը.

Գրական կանոնները չափավորություն են պահանջում ցիտատներ օգտագործելիս, մանավանդ ցիտատներ ընկեր Ստալինի յերկերից, վորոնք, անկասկած, հայտնի յեն ընթերցողներին: Բայց յերբ վերընթերցում ես ընկեր Ստալինի աշխատությունները, ապա չես կարող նրանցից կտրվել: Նրանք հափշտակում, հուզում են քեզ մտքի խորությամբ, հրապուրում իրենց տրամաբանությամբ, նրանք գերում են իրենց հետևողականությամբ, իրենց անփոփոխ սկզբունքայնությամբ, իրենց ատելությամբ, Մարքսի—Էնգելսի—Լենինի ատելությամբ հանդեպ պրոլետարիատի բոլոր թշնամիների, հանդեպ ժողովրդի բոլոր թշնամիների: Չկա վոչ մի գործնական հարց, վորն ընկեր Ստալինը բարձրացներ անջատված, մարքսիզմ-լենինիզմի հետ, սոցիալիզմի շինարարության հետ ունենալիք կապից դուրս:

Ահա հարցեր լուծելու այսպիսի մեթոդի մի օրինակ: Մեր յերկիրը հողագործական է ու հետամնաց,—կրկնում եյին ոպորտունիստները,—և այդ պատճառով այնտեղ չի կարելի սոցիալիզմ կառուցել: Ընկեր Ստալինն այդ հարցին մոտեցավ լենինաբար. այո, մեր յերկիրը հողագործական է, հետամնաց—նշանակում է՝ այն հարկավոր է ինդուստրացնել, առաջավոր դարձնել: Յեվ նա կուսակցությունը, բանվոր դասակարգին վոտքի հանեց այս խնդիրն իրականացնելու համար, այն դիտելով վորպես մի անհրաժեշտ աստիճան, վորը մենք պետք է անցնենք դեպի սոցիալիզմ տանող ուղիով:

Ընկեր Ստալինի փայլուն յելույթներն ի պաշտպանություն ինդուստրացման միշտ հուզելու յեն ընթերցողներին վոչ միայն իրենց մտքերով, վոչ միայն իրենց ձևով, այլև խորին համոզվածությամբ, անսասան հավատով դեպի սոցիալիզմի հաղթանակը, այսինքն՝ դեպի այն նպատակի

[1] Ստալին, Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը ՀամԿ(բ)Կ XV համագումարին, Հայ. հրատ., էջ 77—78:

իրականացումը, վորին նա նվիրել է իրեն ամբողջովին առանց մնացորդի։

Ընկեր Ստալինի խոսքերը վոչ միայն կոչ, պրոպագանդա, ագիտացիա չեն, այլ դրանք նաև դիրեկտիվ են, կարգադրություն, հրաման գործողության անցնելու։ Յեվ նա ինքն, առաջին հերթին, ցույց է տալիս, թե ինչպես պետք է գործել։ Չէ վոր չես գտնի փոքրիշատե հայտնի մի կառուցում, ուր նա իր ձեռքը չդնի։

Ժողովուրդը հասկացավ ինդուստրացման՝ վորպես դեպի կոմունիզմ տանող միակ ուղու՝ նշանակությունը և մարդկության պատմության մեջ չտեսնված խանդավառություն հանդես բերեց սոցիալիստական շինարարության գործում։

Ընկեր Ստալինը տեսնում եր բանվոր դասակարգի առաջ ծառացած դժվարությունները։ Բայց նա տեսնում եր նաև մասսաների այն ուժը, վորն ընդունակ է այդ դժվարությունները հաղթահարելու։

Ակամայից հիշում ես ընկեր Ստալինի պատասխանը նվացողներին ու թերահավատներին․

«Արդյոք դուք տեսած կա՞ք ձկնորսներ փոթորկից առաջ մի մեծ գետի վրա, ինչպես Յենիսեյն է։ Յես նրանց շատ եմ տեսել։ Պատահում է, վոր ձկնորսների մի խումբը վրա հասած փոթորկի հանդեպ մոբիլիզացիայի յե յենթարկում իր բոլոր ուժերը, վոգևորում է իր մարդկանց ու համարձակ կերպով մակույկը տանում է ընդդեմ փոթորկի․ «Տղե՛րք, ամուր բռնեք ղեկից, ճեղքեցե՛ք ալիքները, մենք կհաղթենք»։ Բայց ձկնորսների այլ տեսակն ել է լինում, վորոնք, փոթորիկը նախազգալով, վհատվում են, սկսում են նվնվալ ու բարոյալքում են իրենց իսկ սեփական շարքերը․ «Ա՛յ քեզ դժբախտություն, փոթորիկ է սկսվում, տղե՛րք, փռվեցե՛ք մակույկի հատակին, աչքներդ փակեցե՛ք, գուցե մի կերպ ափ հանի»»[1]։

Ընկեր Ստալինը միշտ գլխավորում եր և գլխավորում է նրանց, ովքեր չեն վախենում փոթորկից, ովքեր ամուր բռնում են ղեկից, համարձակ կտրում ալիքները և վստահ

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 360։

գնում դեպի կոմունիզմ։ Յեվ այդ պատճառով ել այն ամենը, ինչ ակտիվ է, առաջավոր, յերիտասարդ, ինչ պայքարի յե նետվում կոմունիզմի համար, ձգտում է դեպի նա։

Ընկեր Ստալինը, վորպես մարդկային հասարակության մեծ բարեփոխող, կուսակցության XV համագումարի առաջ և դրանով իսկ ամբողջ յերկրի առաջ նոր խնդիր դրեց․ մի աստիճան ե՛լ ավելի վեր բարձրանալու, դեպի սոցիալիզմ ելի մի քայլ անելու համար—կոլեկտիվացնել գյուղացիական տնտեսությունը։

Այս խնդիրն անհամեմատ ավելի դժվար է, քան յերկրի ինդուստրացման խնդիրը՝ ինչպես կազմակերպական-տեխնիկական, այնպես ել առանձնապես քաղաքական տեսակետից։ Չէ վոր բանվոր դասակարգն իր պրոլետարական գաղափարները կենսագործում եր մի դասակարգի նկատմամբ, վորը թեպետ նրան մոտիկ է, ըստ աշխատանքի հարազատ է ու բազմամյա դաշնակից է ցարիզմի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ մղած պայքարում, բայց այնուամենայնիվ պրոլետարական դասակարգ չէ։

Այս հարցում, ավելի քան վորևէ այլ հարցում, կիրառելի յե ստալինյան սկզբունքը․ վորպեսզի կուսակցության ընդունած վորոշումներն եֆեկտիվորեն կենսագործվեն, անհրաժեշտ է մասսաների կամ, առնվազն, այդ վորոշման անհրաժեշտությունն ու կարևորությունը հասկացող, նրան համակրող զգալի մեծամասնության աջակցությունը։ Բայց չի ել կարելի հետ մնալ ժամանակի պահանջից, այլապես հեշտությամբ կարելի յե մասսաների պոչում մնալ։ Իսկ «պոչականությունն» ամենից ավելի ստորացուցիչ խոսք է բոլշևիկյան կուսակցության մեջ։

Կուսակցության ու խորհրդային կառավարության բոլոր վորոշումները, վորոնք ընդունված են ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, ներգործությամբ, մասսաներից առաջ գնացող և յերբեք նրանցից չկտրվող ղեկավարության որինակ են ծառայում։

Անհատական գյուղացիական տնտեսության կոլեկտիվացումն ընկեր Ստալինի հասարակական-քաղաքական գործունեության փայլուն եջերից մեկն է։

Բնականաբար, առաջ մարքսիստական գրականության մեջ մենատնտես գյուղացիության անցումը տնտեսության կոլեկտիվ ձևերին ամենաընդհանուր գծերով էր մտածվում: Այստեղ ընկեր Ստալինի միտքը ծավալվեց ամենայն ընդարձակությամբ: Նա տվեց այս հարցի հանճարեղ ըմբռնումն ու թեորիական հիմնավորումը, նրա կապը յերկրի ամբողջ էկոնոմիկայի հետ, գյուղացիության նյութական ռեսուրսների և կոլեկտիվանալու ընդունակության, կուլակության ընդդիմադրության աստիճանի, իներտ մասսաների դիմադրականության և, վերջապես, կուսակցության քաղաքական պատրաստվածության, մասսաներին այս մեծ գործի համար վոտքի հանելու նրա ընդունակության հաշվառքը:

Միայն այն մարդը, վորը կատարելապես տիրապետում է մարքսիզմ-լենինիզմին, մարքսիստական դիալեկտիկային, վորը գիտե հաշվի առնել շրջապատող պայմանների բոլոր տարրերը և դրանք ոգտագործել կոմունիզմի շահերի համար,—միայն այդպիսի մարդը կարող էր գլուխ բերել այս վիթխարի խնդիրը, վորը կոմունիզմի շինարարության կարևորագույն պրոբլեմներից մեկն է հանդիսանում:

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ կուսակցության XV համագումարը վորոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին, վորով Խորհուրդների յերկրի գյուղացիության նոր պատմության սկիզբը դրվեց: Պատճառաբանելով գյուղատնտեսությունը կոլեկտիվացնելու անհրաժեշտությունը, ընկեր Ստալինն այս համագումարում ասում էր. «մեր փոշիացած գյուղատնտեսական արտադրությունը չունի այն առավելությունները, վոր ունի մեր խոշոր, միավորված, ազգայնացված արդյունաբերությունը: Գյուղատնտեսական արտադրությունն ամենից առաջ ազգայնացված չէ ու միավորված չէ, այլ փոշիացած է ու փոքր կտորներով ցրիվ տված: Նա պլանային կարգով չի տարվում և առայժմ իր ահագին մասով յենթարկված է մանր արտադրության տարերքին: Նա չի միավորված և չի խոշորացված կոլեկտիվացման գծով, այդ պատճառով դեռևս շահագործելու համար դաշտ է ներկայացնում կուլակային տարրերի համար: Այս հանգամանքները փոշիացած գյուղատնտեսությունը զրկում են խոշոր, միավորված ու պլանային կարգով տարվող արտադրության այն վիթխարի առավելություններից, վոր ունի մեր ազգայնացված արդյունաբերությունը...

Հապա վո՞րն է յելքը: Յելքը անցումն է գյուղացիական մանր ու փոշիացած տնտեսություններից խոշոր ու միավորված տնտեսությունների՝ հողի հասարակական մշակման հիմքի վրա, հողի կոլեկտիվ մշակման անցնելը նոր, ավելի բարձր տեխնիկայի բազայի վրա: Յելքն այն է, վոր գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսություններն աստիճանաբար, բայց անշեղորեն, վոչ թե սեղմելու կարգով, այլ ցույց տալու և համոզելու կարգով, միավորենք վորպես խոշոր տնտեսություններ հողի հասարակական, ընկերային, կոլեկտիվ մշակման հիմքի վրա, գործ դնելով գյուղատնտեսական մեքենաներ ու տրակտորներ, կիրառելով հողագործության ինտենսիֆիկացիայի գիտական յեղանակներ: Այլ յելքեր չկան: Առանց դրան մեր գյուղատնտեսությունն ի վիճակի չէ վո՛չ հասնելու գյուղատնտեսական տեսակետից ամենից ավելի զարգացած կապիտալիստական յերկրներին (Կանադան և նրա նմանները), վո՛չ էլ նրանցից առաջ անցնելու»[1]:

Ընկեր Ստալինը հերթի դրեց կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատով սոցիալիզմի պլանաչափ հարձակում կազմակերպելու հարցը: Այս խնդրին համապատասխան՝ կուսակցության XV համագումարը դիրեկտիվ տվեց ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլան կազմելու մասին:

1929 թ. ապրիլին XVI կուսակցական կոնֆերենցիան ընդունեց առաջին հնգամյա պլանի լավագույն վարիանտը:

Ստալինյան առաջին հնգամյակը սոցիալիզմի համար մղվող պայքարի դրոշը դարձավ: Բանվոր դասակարգի մեջ լայն աշխատանքային վերելք ծավալվեց սոցիալիստական մրցության ու հարվածայնության հիման վրա:

---

[1] Ստալին, Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը ՀամԿ(բ)Կ XV համագումարին, հայ. հրատ., էջ 35—36:

XI

1929 թ. երկրորդ կեսից սկսվեց աշխատավոր գյուղացիության մասսայական անցումը միանձնյա տնտեսությունից կոլեկտիվ տնտեսության: Կուսակցությանն ու բանվոր դասակարգին հաջողվեց գյուղացիության հիմնական մասսային զարգացման հին, կապիտալիստական ուղուց դարձնել դեպի նոր, սոցիալիստական ուղի:

Կուլակության դեմ՝ կուսակցության հարձակման անցնելու կապակցությամբ Բուխարինի—Ռիկովի—Տոմսկու աջօպորտունիստական խումբը բացահայտորեն հանդես յեկավ կուլակներին պաշտպանելու ոգտին, ընդդեմ կուսակցության գծի:

Տրոցկիստական օպոզիցիայի տեղը գրավեցին աջերը, վորոնք ըստ եյության ամբողջ հակակուսակցական խառնամբոխ եյին ներկայացնում: Յեվ այդ բնական ել ե, վորովհետև կուսակցության լենինյան գիծը,—ինդուստրացման, կոլեկտիվացման, սոցիալիզմի կառուցման գիծը,— կապիտալիզմի ռեստավրացիայի ձգտող աջերի համար նույնքան անընդունելի յեր, վորքան և տրոցկիստների համար:

1929 թիվն ընկեր Ստալինն անվանեց «մեծ բեկման տարի»:

Կուսակցության XVI համագումարին արած քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինը տվեց գյուղացիության պատմական շրջադարձի խոր ու բազմակողմանի հիմնավորումը: «Գյուղացիության շրջադարձը դեպի կոլեկտիվացումը միանգամից չսկսվեց: Նա, այդ շրջադարձը, չեր ել կարող միանգամից սկսվել: Ճիշտ ե, կոլեկտիվացման լոզունգը կուսակցությունը հռչակել եր տակավին XV համագումարում: Բայց գյուղացիության մասսայաբար սոցիալիզմի կողմը դառնալու համար դեռևս բավական չե լոզունգ հռչակելը: Շրջադարձի համար պահանջվում ե գոնե ելի մի հանգամանք, այսինքն՝ այն, վոր գյուղացիական մասսաներն իրենք համոզվեն հռչակված լոզունգի ճիշտ լինելուն և այն ընդունեն իբրև իրենց սեփական լոզունգը: Ուստի և այդ շրջադարձն աստիճանաբար եր նախապատրաստվում: Այն նախապատրաստվում եր մեր զարգացման ամբողջ ընթացքով, մեր ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով և ամենից առաջ այն ինդուստրիայի զարգացմամբ, վոր գյուղատնտեսությանը մեքենաներ ու տրակտորներ ե մատակարարում: Այն նախապատրաստվում եր կուլակության դեմ ուղղված վճռական պայքարի քաղաքականությամբ և մեր հացամթերումների ընթացքով՝ 1928 ու 1929 թ. թ. նրանց այն նոր ձևերով, վորոնք կուլակային տնտեսությունը դնում եյին չքավոր-միջակ մասսաների վերահսկողության տակ: Այն նախապատրաստվում եր գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, վորը անհատական գյուղացուն ընտելացնում ե գործը կոլեկտիվորեն վարելու: Այն նախապատրաստվում եր կոլտնտեսությունների ցանցի միջոցով, վորտեղ գյուղացին ստուգում եր տնտեսության կոլեկտիվ ձևերի առավելությունն անհատական տնտեսության հանդեպ: Այն, վերջապես, նախապատրաստվում եր բովանդակ ԽՍՀՄ մեջ ցրված և նոր տեխնիկայով զինված խորհտնտեսությունների ցանցի միջոցով, վորտեղ գյուղացին հնարավորություն եր ստանում համոզվելու նոր տեխնիկայի ուժին ու առավելություններին»[1]:

Գյուղացիների մասսայաբար մտնելը կոլտնտեսությունների մեջ՝ փոխեց դասակարգային ուժերի հարաբերակցությունն ել յերկրի եկոնոմիկայում: Գյուղում արդեն ստեղծվել եր բավականաչափ նյութական բազա, վորպեսզի կուլակության դիմադրությունը կոտրվի, նա վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկվի և կուլակային հացի արտադրությունը կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ փոխարինվի: Սրա կապակցությամբ խորհրդային իշխանությունը 1929 թ. վերջում գյուղացիության չքավոր-միջակ մասսաների կատարյալ աջակցությամբ կուլակության նկատմամբ կտրուկ շրջադարձ կատարեց: Սահմանափակելու և դուրս մղելու քաղաքականությունից նա անցավ կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիայի քաղաքականությանը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 551—552:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումն ու կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան իրավամբ կոչվում է հեղափոխական հեղաշրջում, վորն իր հետևանքներով համազոր է 1917 թվականին տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջմանը:

Այդ համաշխարհային-պատմական հաղթանակ էր: Խորտակվեցին կուսակցության թշնամիների—տրոցկիստների ու բուխարինականների պնդումներն այն մասին, թե բանվոր դասակարգն անընդունակ է գյուղացիությանը կազմակերպել ու նրան սոցիալիստական ուղիով իր հետևից տանել:

Խորտակվեց «ՍՍՀՄ մեջ կապիտալիզմը վերականգնելու մասին յերազող բոլոր յերկրների կապիտալիստների վերջին հույսը,—«մասնավոր սեփականության սրբազան սկզբունքը»: Գյուղացիները, վոր նրանց կողմից դիտվում են վորպես մի նյութ, վորն աղբում է հողը կապիտալիզմի համար, մասսայորեն լքում են «մասնավոր սեփականության» գովված դրոշը ու փոխադրվում են կոլեկտիվիզմի ռելսերի վրա, սոցիալիզմի ռելսերի վրա: Խորտակվում է կապիտալիզմը վերականգնելու վերջին հույսը»[1]:

Կոլտնտեսությունների հաղթանակում մեծ դեր խաղացին մեքենա-տրակտորային կայանները: Առանց չափազանցնելու կարելի յե ասել, վոր ընկեր Ստալինը ՄՏԿ-ներում հայտնագործեց բանալի գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման համար՝ սոցիալիստական սկզբունքներով: Հենց ՄՏԿ-ների միջոցով էր, վոր բանվոր դասակարգը գյուղացիությանը ցույց էր տալիս ու ցույց է տալիս արտադրական օգնություն, իրականացնելով իր վերափոխող ներգործությունը գյուղի վրա:

Ընկեր Ստալինն ուշադրությամբ հետևում էր կոլեկտիվացման զարգացմանը: Նկատելով մի շարք շրջաններում կուսակցական գծի ծռում և խոտորումներ, վորի մեջ, անկասկած, մասնակցություն են ունեցել նաև ժողովրդի թշնամիները, ընկեր Ստալինը կուսակցությունը մոբիլիզացիայի յենթարկեց պայքարելու համար կոլտնտեսային շի-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 442:

նարարության մեջ նկատվող այս հակակուսակցական գծի դեմ: Նրա «Գլխապտույտ՝ հաջողություններից» հոդվածն օգնեց կուսակցական կազմակերպություններին ուղղելու թույլ տրված սխալները և կործանիչ հարված հասցրեց թշնամիներին, վորոնք հույս ունեյին խոտորումներն օգտագործել՝ գյուղացիությունը Խորհրդային իշխանության դեմ գրգռելու համար:

«Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել,—հարցնում էր ընկեր Ստալինը,—ունտեր Պրիշիբեյևի այդ «քաղաքականության» ու կուսակցության քաղաքականության միջև, վորը կոլտնտեսային շինարարության գործում հենվում է կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման վրա: Պարզ է, վոր դրանց միջև վոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել:

Ո՞ւմ են պետք կոլտնտեսային շարժման այդ ծռումները, այդ չինովնիկական դեկրետավորումը, այդ անարժան սպառնալիքները գյուղացիների նկատմամբ: Վոչ վոքի՛, բացի մեր թշնամիներից:

Ինչի՞ կարող են հանգեցնել դրանք, այդ ծռումները: Մեր թշնամիների ուժեղացմանն ու կոլտնտեսային շարժման գաղափարների պսակազերծմանը:

Պարզ չէ՞ արդյոք, վոր այդ ծռումների հեղինակները, վորոնք իրենց «ձախ» են յերևակայում, իրականում ջուր են լցնում աջ ոպորտունիզմի ջրաղացին»[1]:

Մի ամիս անց ընկեր Ստալինը հանդես յեկավ «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» նոր հոդվածով, վորի մեջ յերևան հանեց կոլտնտեսային շարժման մեջ տեղի ունեցած գլխավոր սխալները և այդ սխալների բուն արմատը:

Ահա կուսակցական քաղաքականության այդ անշեղ վարումն ընկեր Ստալինի կողմից, զանազան ծռումների ու սխալների ուղղումը, համապատասխան ցուցումներ նրա կողմից կուսակցական ու խորհրդային օրգաններին—նպաստեցին կոլտնտեսային շարժման հետագա զարգացմանը:

1930 թ. հունիս-հուլիսին կայացած՝ կուսակցության

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 482—483:

XVI համագումարը սոցիալիզմի՝ ամբողջ ճակատով ծավալուն հարձակման համագումարն էր:

Այդ ժամանակի մոտերքը սոցիալիստական ինդուստրացման հաջողություններն այնպես էին, վոր ԽՍՀՄ-ն արդեն դառնում էր ագրարային յերկրից ինդուստրիալ յերկրի փոխարկվելու նախորյակին: Մասսաներում մարտական յոգունդ առաջացավ հնգամյակը չորս տարում կատարելու մասին:

Նշանակալից բեկում ձեռք բերվեց նաև գյուղատնտեսության զարգացման մեջ: Կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները դառնում էին վճռական ուժ գյուղատնտեսական էկոնոմիկայում, իսկ կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ Խորհրդային իշխանության ամուր հենարանը գյուղում:

Այս ամենը նշանակում էր, վոր Խորհրդային Միությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ մտել է սոցիալիզմի ժամանակաշրջանը:

Կուսակցության XVI համագումարն ամրացրեց ձեռք բերված հաղթանակները և հետագայում ապահովեց սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը:

1931 թ. փետրվարին սոցիալիստական արդյունաբերության աշխատողների կոնֆերենցիայում արտասանած իր ճառում ընկեր Ստալինը կուսակցության ու յերկրի առաջ նոր խնդիրներ է ուրվագծում. «Առաջավոր յերկրներից մենք հետ ենք մնացել 50—100 տարով: Այս տարածությունը մենք պետք է կարենք-անցնենք 10 տարում: Կամ մենք այս բանը կանենք, կամ մեզ կճզմեն...

Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամանակ է, վոր բոլշևիկներն իրենք մասնագետներ դառնան: Վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ»[1]:

Իր այս յելույթով ընկեր Ստալինը պայքարի սկիզբը դրեց բոլշևիկների ուժերով տեխնիկային տիրապետելու համար և դրանով իսկ կուսակցությանն ու բանվոր դասակար-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 658, 660:

գին ցույց տվեց վճռական ողակն ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ:

Սոցիալիստական վերակառուցումը ծավալվեց ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ:

Կոլտնտեսությունները վորպես գյուղատնտեսության սոցիալիստական ձև նոր գործ էին: Պահանջվում էր բացառիկ ուշադրություն ու հմուտ ղեկավարություն կուսակցության կողմից աշխատանքային կարգապահությունը կարգավորելու, աշխատանքը կազմակերպելու, յեկամուտները բաշխելու գործում, հավասարեցման ու դիմազրկության դեմ պայքարելու մեջ: Բայց հարկավոր էր առանձնապես ուշադրությամբ հետևել կուլակային այն տարրերի վոտնձգություններին, վորոնք կոլտնտեսություններ էին սողոսկում՝ նրանք ներսից խարխլելու ու քայքայելու նպատակով:

Ընկեր Ստալինը խնդիր առաջադրեց կոլտնտեսությունները կազմակերպորեն-տնտեսապես ամրապնդելու: Կուլակային վնասարարությանը վերջ տալու և կոլտնտեսություններին մարդկանցով, խորհուրդներով ու ղեկավարությամբ ոգնություն ցույց տալու համար նա հարց դրեց ՄՏԿ-ներին կից քաղբաժիններ ստեղծել:

Հարվածային-կոլտնտեսականների I Համամիութենական համագումարում 1933 թ. փետրվարին ընկեր Ստալինը ծավալեց կոլտնտեսությունների բոլշևիկյան ամրապնդման ու կոլտնտեսային ունևոր կյանքի համար մղելիք պայքարի ծրագիրը: Վորպեսզի բոլոր կոլտնտեսականներին ունևոր կյանքի մակարդակի վրա բարձրացնենք, իսկ բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան դարձնենք, «այժմ դրա համար,—ասում էր նա,—միայն մի բան է պահանջվում—աշխատել կոլտնտեսության մեջ ազնվորեն, ճիշտ ոգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ ոգտագործել բանող անասուններին, ճիշտ մշակել հողը, պահպանել կոլտնտեսային սեփականությունը»[1]: Այս ծրագիրը դարձավ կոլտնտեսականների մարտական դրոշը:

Առաջին ստալինյան հնգամյակի հաջող կատարման

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 781:

հետևանքով Խորհրդային Միությունն ագրարային յերկրից փոխարկվեց ինդուստրիալ յերկրի: Տնտեսության սոցիալիստական սիստեմը կապիտալիստական տարրերը լիկվիդացիայի յենթարկեց ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում: Վերջ է դրված գործազրկությանը քաղաքում և չքավորությանը գյուղում: Վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից: ԽՍՀՄ բոլոր աշխատավորների համար բաց է ճանապարհը դեպի ունևոր ու կուլտուրական կյանք:

Դա ԽՍՀՄ բանվոր դասակարգի ու գյուղացիության հսկայական, համաշխարհային-պատմական հաղթանակն էր, վորը ձեռք էր բերվել կատաղի պայքարում ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

«...Այս ամենի հետևանքը,—ինչպես մատնանշում էր ընկեր Ստալինը Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումում 1933 թ. հունվարի 7-ին,—այն յեղավ, վոր Խորհրդային Միությունը թույլ և պաշտպանության համար անպատրաստ յերկրից վերածվեց հզոր յերկրի՝ պաշտպանունակության իմաստով, մի յերկրի, վորը պատրաստ է ամեն տեսակ պատահականությունների հանդեպ, մի յերկրի, վորն ընդունակ է մասսայական մասշտաբով արտադրելու պաշտպանության բոլոր արդիական գործիքները և մատակարարելու դրանք իր բանակին՝ դրսից կատարվող հարձակման դեպքում»[1]:

1934 թ. հունվարին կայացած ՀամԿ(բ)Կ XVII համագումարը հավաստեց կուսակցության լենինյան-ստալինյան գլխավոր գծի լիակատար հաղթանակը և նշեց սոցիալիզմի վճռական հաջողությունները տնտեսության ու կուլտուրայի բոլոր ճյուղերում: Այս համագումարում հաստատվեց ստալինյան յերկրորդ հնգամյակը, վորն ապահովում էր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցման ավարտումը և շահագործող դասակարգերի վերջին մնացորդների լիկվիդացիան մեր յերկրում:

Ժամանակակից կապիտալիստական յերկրներում կառավարությունների քաղաքականությունը պատառ-պատառ է

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 720:

լինում կապիտալի մոնոպոլիստական խմբերի հակասական շահերով, այս խմբերի մասնավոր շահերն ավելի ու ավելի յեն գերակշռություն ձեռք բերում վոչ միայն համապետական շահերի վրա, այլև ամբողջ իշխող դասակարգի շահերի վրա:

Այն մարդիկ, վորոնք կապիտալիստական յերկրներում իշխանության գլուխ են կանգնած, հազվադեպ են շատ կամ քիչ հեռավոր հեռանկարներ ունենում վոչ միայն իրենց պետության սոցիալական զարգացման նկատմամբ, այլև համազգային շահերի նկատմամբ: Այնտեղ սովորաբար պետական գործիչները խուսանավում են, ձգտելով տարբեր շահերի հակասությունների սուր անկյունները կոտրել, կոմպրոմիս գտնել: Ղեկավարության մեջ ավելի հաջողություն են ունենում ճարպիկները, վորոնք կարողանում են հակադիր շահերը գտնել, ծախել, համաձայնեցնել: Հասկանալի յե, վոր այսպիսի «քաղաքականությունը» յենթակա յե անսպասելի պատահականությունների իրենց իսկ քաղաքագետների համար: Միակ բանը, վորին համերաշխ են բուրժուազիայի իրար դեմ պայքարող բոլոր խմբերը,—դա բնազդական յերկյուղն է ու ատելությունը պրոլետարիատի հանդեպ, նրա ավելի շատ շահագործելու ծարավը: «Բուրժուազիան,—գրում էր Լենինը,—միայն այն ժամանակ է պետությունն ուժեղ ճանաչում, յերբ նա կարող է պետական ապարատի ամբողջ զորությամբ նետել մասսաներին այնտեղ, ուր բուրժուական կառավարողներն են ուզում»[1]:

Պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը սկզբունքորեն այլ է: Նա հակոտնյա յե կապիտալիստական պետությանը, վորը ստեղծվել է տարերային, կույր դասակարգային ուժերի պայքարի հետևանքով: Պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը ստեղծվել է պրոլետարիատի հաղթանակի հետևանքով: Նա ստեղծվել է պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների գիտակցական կամքով՝ բոլոր շահագործող դասակարգերը ճնշելու և լիկվիդացիայի յենթարկելու, մարդու կողմից մարդու ամեն մի շահագործումը վոչնչացնելու, սոցիալիզմ կառուցելու նպատակով:

[1] Լենին, հ. XXII, հայ. հրատ., էջ 23:

Մեր կառավարության առջև պարզորոշ է իր գործու-
նեյության նպատակը—կենսագործել կոմունիստական կու-
սակցության ծրագիրը, դարձնել պետությունն ուժեղ: Յեվ
քանի վոր պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը
միակ պետությունն է աշխարհում, շրջապատված կապիտա-
լիստական յերկրներով, ապա ղեկավարության կարևորա-
գույն խնդիրն է ապահովել նրա պաշտպանունակությունը:
Մեր պետության ղեկավարությունը հարկադրված է
շատ բարդ քաղաքականություն վարել, միշտ պատրաստ լի-
նել ամեն տեսակ պատահականությունների հանդեպ, վո-
րովհետև աշխարհի ղեկավարները ծարավի յեն նրա կոր-
ծանման և, վորսորդների նման, նրա զարգացման ու ամ-
րապնդման ուղիների վրա ամեն տեսակ ղարաններ, թա-
կարդներ և ծուղակներ են սարքում: Մեր ղեկավարությու-
նը պետք է կատարելության բարձր աստիճանի վրա լինի:
Ընկեր Ստալինն էլ հենց այսպիսի ղեկավարության օրի-
նակներ է ցույց տալիս: Նրա հասարակական-քաղաքական
գործունեյությունից վերը բերված բոլոր չոր ու ցամաք
փաստերը վառ կերպով իլյուստրացիայի յեն յենթարկում
հասարակական-քաղաքական յերևույթներում կողմնորոշ-
վելու նրա հսկայական ընդունակությունը, դեպքերի զար-
գացման պրոցեսները ճշտորեն կանխատեսելու ընդունակու-
թյունը: Իսկ ղեկավարի, առաջնորդի ամենաարժեքավոր
ձիրքն էլ հենց այս է:
Մեկ հայացք գցեք նրա կյանքի վրա: Պատանին հան-
նիբալյան յերդում է տալիս իրեն ամբողջովին առանց մնա-
ցորդի նվիրել բանվոր դասակարգի գործին, նրա շահերի
համար, աշխատավոր մասսաների շահերի համար մղելիք
պայքարին: Քառասուն տարուց ավելի նա անընդհատ կանգ-
նած է պայքարող պրոլետարիատի առաջավոր շարքերում:
Լենինի հետ միասին ընկեր Ստալինը ստեղծում ու
աճեցնում է կոմունիստական կուսակցությունը: Լենինի
հետ միասին առաջնորդում է նրան բանվոր դասակարգի
գլուխ անցած դեպի մարտ: Նահանջելով պարտությունների
ժամանակ, քաջալերում ու վոգևորում է նրան—վերջնական
հաղթանակը մե՛րն է: Բոլոր ուժերը գործ է դնում, վոր-
պեսզի պահպանի նրա մարտունակությունը, նրա կապը

մասսաների հետ և նախապատրաստի նոր մարտերի համար
ընդդեմ կապիտալիզմի:
Յերկրում կապիտալիզմը հաղթահարված է, ճանապարհ
է հարթված դեպի կոմունիզմի կառուցումը: Յեվ աշխատա-
վոր մասսաների հետ միասին, ղեկավարելով նրանց, ընկեր
Ստալինը կոմունիզմ է կառուցում:
Նրա ղեկավարությունը վոչ թե պատահականորեն, այլ
օրգանապես աճել-դուրս է յեկել աշխատավոր մասսաներից,
բանվոր դասակարգի պայքարող ավանգարդից—կոմունիս-
տական կուսակցությունից, պրոլետարիատի իդեալների
համար մղված բազմամյա պայքարից, նրա՝ մասսաների
հետ ունեցած մշտական զոդվածությունից: Սրանումն է
ստալինյան ղեկավարության օրգանական միասնությունը
մասսաների հետ: Զուր չէ, վոր մասսաները վոգևորված
բացականչում են՝ «Մե՛ծ Ստալին, հարազա՛տ Ստալին»:
Մեծ և հարազատ... Այս ի՞նչպես շաղկապել մեկ ամ-
բողջության մեջ: Չէ վոր յերբ կինը կամ քույրն ասում է
«հարազատ»,—չի ավելացնում «մեծ»: Իսկ մասսաները շաղ-
կապում են: Յեվ նրանք դրա բարոյական իրավունքն ունեն:
Չէ վոր նա քաղաքականապես աճել, կոփվել է բանվորա-
գյուղացիական մասսաների միջավայրում: Չէ վոր հենց
մասսաները, բանվոր դասակարգը, գյուղացիությունը պայ-
քարել են նրա հետ ուս ուսի տված: Չէ վոր հենց նրա
իդեաները, ձգտումներն ու նպատակները ժողովրդի, բան-
վոր դասակարգի, կոմունիստական կուսակցության իդեա-
ները, ձգտումներն ու նպատակներն են: Հապա էլ ի՞նչպես
նա հարազատ չլինի: Հենց հարազա՛տ, մե՛ծ:
Պատմությունն անաչառ դատավոր է: Բայց նրա դեմ-
հանդիման, առանց շփոթվելու, կարող է կանգնել Խորհր-
դային յերկրի ղեկավարությունը, կուսակցության ղեկա-
վարությունը: Ընկեր Ստալինը, վորպես փորձված նավա-
պետ, պետական նավը նշված ուղիով համարձակորեն տա-
նում է դեպի կոմունիզմ:
Զուր չէ, վոր մեր կուսակցության տաղանդավոր գոր-
ծիչներից մեկը, հանգուցյալ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը,
հռետորային վոգեշնչման ժամանակ ասաց. «Դժվար է մարդ-
իրեն պատկերացնում այն գիգանտի կերպարանքը, վորպի-

սին հանդիսանում է Ստալինը: Վերջին տարիների ընթացքում, սկսած այն ժամանակից, երբ մենք աշխատում ենք առանց Լենինի, մենք չգիտենք մեր աշխատանքում կատարված ոչ մի շրջադարձ, ոչ մի քիչ թե շատ խոշոր ձեռնարկում, լոզունգ, ուղղություն՝ մեր քաղաքականության մեջ, որի հեղինակն ընկեր Ստալինը չլիներ, այլ ուրիշ որևէ մեկը: Ամբողջ հիմնական աշխատանքը—այս պետք է իմանա կուսակցությունը—ընթանում է ընկեր Ստալինի ցուցումներով, նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: *Միջազգային քաղաքականության ամենամեծ հարցերը վճռվում են նրա ցուցումով, և ոչ միայն այս մեծ հարցերը, այլև, ըստ երևույթին, երրորդական և նույնիսկ տասներորդական նշանակություն ունեցող հարցերը հետաքրքրում են նրան, եթե դրանք վերաբերում են մեր երկրի բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորներին*»[1]:

Այստեղ ամեն ինչ սկզբից մինչև վերջը ճիշտ է:

XII

Առաջնորդի—պետական նավի խորհրդային նավապետի հայացքն ուղղված է շատ առաջ, դեպի ապագայի հեռավոր խորքերը, բայց դրա հետ միասին նա ամեն ինչ տեսնում է իր շուրջը, զգաստությամբ հետևում է պետական նավի ամրությանը; Նա հրաշալիորեն կարողանում է նկատել մեծն ամենափոքրում և նորի ընձյուղները հնում: Նա կատարելապես տիրապետում է լենինյան արվեստին՝ որոշել տվյալ մոմենտին վճռական օղակը քաղաքական շղթայում:

Այսպես, 1935 թ. մայիսին Կարմիր Բանակի ակադեմիականների ավարտման առթիվ արտասանած իր ճառում ընկեր Ստալինն ասաց. «Առաջ մենք ասում էինք, որ «տեխնիկան վճռում է ամեն ինչ»: Այդ լոզունգը մեզ օգնեց այն տեսակետից, որ մենք վերացրինք սովը տեխնիկայի բնագավառում և տեխնիկական ամենալայն բազա

[1] Киров, Избранные статьи и речи, стр. 609—610, Госполитиздат, 1939 г.

ստեղծեցինք գործունեության բոլոր ճյուղերում՝ մեր մարդկանց առաջնակարգ տեխնիկայով զինելու համար: Այդ շատ լավ է: Սակայն դա շատ և շատ քիչ է: Տեխնիկան շարժման մեջ դնելու և մինչև վերջն օգտագործելու համար հարկավոր են տեխնիկային տիրապետած մարդիկ, հարկավոր են այնպիսի կադրեր, որոնք ընդունակ լինեն յուրացնելու և օգտագործելու այդ տեխնիկան՝ արվեստի բոլոր կանոններով: Տեխնիկան՝ առանց տեխնիկային տիրապետած մարդկանց՝ մեռած է: Այն տեխնիկան, որին գլխավորում են տեխնիկային տիրապետած մարդիկ, կարող է հրաշքներ գործել և պետք է գործի: Եթե մեր առաջնակարգ գործարաններում և ֆաբրիկաներում, մեր խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում, մեր տրանսպորտում, մեր Կարմիր Բանակում լինեյին բավականաչափ այնպիսի կադրեր, որոնք ընդունակ են թամքել այդ տեխնիկան, մեր երկիրը եռապատիկ ու քառապատիկ ավելի էֆֆեկտ կտար, քան նա ունի այժմ: Ահա թե ինչու այժմ շեշտը պետք է դնել տեխնիկային տիրապետած մարդկանց վրա, կադրերի վրա, աշխատողների վրա: Ահա թե ինչու այն հին լոզունգը, թե՝ «տեխնիկան վճռում է ամեն ինչ», որը հանդիսանում է արդեն անցած ժամանակաշրջանի արտացոլումը, երբ մեզ մոտ սով կար տեխնիկայի բնագավառում,—այժմ պետք է փոխարինվի նոր լոզունգով, այն լոզունգով, թե՝ «կադրերը վճռում են ամեն ինչ»: Այդ է այժմ գլխավորը...

Պետք է, վերջապես, հասկանալ, որ աշխարհում գոյություն ունեցող բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր ու ամենավճռական կապիտալը մարդիկ են, կադրերը: Պետք է հասկանալ, որ մեր ներկա պայմաններում կադրերը վճռում են ամեն ինչ: Եթե մեզ մոտ լավ ու բազմաթիվ կադրեր լինեն արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության մեջ, տրանսպորտում, բանակում,—մեր երկիրն անպարտելի կլինի: Եթե չլինեն մեզ մոտ այդպիսի կադրեր—մենք կկաղանք երկու ոտով»[1]:

[1] Ստալին, *Լենինիզմի հարցերը, ռուս.* 11-*րդ հրատ.*, *էջ* 490, 491:

Դժվար թե կարելի լինի վերագնահատել ընկեր Ստալինի այս ճառի նշանակությունը: Նա արդիականության նշանավոր շարժման—ստախանովյան շարժման հզոր խթանը հանդիսացավ, շարժում, վորն իրավամբ կոչվում է ընկեր Ստալինի զավակ:

Ստախանովականների I Համամիութենական խորհրդակցությանը 1935 թ. նոյեմբերին ընկեր Ստալինը հրաշալի կերպով բնորոշեց ստախանովյան շարժման դերն ու նշանակությունը կոմունիզմի համար մղվող պայքարում: Նա ասում էր, վոր ստախանովյան շարժումն «արտահայտում է սոցիալիստական մրցության նոր վերելք, սոցիալիստական մրցության նոր, բարձրագույն էտապ...

Ստախանովյան շարժման նշանակությունն այն է, վոր նա հանդիսանում է մի այնպիսի շարժում, վորը խորտակում է հին տեխնիկական նորմաները, վորպես անբավարար նորմաներ, առաջ է անցնում մի ամբողջ շարք դեպքերում առաջավոր կապիտալիստական յերկրների աշխատանքի արտադրողականությունից և, այսպիսով, բաց է անում մեր յերկրում սոցիալիզմի հետագա ամրապնդման գործնական հնարավորությունը, մեր յերկիրն ամենից ավելի ունևոր յերկրի փոխարկելու հնարավորությունը:

Բայց սրանով չի սպառվում ստախանովյան շարժման նշանակությունը: Նրա նշանակությունը նաև այն է, վոր նա պայմաններ է նախապատրաստում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար...

Վոր նա իր մեջ պարունակում է բանվոր դասակարգի ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի հատիկը, վոր նա մեզ համար բաց է անում այն ուղին, վորի վրա միմիայն կարելի յե աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշները ձեռք բերել, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու, և հակադրությունը մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջև վոչնչացնելու համար»[1]:

Ընկեր Ստալինը շատ ուշադրություն է հատկացնում ստախանովյան շարժման զարգացմանը, և այն սկսել է խոշորապես թափանցել տնտեսական ու գիտական գործունեյության բոլոր վոլորտները: Այժմ չկա վոչ մի ճյուղ արդյունաբերության, գյուղատնտեսության ու գիտության մեջ, վորտեղ լայն ալիքի պես չհեղեղեր մեր դարաշրջանի այս մեծ շարժումը, չգրավեր աշխատավորների նորանոր խավեր, փոխելով նրանց վերաբերմունքը դեպի աշխատանքը, դեպի հասարակական սոցիալիստական սեփականությունը:

Ընկեր Ստալինը վոչ միայն կարողանում է կուսակցության ու լայն ժողովրդական մասսաների ուշադրությունը լենինաբար բևեռել տվյալ մոմենտին այս կամ այն հանգուցային հարցի վրա, այլ դրա հետ միասին նա կարողանում է լենինաբար խորը վերլուծել յերկրի սոցիալ-տնտեսական զարգացումը և այդ վերլուծության հիման վրա նախաձեռնում է համարձակ քաղաքական գործողություններ: Այդ տեսակետից ամենաբնորոշ որինակն է հանդիսանում ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը:

Ասում են, վոր մեծ ճշմարտությունները պարզ են: Ցեվ խոսք, յերբ ստալինյան միտքը մարմնավորվեց Խորհուրդների յերկրի Հիմնական Որենքի փայլուն ստալինյան ձևի մեջ, ապա ամենքը տեսան, թե ինչպես այդ հասարակ է և միևնույն ժամանակ բանական, նպատակահարմար ու քաղաքականապես անհրաժեշտ: Ահա այստեղ է, վոր արտահայտվեց պրոլետարական առաջնորդի մեծությունը:

Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ ժողովուրդների պայքարի ու հաղթանակների հանրագումարը հանդիսացավ: Իսկ բացի դրանից նա դրոշ դարձավ կապիտալիստական աշխարհի բոլոր աշխատավորների ու շահագործվողների համար: Այդ մասին հրաշալիորեն ասել է ընկեր Ստալինը Խորհուրդների Արտակարգ VIII Համամիութենական համագումարում Սահմանադրությունը քննարկելիս.

«Յեթե կապիտալիստական յերկրների ժողովուրդների համար ԽՍՀՄ Սահմանադրությունը կունենա գործողությունների ծրագրի նշանակություն, ապա ԽՍՀՄ ժողովուրդների համար նա ունի իրենց պայքարի հանրագումարի նշանակություն, մարդկության ազատագրման ճակա-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, ռուս. 11-րդ հրատ., էջ 493, 494—495, 496:

տում նրանց տարած հաղթությունների նշանակություն: Որպես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում ե մեր հաղթությունների պտուղների մասին: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթությունը: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր այդ արյունն իր արդյունքներն ե տվել: Դա հոգեպես զինում ե մեր բանվոր դասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ ե շարժում և բարձրացնում ե որինական հպարտության զգացմունքը: Դա ամրապնդում ե հավատը դեպի մեր ուժերը և մոբիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար»[1]:

Ստալինյան Սահմանադրության ընդունումով ավարտվեց անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցելու ամբողջ պատմական շրջանը: Սկսվեց կոմունիզմի կառուցման համար մղելիք պայքարի ժամանակաշրջանը:

1939 թ. մարտին կայացավ կուսակցության XVIII համագումարը: Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ընկեր Ստալինը՝ կոմունիզմի առաջին փուլից նրա յերկրորդ փուլին անցնելու համար պայքարի ծրագիր ծավալեց: Նա ասում եր. «Մենք կապիտալիստական գլխավոր յերկրներից անցել ենք արտադրության տեխնիկայի և արդյունաբերության զարգացման տեմպերի իմաստով: Այդ շատ լավ ե: Բայց այդ քիչ ե: Հարկավոր ե նրանցից անցնել նաև տնտեսական տեսակետից: Մենք այդ կարող ենք անել, և մենք այդ պետք ե անենք: Միայն այն դեպքում, յեթե տնտեսապես անցնենք կապիտալիստական գլխավոր յերկրներից, մենք կարող ենք հույս ունենալ, վոր մեր յերկիրը լիովին հագեցված կլինի սպառման առարկաներով, մեզ մոտ կլինի մթերքների առատություն, և մենք հնարավորություն կու-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, ռուս. 11-րդ հրատ., եջ 534:

նենանք կոմունիզմի առաջին փուլից անցում կատարելու դեպի նրա յերկրորդ փուլը»[1]:

Ընկեր Ստալինը նոր ուղիներ ե հարթել պետության, վորպես կոմունիստական հասարակություն կառուցելու ժամանակ բանվոր դասակարգի հզոր գործիքի, ըմբռնման մեջ:

Յեթե հավաքենք ու սիստեմավորենք այն ամենը, ինչ ընկեր Ստալինն ասել ե պետության մասին ընդհանրապես և առանձնապես պրոլետարիատի դիկտատուրայի պետության մասին, ապա կկազմվեր մի կապիտալ աշխատություն՝ սոցիալիստական պետության, կոմունիզմի համար մղվող պայքարում նրա ունենալիք դերի և պրոլետարիատի դիկտատուրայի պետության դեմ մղած պայքարում կապիտալիստական պետության ունեցած դերի թեորիայի մասին:

Ընկեր Ստալինը պատկանում ե այն մարդկանց թվին, վորոնք վոչ միայն գրում են պատմությունը, այլև կերտում այն: Նա վոչ միայն ստեղծեց, ավարտեց սոցիալիստական պետության թեորիան, այլ Լենինի հետ միասին նա նաև կառուցեց այն: Սրան համապատասխան նրա թեորիական աշխատությունները վոչ միայն լուսավորում են սոցիալիստական պետության զարգացման հետագա ուղիները, այլ դրա հետ միասին նրանք կարծես կառուցողի աշխատանքային գծագրեր են հանդիսանում: Նրանց մեջ դուք շարունակ հանդիպում եք նաև անմիջական գործնական ցուցումների, թե ինչ պետք ե անել այսոր շինարարության այս կամ այն մասում: Թեորիայի ու պրակտիկայի ցայտունորեն արտահայտված միասնություն:

Վերջին տարիները նա անդուլ կերպով կուսակցության յուրաքանչյուր համագումարում մասսաների գիտակցության մեջ արմատավորում ե պրոլետարական պետության նշանակությունն ու դերը կոմունիստական հասարակություն կառուցելու գործում: Կուսակցության XVI համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ ընկեր Ստալինն ասում եր. «Պետական իշխանության բարձրագույն զարգա-

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, ռուս. 11-րդ հրատ., եջ 578—579:

ցում՝ պետական իշխանության մահացման համար պայմաններ նախապատրաստելու նպատակով,—ահա մարքսիստական ֆորմուլան»[1]:

Կուսակցության առանձին անդամների գլխներում սոցիալիստական պետության մահացման հարցի վերաբերյալ տիրող խառնաշփոթության կապակցությամբ ընկեր Ստալինը կուսակցության XVII համագումարում ասում եր. «Իբրև լոզունգ տրված այն թեզիսը, վորը վերաբերում ե մեր առաջընթացին դեպի անդասակարգ հասարակությունը, նրանք հասկացան վորպես տարերային պրոցես: Յեվ նրանք կշռադատում եյին. յեթե անդասակարգ հասարակություն ե, ապա նշանակում ե՝ կարելի յե թուլացնել դասակարգային պայքարը, կարելի յե թուլացնել պրոլետարիատի դիկտատուրան և ընդհանրապես վերջ տալ պետությանը, վորը միևնույն ե՝ պետք ե մահանա մերձավորագույն ժամանակներս: Յեվ նրանք հորթի հրճվանք եյին զգում այն ակնկալությամբ, թե շուտով վոչ մի դասակարգ չի լինի,—նշանակում ե՝ դասակարգային պայքար չի լինի,—նշանակում ե՝ հոգս ու հուզմունք չի լինի,—նշանակում ե՝ կարելի յե զենքը վայր դնել ու պառկել—քուն մտած սպասել անդասակարգ հասարակության գալստյանը»[2]:

Այստեղից նա նորից յեզրակացություն ե հանում՝ անհրաժեշտ ե պրոլետարիատի դիկտատուրայի պետությունն ամրապնդել, նրա ամրության միջով ե անցնում դեպի կոմունիզմ տանող ուղին:

Կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինը ե՛լ ավելի լայնորեն ու ավելի խոր կերպով դրեց սոցիալիստական պետության հարցը: Նա վերլուծեց Ենգելսի հայտնի ֆորմուլան պետության մահացման մասին, վորից վերջիվերջո հետևյալ յեզրակացությունը հանեց՝ սոցիալիստական պետությունը կպահպանվի նաև կոմունիզմի ժամանակ, մինչև վոր կապիտալիստական շրջապատումը լիկվիդացիայի չենթարկվի: Նա մատնանշեց մեր սոցիալիստական պետության դերն ու նշանակությունը թերագնահատելու

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 631:

2 Նույն տեղում, եջ 849—850:

վտանգը, ինչպես և բուրժուական պետությունների դերն ու նշանակությունը թերագնահատելը: Յեվ սրա կապակցությամբ նա մի ակտուալ խնդիր առաջադրեց—ուսումնասիրել բուրժուական յերկրների պետական ապարատը, նրա կառուցվածքն ու մեխանիզմը, և ամեն կերպ կատարելագործել սոցիալիստական պետության ապարատը, վորպեսզի եֆեկտիվ կերպով կարողանանք այն հակադրել կապիտալիստական շրջապատմանը:

«Մի՞թե զարմանալի չե,—հարցնում եր ընկեր Ստալինը,—վոր տրոցկիստների ու բուխարինականների վերնախավի լրտեսական ու դավադրական գործունեյության մասին մենք իմացանք միայն վերջին ժամանակներս, 1937—1938 թվականներին, թեև, ինչպես յերևում ե նյութերից, այդ պարոններն ոտարերկրյա հետախուզության լրտեսներ են յեղել և դավադրական գործունեյություն են վարել Հոկտեմբերյան հեղափոխության արդեն առաջին որերին: Ի՞նչպես կարող եյինք մենք աչքաթող անել այդ լուրջ գործը: Ինչո՞վ բացատրել այդ վրիպումը... Այդ վրիպումը բացատրվում ե մեզ շրջապատող բուրժուական պետությունների ու նրանց հետախուզական որգանների մեխանիզմի ուժի ու նշանակության թերագնահատությամբ, վորոնք աշխատում են ոգտագործել մարդկանց թուլությունները, նրանց սնափառությունը, նրանց անհաստատակամությունը, վորպեսզի նրանց խճճեն իրենց լրտեսական ցանցի մեջ և նրանցով շրջապատեն Խորհրդային պետության որգանները: Դա բացատրվում ե մեր սոցիալիստական պետության ու նրա հետախուզության մեխանիզմի դերի ու նշանակության թերագնահատությամբ, այդ հետախուզության թերագնահատությամբ, շաղակրատությամբ այն մասին, թե հետախուզությունը Խորհրդային պետության որով մանրունք ե ու դատարկ բան, թե խորհրդային հետախուզությունը, ինչպես և հենց Խորհրդային պետությունը, շուտով հարկ կլինի հանձնել հնությունների թանգարանը»[1]:

Ընկեր Ստալինը, վարպետորեն կիրառելով մարքսիզմ-լենինիզմի մեթոդը, խորապես թափանցել ե պետության

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, ռուս. 11-րդ հրատ., եջ 601:

նյության մեջ: Վերլուծելով սոցիալիստական պետության ֆունկցիաները տարբեր էտապներում, նա ցույց տվեց նրա բացառիկ կարևորությունը կոմունիզմ կառուցելու մեջ և Խորհուրդների Երկիրը թշնամական գործողություններից պաշտպանելու գործում:

Ընկեր Ստալինը սոցիալիստական պետության մեջ տեսնում է մի հզոր լծակ կոմունիզմի համար մղվող պայքարում, բայց այս լծակը կարելի յե օգտագործել հսկայական հմտություն ունենալով միայն: Եվ ընկեր Ստալինն իր գործունեությամբ ցույց է տալիս այս հմտության օրինակները: Նա այս հմտությունն անհողդողդ կերպով պատվաստում է խորհրդային մարդկանց:

* * *

Ընկեր Ստալինը յերջանիկ մարդ է: Նա կարող է պարծենալ: Նրա վաթսունամյակի մոտերքը նրա ղեկավարությամբ հսկայական մի յերկիր, յերկրագնդի մեկ վեցերորդ մասը, սոցիալիզմին հասավ:

Հսկայական են ընկեր Ստալինի ծառայություններն ամբողջ աշխարհի աշխատավորների առջև, Խորհրդային Միության ժողովուրդների առջև և առանձնապես ռուս ժողովրդի առջև: Նրա հասարակական-քաղաքական գործունեությունը պետք է ամենալայն մասսաների սեփականությունը դառնա, վորովհետև այն ծառայում է մարդու խորապես գաղափարական կյանքի օրինակ:

Ընկեր Ստալինի արտաքին, ամենքի համար տեսանելի պրակտիկ գործունեության փաստերի նույնիսկ հասարակ, ժամանակագրական շարադրումը խոսում է այն հսկայական աշխատանքի մասին, վոր նա կատարել է հեղափոխական շարժումը Ռուսաստանում, և նշանակում է նաև ամբողջ աշխարհում, զարգացնելու մեջ: Փաստերի շարադրման չոր ու ցամաքությունը չի կարող ծածկել ընկեր Ստալինի լարված զոհողությունը, նրա հերոսությունը, նպատակաձգտումը, հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների խոր ըմբռնումը:

Տասնյոթամյա պատանին իր կյանքին խնդիր դրեց

ազատագրել ճնշվածներին կապիտալիզմի շղթաներից, ճընշման բոլոր տեսակներից: Եվ այդ գաղափարին նա նվիրվեց առանց մնացորդի: Նրա ամբողջ հետագա կյանքը յենթարկված եր այս գաղափարին, և միմիայն նրան:

Փառասեր մարդիկ յերբեմն նվաստացնում են հասարակ աշխատանքը, ասելով, վոր նա, այդ հասարակ աշխատանքը, առանձնապես տեխնիկական աշխատանքը, խանգարում է նրանց, արգելակում է նրանց աճումը, նեղացնում նրանց հորիզոնը: Ընկեր Ստալինի հասարակական գործունեությունն իբրև վառ իլյուստրացիա յե ծառայում այն բանի, վոր գաղափարայնությունն ամենահասարակ աշխատանքը հսկայական քաղաքական գործի յե փոխարկում:

Թողնելով սեմինարիան, խզելով կապն ամբողջ լեգալ շրջապատի հետ, ընտանիքի հետ, գնալով ընդհատակ,— մի՞թե ընկեր Ստալինը հետամուտ եր լինում վորևէ անձնական նպատակի, մի՞թե նա ձգտում եր զբաղվել մի աշխատանքով, վորը նպաստում է սեփական հորիզոնի զարգացմանը միայն (այսպիսի «հեղափոխականներ» արագ հեռանում եյին ընդհատակից, այն նրանց չեր բավարարում իր «սև» աշխատանքով): Վո՛չ, ընկեր Ստալինի խնդիրն եր՝ առավելագույն օգուտ բերել հեղափոխական բանվորական շարժմանը:

Ամեն մի աշխատանք, վորն օգնում է այս շարժմանը, նրա համար արժեքավոր եր և դրանով իսկ նաև բարձր գաղափարական: Եվ այդ պատճառով մենք ընկեր Ստալինին տեսնում ենք հեղափոխական աշխատանքի բոլոր տեսակներում ու ձևերում: Ընկեր Ստալինն է ընդհատակյա խմբակների կազմակերպիչը, վորը բանվորների հեղափոխական յեռանդն արթնացնում է և ուղղում դեպի ընդհանուր հեղափոխական պայքարի հունը: Նա յե թռուցիկների հեղինակը, նա ինքն է դրանք տպագրում ու բաժանում: Նա յե ղեկավարում բանվորների գործադուլները, գնում դեմոնստրացիայի գլուխ անցած, յենթարկվելով վորպես ղեկավար ամենամեծ վտանգի: Նա յե գրում ղեկավար հոդվածներ, կոչ անելով հեղափոխական բանվորական կուսակցություն կառուցելու, հոդվածներ, վորոնք մերկացնում, խարազա-

նում են օպորտունիզմը նրա բոլոր տեսակներով ու արտահայտումներով:

Յեվ այսպես իր ամբողջ կյանքը, թափառելով բանտեր ու աքսորավայրեր, անցնելով կուսակցության կամքով քաղաքից քաղաք, այնտեղ, վորտեղ կուսակցությունը հատուկ կարիք եր զգում անձնվեր աշխատողների, ընկեր Ստալինը Լենինի հետ միասին ստեղծում, կառուցում ու աճեցնում եր մեր կուսակցությունը: Լենինի հետ միասին նա յեր ղեկավարում կուսակցությունը, հեղափոխական շարժումն ու զինված ապստամբությունը Հոկտեմբերյան որերին:

Ընկեր Ստալինն անհունորեն սիրում ե Լենինին: Այս սերն որգանական ե, վորը բխում ե նրանց նպատակների ու ձգտումների ընդհանրությունից: Լենինի հեղինակությունը նրա համար անառարկելի յե:

Յեթե դիմենք պատմական անալոգիաների, ապա ընկեր Ստալինի վերաբերմունքը Լենինի հանդեպ հիշեցնում ե Լենինի վերաբերմունքը Մարքսի հանդեպ, միայն այն ուղղումով, վոր ընկեր Ստալինն անմիջականորեն շատ տարիներ աշխատել ե Լենինի հետ: Սրանով յես ուզում եմ ասել, վոր նրա վերաբերմունքը Լենինի հանդեպ ավելի մոտ ե, ավելի ինտիմ ե:

Ընկեր Ստալինը հիանալի ուսումնասիրել ե Լենինին, նա կատարելապես գիտե վոչ միայն նրա բոլոր յերկերը, այլև նրանցից ամեն մեկի յերևան գալու պատճառները: Ապա կասկածի յենթակա չե, վոր ընկեր Ստալինը զգալի ազդեցություն ուներ Լենինի վրա:

Լենինի մահից հետո կուսակցության ու լենինիզմի թշնամիների դեմ մղած կատաղի պայքարում ընկեր Ստալինը պաշտպանեց կուսակցության ամբողջականությունը և նրա շարքերն ամուր ցեմենտեց մարքսիզմ-լենինիզմի գաղափարների վրա: Նա վեր բարձրացրեց Լենինի դրոշը, վորն իրավամբ անվանում են Լենինի—Ստալինի դրոշ, և այդ դրոշի տակ Խորհրդային ժողովուրդը կոմունիզմ ե կառուցում:

Ակամայից հիշում ես Գերցենի խոսքերը դեկտեմբերի

14-ի մարդկանց մասին, վոր դրանք հերոսների մի փաղանգա եյին, «ինչ-վոր դյուցազներ, վորոնք գլուխ դարբնած զուտ պողպատից, սխրակից-ռազմիկներ»[1]:

Այսպիսի մարդկանց թվին ե պատկանում ընկեր Ստալինը:

Բայց նա աճեց ու քաղաքականապես կոփվեց բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդի միջավայրում: Այս դասակարգի շահերն ու գաղափարները, այսինքն՝ գիտական սոցիալիզմի գաղափարներն ե նա պաշտպանում: Միջազգային պրոլետարիատի գործին ե նա միշտ նվիրել ու պատրաստ ե այսուհետև ևս նվիրելու իր բոլոր ուժերը, իր բոլոր ընդունակությունները և, յեթե հարկավոր լինի, իր ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ: Իսկ այս ամենը հնարավոր ե ու մատչելի միայն այն մարդու համար, վորը տիրում ե մարքսիզմ-լենինիզմի ամբողջ իմաստությանը:

Ընկեր Ստալինի թեորիական աշխատությունները հսկայական ավանդ են ներկայացնում՝ մարքսիզմ-լենինիզմի գանձարանի համար, վորոնց ուսումնասիրությունը լայն հեռանկարներ ե բաց անում: Բավական ե հիշեցնել ընկեր Ստալինի դասախոսությունները «Լենինիզմի հիմունքների մասին»: Հակիրճությամբ, պարզությամբ, ամբողջականությամբ և մարքսիզմ-լենինիզմի ըմբռնման խորությամբ սա միակ յերկն ե մարքսիստական-լենինյան գրականության մեջ: Զուր չե, վոր այն առձեռն գիրք ե հանդիսանում միլիոնների համար:

Մարքսիստական-լենինյան թեորիայի հսկայական առաջընթացը՝ այդ ընկեր Ստալինի ուսմունքն ե պրոլետարական դիկտատուրայի պետության, նրա դերի մասին, վոր՝ վորպես հզոր գործիք պրոլետարիատի ձեռքում՝ նա ունի կոմունիստական հասարակություն կառուցելու գործում:

Պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիստական հեղափոխության մարքսիստական-լենինյան թեորիայի շատ կարևոր մասն ե հանդիսանում ազգային հարցը: Ազգային հարցի նկատմամբ գոյություն ունեցող բոլշևիկյան դպրոցը ստեղծել են Լենինն ու Ստալինը Հոկտեմբերից շատ առաջ:

[1] Ցիտ. ըստ Լենինի Յերկ., հ. XV, եջ 464:

1913 թ. հունվարին ընկեր Ստալինը գրեց հռչակավոր «Մարքսիզմը և ազգային հարցը» բրոշյուրը, վորի մեջ կլասիկ կերպով հիմնավորեց ազգային հարցի բոլշևիկյան թեորիան և բոլշևիկյան լոզունգն ազգերի ինքնորոշման իրավունքի մասին: Այդ դրույթները մինչև օրս մեր կուսակցության ազգային քաղաքականության ղեկավար սկզբունքներ են հանդիսանում:

Նորերս ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ու ամենաանմիջական մասնակցությամբ ստեղծվեց «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»: Այս թեորիական աշխատության արժեքը մարքսիստական մտքի զարգացման համար ակներև է բոլորին, ովքեր ձգտում են ըմբռնել ու յուրացնել մարքսիզմ-լենինիզմը:

Ընկեր Ստալինը կատարելապես տիրապետում է մարքսիզմ-լենինիզմի մեթոդին, վորը (մարքսիզմ-լենինիզմը) նա պաշտպանեց ու հիմնավորեց բազմաթիվ թշնամիների դեմ մղած պայքարում, վորը նա կոնկրետացրեց ու է՛լ ավելի զարգացրեց կապիտալիստական շրջապատման մեջ ձեռնարկված սոցիալիզմի շինարարության հարստագույն փորձի վրա, կոմունիզմին անցնելու համար մղած պայքարում:

Քառասուն տարուց ավելի յէ, վոր ընկեր Ստալինն անընկճելի մարտիկ է հանդիսանում պրոլետարիատի գործի համար: Լենինի հետ միասին նա ճեղքեց կապիտալիստական ճակատը և ստեղծեց պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը: 1924 թվից նա կոմունիստական կուսակցության ու Խորհրդային ժողովրդի գլուխ է կանգնած: Նա աշխատավոր մարդկության միլիոնների հույսն է, փարոսը: Ժողովրդական հանդիսավոր «Լենին—Ստալին» բացականչության մեջ մենք նրանց մեծ մտքերի միասնությունն ենք լսում:

Մարդկությունն իր պատմության մեջ բավական քանակությամբ մեծ, հանճարեղ մարդիկ ունի: Բայց Լենինն ու Ստալինը միակն են իրենց տեսակի մեջ: Նրանք մեծ մարդիկ են վոչ միայն իրենք իրենց: Նրանք իրենց արմատներով գնում են մասսաների մեջ, նրանց հետ հարազատորեն կապված են աշխարհի աշխատավորների լավագույն

իդեալներն ու ձգտումները: Մասսաներն ուզում են, վոր նրանք մեծ լինեն, նրանց մեծության մեջ մասսաներն իրենց մեծությունն են տեսնում: Ահա թե ինչու ամբողջ Խորհրդային ժողովուրդը, կապիտալիստական յերկրների աշխատավոր մասսաները և ամբողջ պրոգրեսիվ մարդկությունը հպարտությամբ արտասանում են՝ «Մե՛ծ Լենին», «Մե՛ծ Ստալին», «Թող կեցցե՛ և յերկա՛ր տարիներ ապրի հարազատ և մեծ ընկեր Ստալինը»:

Թարգմ. Հ. Գրիգորյան
Խմբ. Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Մանուկյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Վ. 1092 հրատ. № 784
Պատվեր № 37, տիրաժ 7000
Թղթի չափսը $72 \times 105^{1}/_{32}$ (66.880 տպ. նիշ 1 տպ. մամուլում) $7^{1}/$ տպ. մամուլ $3\,^{3}/_{4}$ թերթ թուղթ։
Հանձնվել է արտադրության 1/I 1940 թ.
Ստորագրված է տպագրելու 25/II 1940 թ.
Գինը 1 ռ. կազմը՝ շքեղ 1ռ. 50 կ., հասարակ 1 ռ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

21538

ՀՀ Ազգային գրադարան
NL0179198